ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ, ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

СОЦИОЛОГИЯ, ЭКОНОМИКА

BULLETIN OF YEREVAN UNIVERSITY

SOCIOLOGY, ECONOMICS

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ **1 (22)**

ԵՐԵՎԱՆ - 2017

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՍՈՑԻՈԼՈԳԻԱ, ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛСАРАНИ. СОЦИОЛОГИЯ, ЭКОНОМИКА»
«BANBER YEREVANI HAMALSARANI. SOCIOLOGY, ECONOMICS»

Գլխավոր խմբագիր՝ **Միրզոյան Հ. Ղ.**

Խմբագրական խորհուրդ.

Աթանեսյան Ա. Վ., Առաքելյան Ա. Հ., Ասիկյան Ս. Ն., Ավետիսյան Լ. Վ. *(գլխ. խմբագրի տեղակալ),* **Գալստյան Գ. Ս., Գոնչար Ն. Ա.** *(գլխ. խմբագրի տեղակալ),* **Թիլման Ա.** (Գերմանիա), **Խաչատրյան Ա. Կ.** *(պատասխ. խմբագիր),* **Խաչատրյան Կ. Գ., Հովակիմյան Ա. Է.** *(պատասխ. քարտուղար),* **Մանասյան Հ. Գ., Մկրտիչյան Ա. Ե., Չորբաջյան Լ.** *(ԱՄՆ),* **Սահակյան Ա. Կ., Սիմոնյան Ա. Հ.**

Главный редактор: **Мирзоян Г. К.**

Редакционная коллегия:

Аветисян Л. В. *(зам. главного редактора),* **Аракелян А. Г., Асикян С. Н., Атанесян А. В., Галстян Г. С., Гончар Н. А.** *(зам. главного редактора),* **Манасян Э. Г., Мкртичян А. Е., Овакимян А. Э.** *(ответ. секретарь),* **Саакян А. К., Симонян А. Г., Тилман А.** *(Германия),* **Хачатрян А. К.** *(ответ. редактор),* **Хачатрян К. Г., Чорбаджян Л.** *(США)*

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**

Editorial Board:

Arakelyan A. H., Asikyan S. N., Atanesyan A. V., Avetisyan L. V. *(Deputy editor-in-chief)*, **Chorbajyan L.** (USA), **Galstyan G. S., Gonchar N. A.** *(Deputy editor-in-chief),* **Hovakimyan A. E.** *(Executive Secretary),* **Khachatryan A. K.** *(Managing Editor),* **Khachatryan K. G., Manasyan H. G., Mkrtichyan A. E., Sahakyan A. K., Simonyan A. H., Tilman A.** *(Germany)*

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ՄԻՐԱ ԱՆՏՈՆՅԱՆ

Խորհրդային որևէ երկրում, այդ թվում նաև Հայաստանում, մինչև անկախացումը սոցիալական աշխատանք մասնագիտության մասին խոսք լինել չէր կարող[1]: Ավելին, տարածված կարծիք կա, որ խորհրդային շրջանի հատկապես վերջին տասնամյակներում բնակչության ընդհանուր բարեկեցությունը պետական աջակցության մեծ ծավալների շնորհիվ այնպիսի մակարդակի էր, որ ընդհանրապես չեզոքացնում էր անհատականացված սոցիալական ծառայությունների, հետևաբար նաև սոցիալական աշխատանք մասնագիտություն ունենալու անհրաժեշտությունը: Ճշմարիտ է, որ ընտանիքներին ուղղված դրամական և ոչ դրամական սոցիալական աջակցության ծրագրերն իրապես նվազեցնում են բնակչության շրջանում հնարավոր սոցիալական ռիսկերը, և ըստ այդմ՝ ավելի քիչ թվով մարդիկ կարող են մասնագիտացված սոցիալական ծառայությունների կարիք ունենալ: Այնուամենայնիվ, հասարակության ընդհանուր բարեկեցությունը նվազեցնում, սակայն չի չեզոքացնում սոցիալական աշխատանք ունենալու անհրաժեշտությունը, պարզապես ամբոխավարության պայմաններում հասարակության առանձին անդամների անհատական յուրահատուկ խնդիրներն անտեսվել կամ ստորադասվել են մեծամասնության շահերին: Օրինակ, սովորական պրակտիկա էր ընտանեկան կամ անձնական բնույթի խնդիրները դարձնել տարաբնույթ հանձնաժողովների քննարկման առարկա՝ կոպիտ միջամտությունների միջոցով փորձելով «մայրուղի բերել փակուղիներում ու նրբանցքներում հայտնված մարդկանց»: Միևնույն ժամանակ, նման միջամտությամբ «չուղղվող» և հատկապես

[1] Խորհրդային և սոցիալիստական անցյալ ունեցող երկրների սոցիալական աշխատանքի պատմությունները բավականին տարբեր են. խորհրդայինի դեպքում խոսքը ավելի շատ սոցիալական աշխատանքի բացակայության մասին է, մինչդեռ ներկա Արևելյան Եվրոպայի՝ նախկին սոցիալիստական երկրներում, օրինակ՝ Բուլղարիա, Ռումինիա, Չեխիա, Սլովենիա, Խորվաթիա, Սերբիա և այլն, մինչ սոցիալիստական դառնալը սոցիալական աշխատանք մասնագիտությունը սոցիալիստական կարգերում մերժելու և վերացնելու մասին է:

«մյուսներից տարբերվող» մարդիկ, մասնավորապես հաշմանդամություն, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք պարզապես զտվել-առանձնացվել են տարաբնույթ սոցիալական հաստատություններում՝ ուղղիչ տներ, ծերանոցներ, հոգեբուժարաններ և այլն, իսկ ընտանեկան խնդիրների պատճառով տուժած երեխաներին՝ մանկատներում ու գիշերօթիկներում:

Սոցիալական աշխատանքի առանձին տեխնիկաների, այնուամենայնիվ, հանդիպում ենք նաև խորհրդային շրջանում: Այդպիսի օրինակներ են «սոցիալական տեսուչների»՝ օրինազանց և թափառաշրջիկ երեխաների հետ աշխատանքը՝ սկսած 1937 թ.-ից, խնամատար ընտանիքի տարբեր մոդելների գործարկումը (հատկապես Հայրենական մեծ պատերազմից հետո) և այլն, թեև այդ ամենը «սոցիալական աշխատանք» չի անվանվել: Այսպիսով, խորհրդային շրջանում սոցիալական աշխատանքի կարիքը կա՛մ անտեսվում էր, կա՛մ մասնագիտության առանձին մեթոդներ ու տեխնոլոգիաներ, անհրաժեշտությունից ելնելով, կիրառվում էին՝ առանց «սոցիալական աշխատանք» կոչվելու:

Սոցիալական աշխատանք մասնագիտությունը Հայաստանում ասպարեզ եկավ անկախացումից անմիջապես հետո՝ բեկումնային նշանակության իրադարձություններով լի պատմական ժամանակահատվածում՝ երկրաշարժ, պատերազմ, փախստականների աննախադեպ ներհոսք, անօթևան մնացած մարդկանց մեծ խումբ, հանկարծահաս աղքատություն, շրջափակում, համատարած գործազրկություն, սոցիալական նշանակության պետական ծրագրերի և փոխօգնության բնական մեխանիզմների ճգնաժամ և այլն: Սոցիալական ծանր հետևանքներով լի այս իրադարձությունները, գրեթե միաժամանակ հանդես գալով, պարզապես հումանիտար աղետ առաջացրին, որին միջազգային հանրությունը և հայկական Սփյուռքն արձագանքեցին սոցիալական օգնության բազմաբնույթ ծրագրերով: Դրանց մի մասը կարճաժամկետ օգնություն տրամադրելու նպատակ ուներ, մինչդեռ մյուսները, հումանիտար օգնություն տրամադրելուն զուգահեռ, մարդկանց օգնելու կայուն մեխանիզմների և տեխնոլոգիաների ներդրումներ կատարեցին՝ ստեղծելով առաջին սոցիալական ծառայությունների տիպանմուշները հատկապես երկրաշարժից տուժած բնակավայրերում, և ոչ միայն: Ի տարբերություն սոցիալական աշխատանքի շրջանցման խորհրդային շրջանի՝ այդ փուլում օգնության ծրագրերում կիրառված միջոցներն աստիճանաբար համարվեցին սոցիալական աշխատանքի սոցիալական տեխնոլոգիաներ ու մեթոդներ, իսկ գործունեությունը՝ սոցիալական աշխատանքի ծառայություններ: Մասնագիտության ճանաչմանը մեծապես նպաստեց նշված իրադարձությունների բուռն ծավալման փուլում սկզբնավորված՝ սոցիալական աշխատանքի մասնագետների կրթության գործընթացի կազմակերպումը: Այն իրականացվեց ինչպես կար-

ճաժամկետ ուսուցումների, այնպես էլ հիմնարար՝ բակալավրի, իսկ կարճ ժամանակ անց՝ 2000-ականներին, նաև մագիստրոսական ծրագրերի միջոցով:

Քառորդ դար անց մասնագիտությունը հայտնի է դարձել, իսկ սոցիալական աշխատանքի ծառայությունները՝ բավականին տարածված: Հետանկախության տարիների հախուռն գործընթացների փուլում ծնունդ առնելով՝ մասնագիտությունն աստիճանաբար հարմարվում-տեղավորվում է հայկական սոցիալական մշակույթի համատեքստում՝ հընթացս ենթարկվելով որոշակի սրբագրումների: Այն հետզհետե բյուրեղանում է որպես հայկական, այսպես կոչված՝ «տեղայնացված» սոցիալական աշխատանք: Այստեղից կարելի է հետևություն անել, որ արդեն հասունացել է սոցիալական աշխատանքի սեփական դպրոցի հիմնումը, որը ենթադրում է մասնագիտության գիտական հենքի բյուրեղացում՝ ընդունված տեսությունների և Հայաստանում սոցիալական աշխատանքի սեփական պրակտիկ գործունեության համակցման միջոցով: Սեփական դպրոցի ստեղծման մյուս բաղադրիչն այնպիսի գործիքակազմի ստեղծումն է, որը ներդաշնակ կլինի տեղի մշակույթին ու մտածելակերպին: Թեև փուլային նման զարգացումը թվում է հասունացած և տրամաբանական, այնուամենայնիվ մասնագիտության գիտական հենքի բյուրեղացումը բարդ խնդիր է: Պետք է խոստովանել, որ հայաստանյան սոցիալական աշխատանքն ամբողջությամբ ամերիկա-եվրոպական խառնածին է՝ տեսամեթոդաբանական փոխառություններով, որոնք առայժմ ընդունվում են անվերապահորեն՝ որպես դասական (ինչ-որ իմաստով՝ կատարյալ) սոցիալական աշխատանքի մոդելներ: Այդ գիտելիքն իր առաջավոր, նորարարական և «ոչ խորհրդային ծագման» շնորհիվ կատարել է մասնագիտության գաղափարը տարածելու առաքելությունը: Թե՛ մասնագետների կրթումը և թե՛ պրակտիկան այլ ճանապարհ չունեին, քան սնվել այդ խառնածին-փոխառյալ գիտելիքներից: Միևնույն ժամանակ, սոցիալական աշխատանքի ապագա մասնագետների կրթության կազմակերպման ոլորտում, օրինակ, բնական է, որ մասնագիտության տեսական հենքերի, անսովոր, նորարարական գաղափարների և մոտեցումների վերաբերյալ նշված բովանդակային փոխառություններն առաջացնում էին շփոթմունք և տարամեկնաբանումների տեղիք տալիս: Շփոթմունքը վերաբերում էր նաև իրենց՝ ուսուցանողներին, ովքեր դեռ չէին հասցրել սոցիալականացվել մասնագիտության համատեքստում: Ինչ վերաբերում է առաջին պրակտիկ աշխատողներին, ապա նրանց շփոթմունքն ավելի զգալի էր: Նրանք նպաստավոր պատեհությամբ հնարավորություն ունեին միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստան գործուղված մասնագետների ուղեկցությամբ սոցիալական աշխատանքի գործունեություն իրականացնել և, ըստ այդմ, «սովորել՝ անելով»: Մյուս կող-

մից՝ անմիջականորեն շփվելով օտարերկրացի մասնագետների հետ, որոնց համար սոցիալական աշխատանքի գիտելիքը և մոտեցումները հասկանալի էին և ապացուցված, տեղի մշակույթը կրող առաջին պրակտիկները լուրջ մարտահրավերի առաջ էին կանգնում՝ հայտնվելով սեփական և եվրոպացի կամ ամերիկացի ուսուցանող «մենթորի» մշակույթների խաչմերուկում: Այդ իրողությունը բացատրվում է նրանով, որ արևմտյան հասարակությանը բնորոշ տեսություններն ու մոդելները չէին տեղավորվում ավանդականից աստիճանաբար հեռացող և միևնույն ժամանակ խորհրդային շրջանի ազդեցությունները կրող հասարակության պատկերացումների մեջ, քանի որ «...հայ հասարակությունը ոչ միայն պատրաստ չէր դրան, այլև իր մշակույթում ձևավորված որոշ տարրեր ընդհանրապես հակադիր էին սոցիալական աշխատանքի նորմերին ու արժեքներին..»[2]:

Այնուամենայնիվ, պրակտիկներն աստիճանաբար գիտակցաբար, բայց ոչ ինքնաբերաբար, փոխառում էին անսովոր սկզբունքները՝ դիտարկելով դրանց արդարացիությունը մարդու իրավունքների համատեքստում: Ըստ էության, այս գործընթացը դեռ ավարտված չէ, ուստի՝ սոցիալական աշխատանքի զարգացման ներկա փուլում փոխառությունների ու սեփական պրակտիկ գործունեության տեսականացմանն առնչվող հարցերը միմյանց հակադրելը ցանկալի չէ: Անցումային ներկա փուլում սոցիալական աշխատողը մի կողմից ստիպված է «մտածել տեսականորեն» (քանի որ սոցիալական տեսությունները մասնագիտության գիտական հենքն են), մյուս կողմից տեսությունը կարող է ընդամենը ուղենիշ լինել նրա համար և ոչ ավելին: Իրականում սոցիալական աշխատողը, ի լրումն տեսական գիտելիքների, կարիք ունի «յուրահատուկ ճանաչողության», որը սոցիալական աշխատանքում անվանում են «ոչ ֆորմալ տեսություն» կամ «սոցիալական աշխատանքի իմաստնություն»: Այս ոչ ֆորմալ տեսությունը որոշ հեղինակներ մեկնաբանում են որպես «փորձառության իմաստնություն» կամ «փորձված ինտուիցիա»[3]: Այն օգնում է հասկանալու, թե ինչպես կարող է «… անհատների մտահոգությունների հանդեպ հասարակության անտարբերությունը առկա մտահոգությունները փոխակերպել հասարակական լուրջ հիմնախնդիրների»[4]: Ուստի դժվար չէ նկատել, որ սոցիալական աշխատողի՝ «իմաստնության հավակնող» նման բարձր զարգացած ինտուիցիան սնվում է ընդհանրականի և մասնավորի վերաբերյալ գիտելիքների արդյունավետ համակցումից: Այսպիսով, սեփական պրակ-

---

[2] **Ա. Խաչատրյան**, Սոցիալական աշխատանքը և հայ հասարակության սոցիալական մշակույթը, «Բանբեր Երևանի Համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 2016, № 1, էջ 14:

[3] **Doel, M., Shardlow, S**., Practice Learning and Teaching, Palgrave Macmillan, London, 1996, p. 10.

[4] **Yuill, C., Gibson, A**., Sociology for Social Work, SAGE, London, 2011, p. 16.

տիկ գործունեության տեսականացումը, ըստ էության, հնարավորություն է սոցիալական աշխատողի համար տեսածը, լսածը, շոշափածը «սոցիոլոգիական երևակայությամբ»[5] կամրջելու «տեսական մտածողության» հետ:

Փորձի վերացարկման կամ տեսական մտածողության հետ միահյուսված «փորձառության իմաստնության» հասնելու՝ վերը նշված հնարավորությունն իրացնելու համար Հայաստանի սոցիալական աշխատողներն այնքան էլ բարենպաստ վիճակում չեն մի քանի պատճառներով: Մասնավորապես, պետական սոցիալական ծառայություններում գործող մասնագետները չունեն սոցիալական աշխատանքի մասնագիտական կրթություն: Բացի այդ, նրանց գործունեությունը բացառապես վարչարարական է առկա սոցիալական քաղաքականության որդեգրած մնացորդային մոտեցումների պայմաններում[6] և ենթադրում է ծառայությունների բաշխում՝ առանց անհատականացված մոտեցումների: Ահա ինչու, ավելի քան երկու տասնամյակ մասնագիտական կրթությունը որպես սոցիալական ոլորտում աշխատելու նախապայման չի դիտվել: Չնայած դրան՝ կյանքի դժվարին, հաճախ ճգնաժամային իրավիճակներում հայտնված մարդկանց հետ առնչվելու իրենց երկարամյա աշխատանքի շնորհիվ նրանք ձեռք են բերել որոշակի պրակտիկ իմաստնություն, որի «պտուղները», սակայն, դեռևս պահանջարկված չեն: Այնուամենայնիվ, իրավիճակը խոստումնալից է՝ կապված սոցիալական ծառայությունների ինտեգրման՝ վերջին շրջանի բարեփոխումների հետ, ինչը տրամաբանական կերպով հանգեցնում է նաև սոցիալական ծառայությունների մասնագիտացմանը, մարդկանց անհատական առանձնահատկությունները հաշվի առնող մոտեցումների ամրագրմանը, հետևաբար նաև մասնագետների որակավորման հանդեպ պահանջների ձևավորմանը: Ոլորտում, սակայն, տեղատվություններով ու մակընթացություններով լի փուլ է սպասվում՝ կապված համակարգի իներցիոն ուժի, բարեփոխումները կյանքի կոչելու քաղաքական կամքի անորոշության ու ծառայություններում մարդկային ռեսուրսների հնարավոր կրճատումների և դրա հետևանքների հետ: Նշված իներցիոն բնույթի գործընթացների պատճառով չի բացառվում, որ պետական սոցիալական ծառայություններում աշխատող մասնագետների համար սոցիալական աշխատանքի բարձրագույն մասնագիտական կրթություն ունենալու պահանջն առաջադրելով հանդերձ՝ խուսափեն հստակ ժամկետային ամրագրումներից՝ անորոշության մեջ թողնելով դրա իրագործումը: Բանն այն է, որ սոցիա-

---

[5] **Wright Mills, C**., The Sociological Imagination, Oxford University Press, Oxford, 1959, p. 187.

[6] Գործող սոցիալական քաղաքականության նպատակը դեռևս մարդկանց սոցիալական հիմնախնդիրների լուծումը չէ. այն շարունակում է մնալ ամենախոցելիների կարիքների մեղմումը՝ առաջնահերթությունների առկա հիերարխիայի համատեքստում:

լական ծառայությունների մասնագիտացման և մասնագետների որակավորման պահանջների առաջադրումը դժվար է հավասարակշռել սոցիալական ոլորտի հախուռն զարգացումների նախորդ փուլերի ներկա հետևանքների հետ[7]: Այս անհստակությունն իր հերթին կենթադրի հայեցողական դիրքորոշում նաև ոչ պետական սոցիալական ծառայություններում մասնագետ սոցիալական աշխատողների ներգրավման հանդեպ, որտեղ այդ գործընթացն ուղղակիորեն կախված է (և կշարունակի այդպես լինել, քանի դեռ պետությունն այլ պահանջներ չի առաջադրել) ֆինանսավորողի ճաշակից, սոցիալական հիմնախնդիրների և դրանց լուծման վերաբերյալ նրա պատկերացումներից:

Այնուամենայնիվ, անկախ պահանջների ձևայնացումից՝ թե՛ պետական և թե՛ ոչ պետական սոցիալական ծառայություններում կարծես աստիճանաբար ամրագրվում է ընդհանրականի և մասնավորի վերաբերյալ գիտելիքների արդյունավետ համակցման պահանջը, ասել է թե՝ աստիճանաբար ձևավորվում է կրթություն ունեցող սոցիալական աշխատողների հանդեպ պահանջը: Ակնհայտ է, որ որակավորման երաշխավորում, իր հերթին, ենթադրում է սոցիալական, հատկապես սոցիոլոգիական տեսությունների նպատակային յուրացում և պրակտիկ գործունեության տեսականացում: Իրողությունն այն է, որ թե՛ մեկ և թե՛ մյուս գործընթացները հետ են ընկել պրակտիկ գործունեությունից: Զարգացած սոցիալական աշխատանքի երկարատև փորձ ունեցող երկրներում նմանատիպ իրավիճակ էր մասնագիտության ներդրման ու զարգացման սկզբնական փուլերում, մինչդեռ ժամանակի ընթացքում սոցիալական աշխատանքի արևմտյան դպրոցները հաջողությամբ և ստեղծագործաբար յուրացրել են սոցիոլոգիական տեսությունները և ստեղծել իրենց սեփականը: Տրամաբանությունն այն է, որ սոցիալական բնագավառում գիտնականի խնդիրը մարդկային շփումների փոփոխվող օրինաչափություններն ուսումնասիրելը և այս ու այլ կառուցվածքներն ու դրանց փոխակերպումների տրամաբանությունը հասարակության մյուս անդամների համար մեկնաբանելն է:

Թվում է՝ արդեն իսկ ասպարեզում բավականաչափ պրակտիկ տվյալներ և նյութեր կան հավաքված, որոնց օրինաչափությունների պարզումը դարձել է օրախնդիր: Ուստի գործող պրակտիկների համար (ովքեր աշխատում են սոցիալական ծառայություններում, սակայն մասնագիտությամբ սոցիալական աշխատող չեն) սոցիալական աշխատանքի ներկա պրակտիկայի, այսպես ասած՝ «փափուկ» տեսականացումը կարող է լինել այն ճանապարհը, որով հնարավոր կլինի

[7] Ըստ էության, սոցիալական ոլորտը չպաշտպանված եզակի ոլորտներից է՝ ի տարբերություն բժշկության, մանկավարժության, հոգեբանության և այլն: Սովորական պրակտիկա է, որ առանց տարբերակման ոլորտ կարող են ներգրավվել ցանկացած, այդ թվում՝ միջնակարգ կրթությամբ անձինք:

նրանց արդեն իսկ քաջածանոթ իրողությունները կապել տեսության հետ: Այլ խոսքով, տարիների պրակտիկ փորձ ունեցող, սակայն հիմնարար մասնագիտական կրթություն չունեցող սոցիալական ծառայությունների աշխատակիցներին իրական սոցիալական աշխատող դարձնելու ներկա փորձերը հաջողություն կարող են բերել, եթե պրակտիկներին հրամցվեն ոչ թե պատրաստի տեսություններ, այլ իրենց իսկ առօրյա գործունեությանն առնչվող օրինաչափություններ: Եթե նրանց կողմից իրականացվող միջամտությունների սոցիալական ազդեցությունը մեկնաբանվի առանձին անհատի, ընտանիքի և հասարակության շահերի համատեքստում, ապա ակնհայտ կդառնա այդ օրինաչափությունների և սոցիալական ազդեցությունների միջև կապը և տեսականորեն կիմաստավորվի նրանց առօրյա պրակտիկ գործունեությունը: Գործող պրակտիկայի նման տեսականացումը կարող է վերաբերել, օրինակ, այն օրինաչափությունները գտնելուն, որոնք հայաստանյան իրականության մեջ սոցիալական աշխատողի միջամտության շնորհիվ հանգեցնում են հաջող ելքերի, կամ հասկանալ, թե մասնագետների որ վարքաձևերն ու մոտեցումները կարող են դրական փոփոխություններ առաջացնել մարդկանց կյանքում: Այլ օրինակները կարող են վերաբերել ոլորտի հաջողված տիպանմուշների, սոցիալական ծառայությունների նպատակ-արդյունավետություն առնչությունների, հասարակությունում սոցիալական աշխատանքի դերի և այլ հարցերի քննարկումներին: Այլ խոսքով՝ պրակտիկ աշխատողին մասնագիտացնելու հնարավորությունը նրան հայտնի, **սովոր պրակտիկայի տեսականացումն է:**

Բուն պրակտիկների կողմից սեփական պրակտիկայի տեսականացումը, սակայն, բարդանում է մի շարք պատճառներով. այսպես, բացի օբյեկտիվ հանգամանքներից (հիմնարար կրթության բացակայությունը, տեսություններին չտիրապետելը և այլն), նշանակալից են դառնում մի շարք այլ հանգամանքներ, ինչպիսիք են մասնագետի՝ այսպես կոչված «մինչ սոցաշխատանքային» ծագումը, պրակտիկ ոլորտի բնույթը, ակադեմիական գործունեության անձնական մոտիվացիան, մասնագիտությանը նվիրվածության մակարդակն ու անգամ մասնագետի անձը: Առկա է նաև մեկ այլ օբյեկտիվ դժվարություն. «Գիտական արտադրանքին ներկայացվող ակադեմիական պահանջների խստությունը պրակտիկների մեծ մասին ետ է պահում իր աշխատանքի արդյունքները գիտական ձևաչափով մասնագիտական հանրույթին ներկայացնելու գայթակղությունից»[8]:

Ինչ վերաբերում է ապագա մասնագետներ կրթելուն, ապա նպատակահարմար է այն կազմակերպել դասական համարվող մոտեց-

[8] **Ա. Խաչատրյան**, Սոցիալական աշխատանքի տեսությունը, կրթությունն ու պրակտիկան արդի բարեփոխումների համատեքստում, «Գիտագործնական համաժողովի նյութերի ժողովածու», Եր., 2013, էջ 81-82:

մամբ՝ տեսությունից աստիճանաբար անցում կատարել տեսականացված հայկական պրակտիկային, այնուհետև զինել նրանց փորձված և իրենց արդեն իսկ արդարացրած գործիքակազմով աշխատելու հմտություններով: Առայժմ, սակայն, այս մոտեցումը լիարժեքորեն հնարավոր չէ կիրառել: Բանն այն է, որ ակադեմիական շրջանակներում անցած քսան տարիներին ջանքերն ուղղված են եղել եվրոպական ու ամերիկյան այսպես կոչված սոցիալական աշխատանքի «կայացած դպրոցներ» ունեցող երկրներում ընդունված մոտեցումները տեղի հայկական համատեքստի մեջ «տեղավորելուն»: Այդ նպատակով սոցիալական աշխատանքի առաջին ուսուցիչները փորձել են գտնել որոշակի կապեր սոցիալական աշխատանքի դասական մոտեցումների և հայկական սոցիալական իրականության միջև: Մոտ 20 տարվա զարգացումներից հետո ներկա փուլում նրանք կարծես ետ են քաշվել անքննադատ տեղավորման այդ մոտեցումներից և ավելի շատ կենտրոնացած են դասական համարվող սոցիալական աշխատանքի մոտեցումների հետ հայկական իրողությունների ընդհանրությունների ու տարբերությունների վերհանման վրա՝ հետազոտելով սոցիալական աշխատողների պրակտիկ գործունեությունը Հայաստանում: Դրանք խորությամբ ուսումնասիրելու համար նրանք ներկայումս կամավոր ստանձնում են նաև պրակտիկի դերը կամ փորձագիտական աջակցություն ցուցաբերում սոցիալական ոլորտի բարեփոխումների գործընթացներում՝ չկտրվելու համար ոլորտի իրողություններից: Սակայն միաժամանակ և՛ կրթողի (հետազոտողի), և՛ պրակտիկի՝ նման երկակի դերը շատ բարդ է իրագործել: Այսպես, իրագործելով պրակտիկի գործառույթը՝ նրանք այդպիսով ներգրավված են գրեթե ամենօրյա գործողություններում և սոցիալական ծառայություններ ստացողի հետ բախվում են որպես «օբյեկտի»՝ միևնույն ժամանակ լինելով ծառայություն մատուցող «սուբյեկտ»: Հետազոտողների՝ խնդիրների ու դրանց լուծումների մեջ համաժամանակյա ներկայությունը ստեղծում է «ներգրավվածության կապանքներ»: Այն մի կողմից իրականության զգացողությունը դարձնում է կենդանի ու շոշափելի, մյուս կողմից դժվարացնում է առօրյայից, խնդիրների ծանրության կենտրոնից հեռու վերացարկվելու հնարավորությունը (ինչը, մեր կարծիքով, սոցիալական աշխատանքի գիտության զարգացման նախապայման է):

Հետևաբար, ստացվում է այնպես, որ հայաստանյան սոցիալական աշխատանքի զարգացման վաղ փուլերում հայկական պրակտիկայի հետ դասական մոտեցումների համեմատությունը գրեթե անհնար էր, քանի որ «սեփական փորձը» չկար, մինչդեռ ներկա փուլում առկա հարուստ պրակտիկան հետազոտողների կողմից բավարար չափով վերլուծության չի ենթարկվում՝ անմիջական «ներգրավվածության կապանքների» պատճառով: Այնուամենայնիվ, անկախ նշված օբյեկտիվ

իրողություններից՝ հայաստանյան սոցիալական աշխատանքով հետաքրքրված հետազոտողները, միմյանց գաղտնի խոստովանելուց զատ, հավանաբար կարիք ունեն բացահայտ խոսելու այն մասին, որ ներկա բարդ գործընթացների մեկնաբանումը ենթադրում է նաև պրակտիկայում ներգրավված մասնագետների տեսակետներ հաշվի առնելը: Այդ տեսակետների վերլուծությունը և ըստ այդմ՝ տեսականացումը թույլ կտա բացատրել համընդհանուր օրինաչափություններում «չտեղավորված», չհասկացված մարդկանց հիմնախնդիրները[9]: Մասնավորապես, նման վերլուծությունների կարիք ունեն հանրությանը հուզող այնպիսի սոցիալական հիմնախնդիրներ, ինչպիսիք են աղքատության մշակույթը, պետական նպաստներից կախվածությունը, աջակցող ծրագրերի տնտեսական, բայց որ առավել կարևոր է՝ «սոցիալական գինը» և այլն: Նման վերլուծությունները թույլ կտան ձևակերպել շրջապտույտի մեջ հայտնված նշված հիմնախնդիրների մեկնաբանման՝ սոցիալական աշխատանքին յուրահատուկ տեսական հենքերն ու հաղթահարման սեփական մեխանիզմները:

Այսպիսով, Հայաստանում սոցիալական աշխատանքի սեփական դպրոցի ստեղծման համար կան մի շարք նախադրյալներ: Նախ ակնհայտ է, որ թե՛ պետական և թե՛ ոչ պետական սոցիալական ծառայություններում նշանակալի և յուրահատուկ փորձ կա կուտակված, ինչը կարոտ է վերլուծության՝ դասական սոցիալական աշխատանքի ավելի քան երկուհարյուրամյա պատմությունը համալրելու սեփական, միայն իրեն հատուկ ճանապարհ անցած հայաստանյան սոցիալական աշխատանքի ասելիքով: Բացի այդ, ասպարեզում առկա սոցիալական քաղաքականության, առանձին սոցիալական հիմնախնդիրների վերաբերյալ միջազգային ու տեղական կազմակերպությունների ջանքերով իրականացված հետազոտություններն իրենց հերթին հարուստ նյութ են տրամադրում իրականության սոցիալական կառուցակցման, հետևաբար նաև սեփական դպրոցի զարգացման համար: Ուստի, սեփական դպրոցի ստեղծման հաջորդ նախադրյալը կարող ենք համարել արդիականությունը պահպանող այդ ուսումնասիրությունների առկայությունը:

Մեր կարծիքով, սոցիալական աշխատանքի գիտելիքի փոխառությունների ինքնաբուխ, որոշ իմաստով նաև անխուսափելի նախորդ փուլը պետք է համարել ավարտված: Գիտելիքների անքննադատ ներմուծման անհրաժեշտությունն այլևս, մեղմ ասած, հիմնավորված չէ և մասնագիտության հետագա զարգացման համար յուրահատուկ ծուղակ է, անգամ ինչ-որ առումով՝ փակուղի: Պետք է նկատել, որ ակադեմիական շրջանակներում արդեն սկսված են տեղի իրողությունների

[9] Օրինակ՝ հանկարծահաս աղքատության ձգձգված պատկերով պայմանավորված՝ բնակչության մի զգալի մասի մեջ տիրող ներկա համընդհանուր հուսալքությունը և այն հաղթահարելու հնարավորությունները:

մշակութային մեկնաբանությունների գիտականացմանն ուղղված խմորումները՝ հիմնված սեփական «պրակտիկայի տեսականացման» ու այդ պրակտիկ գործունեության վերացարկված իմաստավորման վրա: Պրակտիկ գործունեությունը տեսականացնելու փորձերի մեջ անխուսափելիորեն իրենց տեղն ունեն սոցիալական աշխատանքի՝ տարաբնույթ խնդիրների վերաբերյալ ուսումնական գործընթացների շրջանակներում իրականացվող հետազոտությունները: Սովորաբար դրանք կանխատեսող, զուտ տեսական բնույթի են, սակայն քիչ չեն դեպքերը, երբ վերաբերում են նաև առկա պրակտիկ փորձի տեսական ընդհանրացմանը: Առայժմ դրանք հիշեցնում են մտքին հանկարծակի եկած փայլատակումներ: Ավելի համարձակ, անկաշկանդ նախաձեռնությունները, հավանաբար, ինչ-որ իմաստով հասունացման փուլեր կանցնեն՝ հակադրվելու «սոցաշխատանքային» մասնագիտական հանրույթի կողմից գիտելիքի ուղղակի փոխառությունների դեռևս շարունակվող իներցիային:

Հայկական դպրոցի ստեղծման հաջորդ նախադրյալը գործող սոցիալական ծառայություններում փորձի ընդհանրացումն է, որը առաջին հերթին պահանջարկված է հենց իրենց՝ պրակտիկների կողմից: Նրանք, աշխատելով վարչարարական բնույթի սոցիալական ծառայություններում, «շնչահեղձ» են լինում մարդկանց իրական կարիքների ու պետության կողմից սահմանված աջակցության ձևերի միջև աճող անհամապատասխանությամբ պայմանավորված ճգնաժամի պատճառով: Սոցիալական ծառայությունները, ներկայումս զարգացման հետաքրքրական փուլերով անցնելով, հավակնում են վերածվելու սոցիալական աշխատանքի ծառայությունների՝ ներմուծելով սոցիալական դեպքի վարման մեթոդաբանությունը: Թե՛ նախորդ՝ վարչարարական աշխատանքի փորձը և թե՛ ներկա՝ անցման շրջանի գործընթացները և ծառայություններ մատուցողների ու ստացողների կյանքի որակի վրա դրանց հնարավոր ազդեցությունը ուսումնասիրությունների և վերլուծությունների կարոտ են: Դրանք կհարստացնեն սոցիալական իրողությունների վերաբերյալ գիտելիքների պաշարը՝ այդպիսով օգտակար լինելով պրակտիկներին՝ հաղթահարելու սեփական ճգնաժամը:

Սեփական դպրոցի ստեղծման մեկ այլ նախադրյալ է սոցիալական աշխատանքի հանդեպ օրեցօր ավելացող գիտակցված պահանջարկը հասարակության և պետության կողմից, ինչպես նաև այն իրողությունը, որ սկիզբ առնելով ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնում՝ մասնագիտությունն արդեն դասավանդվում է 6 բուհերում: Մեկ այլ նպաստող հանգամանք է նաև ՀՀ-ում սոցիալական աշխատողների մասնագիտական ասոցիացիայի գործունեության աստիճանական ծավալումը: «Սոցիալական աշխատանքի գիտության զարգացման գործում կարևոր դերակատարում կարող է ունենալ մասնագիտական ընկերությունը, որն

ուղղակի պատասխանատվություն է կրում մասնագիտության զարգացման համար»[10]: Ասոցիացիայի դերը, այսպիսով, ինստիտուցիոնալ և գերատեսչական շահերի հավասարակշռումն է մասնագետների ու հատկապես ծառայություններից օգտվողների իրավունքների իրացման երաշխավորման համատեքստում՝ պաշտպանելով մասնագիտության իմիջն ու կարգավիճակի ամրապնդումը:

Սեփական դպրոցի ստեղծմանը կարող է աջակցել սոցիալական աշխատանքի զարգացած դպրոց ունեցող երկրների՝ ազգությամբ հայ սոցիալական աշխատող մասնագետների հետ համագործակցությունը՝ որպես մշակութային փոխըմբռնման ավելի մեծ ներուժ ունեցող սոցիալական կապիտալի՝ դեռևս լիարժեք ձևով չիրացված հնարավորություն: Թվում է՝ հասունացել է արտերկրի առաջատար համալսարանների՝ ազգությամբ հայ դասավանդողներին գործընթացում ներգրավելու պահը՝ օգտվելով սոցիալական աշխատանքի կրթության բաղադրիչի ներդրման փուլում նրանց ունեցած անգնահատելի դերի դրական փորձից: Հայաստանում գործող սփյուռքահայ բարեգործական կառույցների՝ այս ոլորտում ունեցած փորձի վերաիմաստավորումը նույնպես կարևոր լրացում կարող է դառնալ սեփական դպրոցի գիտելիքների պաշարին:

Այսպիսով, ակնհայտ է, որ սոցիալական աշխատանքի սեփական դպրոցի ստեղծման համար երկրում առկա են մի շարք նպաստավոր նախադրյալներ: Այնուամենայնիվ, ինքնին վերցրած, նախադրյալների կամ նպաստող հանգամանքների գոյությունն անհրաժեշտ, սակայն դեռևս բավարար պայման չէ սեփական դպրոց ստեղծելու համար: Հայկական դպրոցի հետագա զարգացումը, մեր համոզմամբ, պետք է ենթադրի ջանքերի գործադրում երկու հիմնական ուղղություններով. հրաժարվել արևմտյան տեսությունների անվերապահ և անքննադատ փոխառություններից և սեփական խնդիրները մշակելու ու հաղթահարելու համար անցնել սոցիալական աշխատանքի՝ գոյություն ունեցող «հայկական պրակտիկայի» տեսականացմանը:

Սեփական դպրոցի ստեղծումը և զարգացումը ենթադրում է համաձայնությունների ձեռք բերում և ինքնակազմակերպվածություն այնպիսի հարցերում, ինչպիսիք են սոցիալական աշխատանքի հիմնական ու լրացուցիչ կրթության կազմակերպումը, ոլորտի սոցիալական ծառայությունների մասնագիտացումը, դրանց ստանդարտացումը, գործող մասնագետներին առաջադրվող պահանջների պաշտոնական ձևակերպումը և այլն: Մասնագիտական կրթության կազմակերպման և պրակտիկ գործունեության ինքնաբուխ, միմյանց հետ գրեթե

[10] **Ա. Խաչատրյան**, Սոցիալական աշխատանքի տեսությունը, կրթությունն ու պրակտիկան արդի բարեփոխումների համատեքստում, էջ 83:

չխաչվող զարգացումների նախորդ փուլին հաջորդած այս փուլը ենթադրում է ավելի կանոնակարգված զարգացումներ: Մասնագիտական հանրույթի նման ինքնակազմակերպումը թույլ կտա «սոցիալական աշխատանքի մտածողությամբ» և մոտեցումներով օգնել անցումային հասարակությանը՝ նոր, մարդու իրավունքի դեռևս անսովոր համատեքստում ընկալելու սոցիալական հիմնախնդիրներն ու դրանց հնարավոր լուծումները՝ հիմքում ունենալով սեփական պրակտիկայի վերլուծության և տեսականացման վրա խարսխված գիտական դրույթները:

Բանալի բառեր – *սոցիալական աշխատանք, գիտելիքի համակցում, սոցիալական աշխատանքի դպրոց, փորձառության իմաստնություն, պրակտիկայի տեսականացում*

МИРА АНТОНЯН – *Проблема становления собственной школы социальной работы в Армении.* – В статье на основе социологических знаний и практики обозревается состояние армянской школы социальной работы. Затрагивается также вопрос о неактуальности дискутировавшейся когда-то темы, требует ли социальная работа опоры на науку. Теоретическое обоснование практического опыта, проведение ряда исследований и деятельность ассоциации социальных работников – всё это свидетельствует о появлении в стране собственной школы социальной работы.

Ключевые слова: *социальная работа, школа социальной работы, “практическая мудрость”, теоретическое обоснование практики*

Ключевые слова: *социальная работа, сочетание знания, школа социальной работы, “практическая мудрость”, теоризация практики*

MIRA ANTONYAN – *The Issue of Establishment of the Armenian School of Social Work.* – This article addresses the issues of establishment of Armenia’s own school of social work based on interconnected knowledge with sociology, and practical knowledge. The article also concentrates on the need to complete the discourse about social work scientification. Theorizing practitioner’s expertise, conducting research, and activating professional association of social workers are the essential preconditions of establishing social work’s own school.

Key words: *social work, combination of knowledge, social work school, practice wisdom, theorization of practice*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը և սոցիալական աշխատանք մասնագիտությունը համարյա տարեկիցներ են: Հայաստանում խորհրդային կարգերի փլուզումից հետո բնակչության սոցիալական պաշտպանության նախորդ համակարգի փլատակների վրա սկսեց կառուցվել նորը՝ հընթացս փորձելով արձագանքել սոցիալական այն խնդիրներին, որոնք ծագում էին նորանկախ հանրապետության բնակչության կյանքում: Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի նպատակն է պաշտպանել բնակչությանը սոցիալական ռիսկերից, որոնք կարող են առաջանալ մարդկանց կյանքի տարբեր փուլերում և կենսական տարբեր իրավիճակներում: Հաճախ որպես սոցիալական պաշտպանության նպատակ դիտվում է աղքատությունից ու գործազրությունից նրանց պաշտպանությունը[1], սակայն իրականում այն ավելի լուրջ խնդիրների լուծման է հավակնում: Շատ ավելի արդարացված է այն մոտեցումը, որ սոցիալական պաշտպանությունը միջոցառումների ամբողջություն է, որոնք ուղղված են «…սոցիալական ռիսկերի կանխարգելմանը, ինչպես նաև դրանց հետևանքների մեղմացման, վերացման միջոցով բնակչության սոցիալական անվտանգության ապահովմանը»[2]: Յուրաքանչյուր հասարակության մեջ կան սոցիալապես խոցելի խմբեր, որոնք պաշտպանության կարիք ունեն՝ երեխաներ, տարեցներ, հաշմանդամներ, փախստականներ, գործազուրկներ և այլն: Խոցելիությունը մի վիճակ է, երբ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ մարդկանց կենսական պահանջմունքների բավարարումը դժվարանում է կամ դառնում է անհնարին: Հասարակությունը չի կարող անտարբեր լինել նման մարդկանց դժվարությունների հանդեպ և նրանց թողնել բախտի քմահաճույքին: Նույնիսկ կենդանիների մոտ նկատվում է նմանին պաշտպանելու երևույթը: Օրինակ, կենդանիների շատ

[1] Տե՛ս **J. Blaw, M.Abramovitz**, The Dynamics of Social Welfare Policy, OXFORD University Press, էջ 21:

[2] **Մ. Յարմալոյան**, «Սոցիալական պաշտպանություն» եզրույթի բովանդակությունը. Կատեգորիալ վերլուծություն // «Բանբեր Երևանի Համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 2016, թիվ 2, էջ 26:

տեսակներ հոգ են տանում իրենց ժառանգների մասին բավականին երկար ժամանակ, մինչև նրանք որոշ չափով պատրաստ լինեն ինքնուրույն կյանքի: Շատ կենդանիների խմբային կյանքը նույնպես ցուցադրում է պաշտպանության որոշակի դրսևորումներ: Սոցիալական պաշտպանության այդ բնական համակարգն առկա է նաև մարդկային խմբերում: Յուրաքանչյուր անհատ իր ռեսուրսները ծառայեցնում է իր նմանների միջավայրում իր կենսունակությունը մեծացնելու և գոյատևելու խնդրի լուծմանը: Հասարակության զարգացմանը զուգընթաց՝ անհատի մարդկային կապիտալը հարստանում է՝ մեծացնելով նրա պաշտպանական հնարավորությունները: Դրան ծառայում են նրա կրթությունը, մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, սոցիալականացման բոլոր արդյունքները: Այդ ընթացքում զարգանում է նաև նրա սոցիալական կապիտալը՝ ընտանիք, տոհմ, ընկերներ, հարևաններ և այլն: Մարդու մարդկային և սոցիալական կապիտալների միջոցով ձևավորվում է նրա սոցիալական պաշտպանության բնական համակարգը, որն առաջինն է արձագանքում մարդուն սպառնացող սոցիալական ռիսկերին: Հասարակության զարգացման հետագա ընթացքը հանգեցնում է սոցիալական պաշտպանության բնական համակարգի դերի ու նշանակության թուլացմանը և ձևական համակարգի դերի մեծացմանը: Նման փոփոխությունը տեղի է ունենում համայնքային տիպի հասարակություններից արդիականին անցնելու համատեքստում (Ֆ. Թյոնիսի տեսություն)[3]: Սոցիալական պաշտպանության ձևական համակարգը սովորաբար որոշակի գործառույթներով միմյանց հետ կապված կազմակերպությունների համակարգված ամբողջություն է: Նրա տարրերը և գործառույթները պայմանավորված են պետության և նրա սոցիալական գործընկերների վարած սոցիալական քաղաքականությամբ: Վերջինի բովանդակությունը կազմում են սոցիալական ուղղվածության օրենքները, նորմատիվ ակտերը, սոցիալական ծրագրերը, որոնք պաշտպանության որոշակի երաշխիքներ են ստեղծում մարդկանց համար, եթե նրանց կյանքում առաջանում են սոցիալական ռիսկեր կամ այդ ռիսկերը իրականություն են դառնում: Առանձնացվում են սոցիալական պաշտպանության համակարգի կանխարգելիչ, պաշտպանող, զարգացնող և փոխակերպող գործառույթները[4]: Ամենաարդյունավետ պաշտպանությունը սոցիալական ռիսկերի կանխարգելումն է: Համեմատաբար զարգացած հասարակությունները գերադասում են միջոցներ չխնայել կանխարգելիչ միջամտության ժամանակ, քան թե հետո բազմապատիկ ավելին ծախսել հետևանքների

[3] Տե՛ս «The Blackwell Encyclopedia of Sociology», Blackwell Publishing, h. 10, էջ 5014-5015, «История теоретической социологии», M., 1997, h. 1, էջ 340-350:

[4] Տե՛ս **Devereux, S**. & **Sabates-Wheeler, R**. (2007). Editorial introduction: Debating social protection. *IDS Bulletin*, *38*(3), էջ 1-7, **A. Dobelsstein**, Social Welfare. Policy and Analysis, Thomson Pub., էջ 122:

հաղթահարման ուղղությամբ: Որոշ սոցիալական ռիսկեր հատուկ են հասարակության բոլոր անդամներին, հետևաբար արդարացված է սոցիալական քաղաքականության մակարդակում կանխարգելիչ միջոցառումների նախատեսումը բոլորի համար: Մանկությունը և ծերությունը այդպիսի վիճակներ են, և կենսաթոշակների ու տարաբնույթ նպաստների նշանակումը, զանազան սոցիալական արտոնությունների տրամադրումը երեխաներին և տարեցներին կանխարգելիչ նպատակ են հետապնդում: Հաշմանդամների ու գործազուրկների, բռնության զոհերի ու իրավախախտների համար նախատեսված պաշտպանական միջոցառումները նպատակ ունեն փոխել համապատասխան մարդկանց կյանքը, ուժեղացնել նրանց, զարգացնել նրանց կարողությունները, ներառել հասարակություն: Եթե անգամ մի կողմ թողնենք մարդասիրության ու գթասրտության մասին ավանդական պատկերացումները, հենց իրենց՝ հասարակությունների սոցիալական անվտանգությունն է ստիպում հոգ տանել նշված խմբերի մասին, որովհետև հակառակ դեպքում սոցիալական միջավայրը խիստ ռիսկային կդառնա բոլորի համար: Ահա թե ինչու յուրաքանչյուր հասարակություն և պետություն ստեղծում են բնակչության սոցիալական պաշտպանության իրենց համակարգը: Կանխարգելումից զատ, այդ համակարգը հոգ է տանում արդեն կենսական դժվարություններ ապրող մարդկանց մասին՝ նրանց համար նախատեսելով բուժման, խնամքի, կրթության և նյութական փոխհատուցման տեսքով ծառայություններ, որոնք ենթադրաբար պետք է բարելավեն նրանց կյանքը, բարձրացնեն կենսամակարդակը, անկախ դարձնեն շրջապատից և այլն:

Հասարակական առաջադիմության շնորհիվ պետությունն աստիճանաբար ստանձնում է քաղաքացիների սոցիալական պաշտպանության գործառույթը և կառուցում է սոցիալական պաշտպանության ձևական համակարգը, որի առջև դրվող խնդիրներն անընդհատ բարդանում են: Այդ համակարգի զարգացմանը զուգահեռ՝ պաշտպանության բնական համակարգի դերն ու նշանակությունը նվազում են, իսկ ձևական համակարգը հզորանում է. նրանում առաջանում են նորանոր ենթահամակարգեր, պաշտպանության գործը դառնում է մասնագիտացված ծառայություն և այլն: Ցանկացած հասարակության էվոլյուցիոն շղթայում կարող ենք նկատել նման գործընթաց: Անկախացումից հետո Հայաստանի Հանրապետությունում բնակչության սոցիալական պաշտպանության նոր համակարգի տարրերից էին սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունները, որոնք սկսեցին իրականացնել «Փարոս» ծրագիրն՝ ուղղված աղքատության կրճատմանը: Դրանից շատ չանցած ստեղծվեցին զբաղվածության տարածքային գործակալությունները, որոնց նպատակը գործազուրկ և աշխատանք որոնող մարդկանց սոցիալական աջակցությունն էր: Հետագա բարեփոխումները բարելավեցին ոչ միայն նշված ծառայությունների գործա-

ռումը, այլև սոցիալական պաշտպանության համակարգում հայտնվեցին նոր կառույցներ, ինչպես օրինակ՝ համայնքային կենտրոններ, երեխաների խնամքի հաստատություններ, համայնքային, մարզային և հանրապետական այլ կառույցներ: Պետական և ոչ պետական, տեղական և միջազգային բազմաթիվ կազմակերպություններ ստանձնեցին բնակչության սոցիալական պաշտպանության գործառույթներ՝ դառնալով սոցիալական պաշտպանության համակարգի տարրեր: Պետությունը սկսեց լայնորեն համագործակցել հասարակական և մասնավոր սեկտորների հետ՝ դարձնելով նրանց իր սոցիալական գործընկերները: Պետական կառույցներում սոցիալական ծառայությունները մատուցվում էին տարբեր կրթություն ու մասնագիտություն ունեցող մարդկանց կողմից: Նրանց համար ընդհանուրը սոցիալական ծառայողի կարգավիճակն էր: Խորհրդային Հայաստանում սոցիալական ծառայության մատուցումը չէր համարվում մասնագիտական գործունեություն, և որպես սոցիալական ծառայողներ ներառվում էին ցանկացած կրթությամբ ու մասնագիտությամբ մարդիկ: Նորանկախ Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորումը համընկավ հանրապետությունում սոցիալական աշխատանք մասնագիտության ներդրման առաջին փորձերին, որոնց ընթացքում մասնագիտական պատկերացումները սոցիալական ծառայությունների և դրանց մատուցման ընթացակարգերի մասին սկսեցին ներթափանցել համակարգ՝ պարտադրվելով սոցիալական ծառայողներին: Հասարակական և մասնավոր հատվածները մասնակցելով բնակչության սոցիալական պաշտպանության գործընթացին, հենց սկզբից սկսեցին օգտվել սոցիալական աշխատողների ծառայություններից, քանի որ պետական կառույցների համեմատ նրանք շատ ավելի ճկուն էին և բաց սոցիալական նորամուծությունների հանդեպ: Պետական հատվածում 1996 թվականից ձեռնարկվեցին սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների աշխատակիցների՝ որպես սոցիալական աշխատողների, առաջին վերապատրաստումները: Դրանով դրվեց բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում սոցիալական աշխատանքի ներդրման սկիզբը: Մասնագիտությունը սկսեց լայնությամբ և խորությամբ ներթափանցել սոցիալական պաշտպանության համակարգ: Դա բարդ ու դժվար գործընթաց է, որի սկիզբը եթե վաղուց է դրվել, ապա վերջն այսօր էլ չի նշմարվում: Նախ հարկավոր է, որ սոցիալական պաշտպանության նոր համակարգը ձևավորվեր ու կայանար, հետո էլ սոցիալական աշխատանքը որպես մասնագիտություն կայանար ու դառնար պաշտպանության համակարգի տարր՝ իր գործառույթները տանելով իր հետ: Համակարգաստեղծ այդ բարդ գործընթացը մեծ դժվարությամբ էր առաջ գնում, քանի որ համակարգի ճարտարապետները չգիտեին սոցիալական աշխատանքի մասին, և դրա ներդրման ուղղությամբ անգամ ամենափոքր քայլն անելուց

առաջ հարկավոր էր երկար համոզել նրանց: Դժվարությամբ ու դանդաղորեն սոցիալական աշխատանքը սկսեց իր տեղը նվաճել համակարգում՝ հավակնելով դառնալու նրա հիմնական շարժիչ ուժը: Սոցիալական աշխատանքի մուտքը սոցիալական պաշտպանության համակարգ խոստանում էր այն դարձնել իսկապես պաշտպանող: Մինչ այդ համակարգը, կոչված լինելով սոցիալական պաշտպանության, իրականում պարզապես ցուցաբերում էր սոցիալական աջակցություն սոցիալական հիմնախնդիրներ ունեցողներին՝ բաշխելով նրանց միջև օրենքով կամ կարգով նախատեսված բարիքները դրամի, սննդի կամ հագուստի տեսքով, խնամազուրկ մարդկանց տեղավորելով համապատասխան հաստատություններում և այլն: Կյանքի դժվարին իրավիճակներում հայտնվող մարդիկ դիմում էին համակարգի պաշտպանությանը՝ նախապես որոշելով, որ իրենց հարկավոր է այս կամ այն կոնկրետ ծառայությունը՝ հիմնականում նյութական հատուցման տեսքով: Դա համակարգի ձևավորած ակնկալիքների հետևանք էր: Այսինքն՝ տարիների ընթացքում սոցիալական պաշտպանության համակարգը քաղաքացիների մեջ ձևավորեց այն պատկերացումը, որ իրենք կարող են ակնկալել օգնություն նյութական փոխհատուցման տեսքով. տարեցը՝ կենսաթոշակի, հաշմանդամը՝ հաշմանդամության կարգը ճանաչելու և թոշակի, աղքատ ընտանիքը՝ նպաստի և այլն: Նման օգնությունը կարող էր միայն մասնակիորեն պաշտպանել դժվար կացության մեջ հայտնված շահառուին: Պաշտպանության համակարգի նման գործելաոճը իրավիճակային և հատվածային մոտեցման հետևանք էր: Իրական պաշտպանությունը ենթադրում է սոցիալապես խոցելի անհատների և խմբերի մեջ սոցիալական կարիքների հայտնաբերում և դրանց բավարարում այն չափով, որքանով անհրաժեշտ է նրանց կենսագործունեությունը լիարժեք դարձնելու համար: Մենք կարող ենք աղքատին շատ փող տալ նպաստի տեսքով, բայց եթե նա փողը արդյունավետ ծախսելու հմտություն չունի, ավելին՝ եթե նա փող աշխատելու հնարավորություն չունի, ապա ցանկացած չափի դրամական աջակցությունը նրան չի պաշտպանի սպառնացող սոցիալական ռիսկերից: Մյուս կողմից էլ սա մարդկանց սոցիալապես պասիվացնող մոտեցում է: Հենց դա է պատճառը, որ երկու տասնամյակից ավելի հանրապետությունում գործող ընտանեկան նպաստի համակարգը էական դեր չի կատարում երկրում աղքատության կրճատման գործում: Ընտանիքներն ամեն ինչի դիմում են, որ համապատասխանեն աղքատության սահմանված չափանիշներին և դառնան նպաստառու: Մոտավորապես նման վիճակ կարելի է արձանագրել ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգի մյուս՝ երեխաների, տարեցների, հաշմանդամների, գործազուրկների պաշտպանության ենթահամակարգերում: Այստեղ մարդկանց կարիքների բավարարման մասին սոցիալական ծառայողների կողմից կայացվող որոշումները հիմնականում

նպաստի, թոշակի կամ կենսաթոշակի նշանակման, խնամքի հաստատությունում տեղավորման մասին են և այլն: Փորձը ցույց տվեց, որ բնակչության սոցիալական պաշտպանության նպատակով խորհրդային մոտեցումների իներցիոն կիրառումը ոչ միայն չարդարացրեց իրեն, այլև ծնեց սոցիալական նոր հիմնախնդիրներ, ինչպիսիք են, օրինակ՝ մարդկանց մեկուսացումն ու օտարացումը, աղքատության նոր մշակույթի ձևավորումը և այլն: Սոցիալական աշխատանքի մուտքը սոցիալական պաշտպանության համակարգ խոստանում էր սոցիալական ծառայության մատուցումը դարձնել մասնագիտական գործունեություն: Դա արվելու էր այն գիտելիքների ու հմտությունների միջոցով, որոնք մասնագիտության բովանդակությունն են: Սոցիալական աշխատողն անհատականացնում է սոցիալական ծառայությունը՝ այն համապատասխանեցնելով շահառուի կարիքներին: Սոցիալական դեպքի վարման և կառավարման տեխնոլոգիաների, սոցիալական աշխատանքի զանազան մեթոդների կիրառումը խոստանում է մասնագետների միջամտությունները դարձնել ավելի ու ավելի հասցեական ու արդյունավետ: Մասնագիտության ներդրմամբ սոցիալական պաշտպանության համակարգը սկսում է գործառել ավելի արդյունավետ: Այն սկսում է արձագանքել ավելի նուրբ ու բարդ խնդիրների, ինչպես օրինակ՝ ընտանեկան բռնությունները, թրաֆիքինգը, անտեսումները, իրավունքների ոտնահարումները, սոցիալական մեկուսացումը և այլն: Որպեսզի այսօր Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգի ծառայությունները դառնան իսկապես պրոֆեսիոնալ, հարկավոր է, որ դրանք մատուցողներն ունենան մասնագիտական համապատասխան գիտելիքներ և հմտություններ: Սա թերևս վերը նշված համակարգաստեղծ գործընթացի ամենադժվար իրագործելի նպատակն է: Երկու տասնամյակ առաջ սկսված գործընթացը տեղապտույտ է տալիս մարդկային գործոնի պատճառով: Տարիներ առաջ թվում էր, թե բավական է համակարգի սոցիալական ծառայողների համար կազմակերպվեն համապատասխան վերապատրաստումներ, ապա նրանք կդառնան սոցիալական աշխատողներ, և համակարգն էլ կսկսի գործառել ցանկալի արդյունավետությամբ: Սակայն վերապատրաստումներն արագորեն հաջորդում էին մեկը մյուսին, իսկ սայլը տեղից չէր շարժվում: Դրա փոխարեն համակարգում արագորեն արժեզրկվեց սոցիալական աշխատանքի գաղափարը, որովհետև շատերին թվում էր, որ սոցիալական աշխատող դառնալու համար լուրջ կրթություն չի պահանջվում: Ժամանակի ընթացքում սոցիալական պաշտպանության համակարգում բազմաթիվ ծառայողներ վերապատրաստման միջոցով ձեռք են բերել սոցիալական աշխատողի կարգավիճակ, որի համար ուրիշները ստիպված էին իրենց կյանքի չորս տարին համալսարանում անցկացնել: Այսօր արդեն սոցիալական պաշտպանության համակարգում սոցիալական ծառայությունների մատուցմամբ զբաղ-

վող, սոցիալական աշխատանքի կրթություն չունեցող հարյուրավոր ծառայողներ կան: Միևնույն ժամանակ համալսարանները թողարկել են մեծ թվով դիպլոմավորված սոցիալական աշխատողներ, ովքեր աշխատաշուկայում չեն գտնում իրենց տեղը: Եթե նկատի ունենաք, որ սոցիալական ոլորտում այս ողջ ընթացքում բարեփոխումներ են ընթանում, որոնք նոր մարտահրավերներ են առաջադրում մասնագետներին, ապա կարելի է պատկերացնել, թե ինչպիսի բարդ թնջուկ է առաջացել: Աշխատանքային փորձն ընդդեմ մասնագիտական կրթության: Ահա ոլորտում ձևավորված հիմնական հակասությունը, որը գործատուն դժվարանում է հաղթահարել: Վիճակն ավելի է բարդացել, քանի որ ՀՀ սոցիալական աջակցության մասին օրենքում ամրագրված է, որ սոցիալական աշխատող դառնալու համար կարելի է ունենալ այլ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, «սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման դասընթացներ ավարտելու վկայական և սոցիալական ոլորտում մեկ տարվա աշխատանքի փորձ[5]: Օրենքը սոցիալական աշխատողի կարգավիճակը հստակեցնելու փոխարեն ավելի է մեծացրել խառնաշփոթը՝ խնդիրը հրելով դեպի փակուղի: Իրավիճակը շտկելու համար կարելի է զարգացնել համակարգը՝ առավել ուշադրություն դարձնելով մասնագիտական հիմնավոր կրթություն ստացած մասնագետների շահերին: Խնդրի լուծման փնտրտուքները կարծես թե հանգեցրել են լուծման ինչ-որ փոխզիջումային տարբերակի, որը փորձում են կյանքի կոչել պրակտիկայի և կրթության ոլորտների մասնագետները: Հետագայում արդեն մասնագետների բնական սերնդափոխությունն ամեն ինչ իր տեղը կդնի: Սոցիալական աշխատանքի մուտքը համակարգ խոստանում է սոցիալական ծառայություններն աստիճանաբար փոխարինել սոցիալական աշխատանքի ծառայություններով: Դրանք կլինեն խիստ անհատական և համալիր: Այն խնդիրները, որոնք դրված են ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգի առջև, սոցիալական աշխատանքի համատեքստում ավելի ճիշտ լուծումներ կստանան: Դրա համար այն պետք է իսկապես դառնա համակարգի տարր: Սոցիալական ծառայությունների ինտեգրումը և սոցիալական դեպքի վարման գործընթացի հանձնարարումը համալիր ծառայության սոցիալական աշխատողներին շատ կարևոր նախադրյալ են այդ անցումն ապահովելու համար: Մնում է համակարգի սոցիալական ծառայողներն ուղղակի վերցնեն սոցիալական աշխատանքի մասնագիտական մշակույթը և տարրալուծեն համակարգում իրենց կողմից իրականացվող գործառույթներում: Այդ դեպքում համակարգն իսկապես հեղափոխություն կապրի: Սոցիալական աշխատանքը կնպաստի հաստատություններից մարդկանց և առաջին հերթին՝ երեխաների տեղափոխմանը ընտանիքներ, կկանխի

[5] Տե՛ս «ՀՀ Օրենքը Սոցիալական աջակցության մասին», ընդուն. 2014 թ. դեկտ. 17-ին, էջ 32:

կամ գոնե կկրճատի մարդկանց՝ խնամքի նպատակով հաստատություններում տեղավորելու դեպքերը: Սոցիալական աշխատանքը համակարգ կբերի այլընտրանքային այնպիսի տեխնոլոգիաներ, որոնց սոցիալական բացասական ազդեցությունն ավելի փոքր կլինի: Այն գերադասում է սոցիալական խնդիրների լուծման այնպիսի մոդելներ, որոնք թույլ են տալիս մարդկանց՝ երեխաներին, տարեցներին, իրավախախտներին, հաշմանդամներին, չկտրել իրենց բնական միջավայրերից: Սոցիալական ներառվածությունը և ինտեգրվածությունը դառնում են պաշտպանվածության կարևոր ցուցիչներ: Սոցիալական աշխատանքը հիմնական ներդրումն անում է շահառուի մարդկային և սոցիալական կապիտալների մեջ՝ զարգացնելով ու հարստացնելով դրանք: Նման օգնությունը շատ ավելի արդյունավետ է, քան պարզապես նյութական աջակցությունը: Շահառուի կյանքին միջամտությունը սկսելով նրա ուժեղ կողմերից ու ավելի զարգացնելով դրանք՝ սոցիալական աշխատողը փորձում է նրա շուրջը կառուցել սոցիալական պաշտպանության հզոր ցանց՝ ինտեգրելով պաշտպանության բնական և ձևական համակարգերի ներուժը: Սոցիալական պաշտպանության համակարգի տարրեր են՝ շահառուն, նրա սոցիալական կապիտալը, պետական և հասարակական կազմակերպությունները, մասնավոր անձինք և կազմակերպությունները: Այդ բոլորն իրականացնում են սոցիալական աջակցության գործառույթներ, որոնք բխում են համակարգի հիմնական նպատակից: Շահառուների սոցիալական պաշտպանության խնդիրը կարելի է համարել հիմնովին լուծված, եթե համակարգի տարրերի կողմից իրականացվող գործառույթների ամբողջությունը թույլ է տալիս հաղթահարել սոցիալական խոցելիության հետևանքով առաջացող ռիսկերը: Հակառակ դեպքում այդ համակարգն ուղղակի կատարում է սոցիալական աջակցության գործառույթ: Հասարակության մեջ մարդը կարող է սոցիալապես լիովին պաշտպանված լինել, եթե նրան խոստացվող կամ ցուցաբերվող աջակցությունը բավարար է արժանավայել կյանքով ապրելու համար: Եթե սոցիալական քաղաքականությունը պաշտպանական միջոցառումների շարքում ներառի նաև պրոֆեսիոնալ սոցիալական աշխատանքը, ապա դրանից բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակը զգալիորեն կբարձրանա: Թեև ՀՀ-ում սոցիալական քաղաքականության հիմնական սուբյեկտը դեռևս շարունակում է մնալ պետությունը, հետզհետե ավելի ու ավելի լսելի է դառնում հասարակական հատվածի ձայնը[6]: Հասարակական հատվածի ակտիվացումը սոցիալական պաշտպանության համակարգում նպաստում է սոցիալական աշխատանքի մշակույթի տարածմանը: Սոցիալական աշխատանքը պետք է դառնա բնակչության սոցիալական պաշտպանության համա-

[6] Տե՛ս **С. Аствацатуров.** Реальность социального риска или риск в социальной реальности // «Изменяющееся общество. Теория и практика», Եր., 1998, թիվ 1, 2, էջ 6:

կարգի բոլոր ենթահամակարգերի տարր, որը կհանգեցնի ինչպես առանձին-առանձին, այնպես էլ ամբողջ համակարգի գործառական կարողությունների մեծացմանը՝ դրանով իսկ համակարգը դարձնելով իսկապես պաշտպանության: Սոցիալական աշխատանքը, նաև միջամտելով սոցիալական քաղաքականության մշակմանը[7], աստիճանաբար կկատարելագործի սոցիալական պաշտպանության համակարգը: Օգտագործելով մասնագիտական իր ողջ ներուժը՝ սոցիալական աշխատանքը կկառուցի սոցիալական ռիսկերին արձագանքող առավել գործուն ու կենսունակ համակարգ:

Բանալի բառեր – *սոցիալական պաշտպանության համակարգ, սոցիալական աշխատանք, սոցիալական ռիսկ, սոցիալական աջակցություն*

АРТАК ХАЧАТРЯН – ***Социальная работа и система социальной защиты населения в постсоветской Армении.*** **–** В статье анализируется влияние социальной работы на систему социальной защиты армянского общества в постсоветский период. Обосновывается точка зрения, согласно которой социальная работа укрепляет систему социальной защиты населения и кардинально увеличивает её эффективность, повышая адресность социальных услуг и превращая их предоставление в особую профессию.

Ключевые слова: *система социальной защиты, социальная работа, социальный риск, социальная поддержка*

ARTAK KHACHATRYAN – ***Social Work and the System of Social Protection of Post-Soviet Armenian Society.*** – The article analyzes the influence of social work on the social protection system of the Armenian society of the post-Soviet period. The author justifies the view that introducing social work into the social protection system of the Armenian society will dramatically increase the effectiveness of the system by increasing the targeting of social services, transforming the process of providing social services with professional activities.

Key words: *system of social protection, social work, social risk, social support*

[7] Տե՛ս **J. Marx, C. Broussard, F. Hopper, D. Worster**, Social Work and Social Welfare, Allyn & Bacon, էջ 356:

ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԵՎԳԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Մոդելավորումը սոցիալական երևույթների և գործընթացների ուսումնասիրության տարածված ու արդյունավետ մեթոդներից մեկն է, որը լայնորեն կիրառվում է հասարակության գործունեության գրեթե բոլոր ոլորտներում: Մոդելավորման համընդհանուր կիրառման կողմնակիցները պնդում են, որ սրընթաց զարգացող աշխարհի մասին ցանկացած գիտելիք, վարկած կամ անգամ ամբողջական տեսություն մոդելներ են[1]: Հետևաբար մոդելավորումը կարող է համարվել հետազոտական ցանկացած գործունեության ընթացքում կիրառվող կարևորագույն մեթոդներից մեկը:

«Մոդելավորում» եզրույթը մեկնաբանվում է որպես հետազոտության օբյեկտի ուսումնասիրություն այդ օբյեկտի մոդելի միջոցով: Այն ընդունված է բնորոշել նաև որպես **բազմագործառութային հետազոտություն**, որը հնարավորություն է ընձեռում հետազոտության օբյեկտը փոխարինել մոդելով՝ հիմնվելով օբյեկտի *հիմնական բնորոշիչների վերարտադրման և առանցքային բնութագրիչների պահպանման* սկզբունքների վրա: Մոդելավորման միջոցով հնարավոր է վերացարկել օբյեկտի՝ հետազոտության համար կարևոր, առանցքային հատկանիշները և այդպես խորքային վերլուծության ենթարկել դրանք: Մոդելավորումն ուղղված է նաև մոդելի հետազոտության և դրա միջավայրային, կառուցվածքային, գործառութային բնութագրիչների վերափոխման միջոցով հետազոտության իրական օբյեկտի փոփոխությանը:

Ընդհանուր առմամբ այն նպատակները, որոնց իրագործմանը կարող է ծառայել մոդելավորումը, ենթադրում են.

1. մոդելի միջոցով օբյեկտի բնութագրիչների և կառուցվածքային տարրերի վերլուծություն,
2. օբյեկտի գործառման արդյունավետության բարձրացում,
3. օբյեկտի կառուցման գործընթացի ռացիոնալացում,
4. օբյեկտի արդյունավետ կառավարում,
5. օբյեկտի հետագա զարգացման միտումների կանխատեսում:

Անդրադառնալով մոդելավորման տեսական հիմքերին՝ պետք է

[1] Տե՛ս **Моисеев Н**. Математика в социальных науках. М., 1981, էջ 3-15:

նշել, որ մոդելավորումը հիմնվում է արտացոլման տեսության հիմնարար սկզբունքների վրա, որոնց համաձայն՝ արտացոլումը բնորոշվում է որպես մարդու կողմից շրջապատող աշխարհի ճանաչման կարևոր նախադրյալ: Արտացոլման տեսության ներկայացուցիչները գտնում են, որ ճանաչողության օբյեկտները գոյություն ունեն մարդու գիտակցությունից անկախ ու նրանից դուրս, և միայն արտացոլման միջոցով են դրանք մոդելի տեսքով հանդես գալիս մարդու գիտակցության մեջ:

Ճանաչողության օբյեկտը և մոդելը սերտորեն փոխկապված են, քանի որ մոդելի «բովանդակությունն» անմիջականորեն պետք է արտացոլի իրական օբյեկտի հիմնարար, բովանդակային և առանցքային բնութագրիչները[2]: Այդ սկզբունքով արտացոլման տեսությունը հարում է մատերիալիստական մոնիզմին, որի ներկայացուցիչները պնդում են, որ մոդելը, գտնվելով ճանաչողության օբյեկտից դուրս, իր նշանակությունն ու իմաստը «ձեռք է բերում» շնորհիվ այն հանգամանքի, թե կոնկրետ ինչ է արտացոլում և ինչպես[3]:

Մոդելավորման տեսական հիմքերից է նաև նմանակման և մոդելավորման տեսությունը: Վերջինս մոդելավորումը մեկնաբանում է որպես ճանաչողական գործընթաց, որը ենթադրում է ուսումնասիրվող համակարգին նման կամ հարող մի այլ համակարգի ստեղծում, որի շնորհիվ հետազոտողն ունենում է հետազոտության երկու տարբեր օբյեկտ. դրանցից մեկը գոյություն ունի իրականում, իսկ մյուսը ձևավորվել է գծապատկերի, լեզվական արտահայտչամիջոցների կամ այլ հնարավոր միջոցների օգտագործմամբ, որոնցից մեկը մյուսի օրինակն է և կարող է փոխարինել դրան:

Այն, որ մոդելավորումը, հիմնվելով ֆիզիկական օրինաչափությունների, մաթեմատիկական գործողությունների և ավտոմատացված հաշվարկների վրա, վաղուց արդեն կիրառվում է բնական գիտություններում, անժխտելի փաստ է: Սակայն մոդելավորումը՝ որպես ճանաչողության մեթոդ, կիրառվում է նաև սոցիալական գիտություններում, որոնք որդեգրել են մաթեմատիկական մտածելակերպին բնորոշ որոշակի սկզբունքներ ու օրինաչափություններ և հետազոտական արդի խնդիրները փորձում են լուծել մաթեմատիկական մեթոդներով: Այդպիսի մեթոդներից մեկն էլ մոդելավորումն է, որը, փաստորեն, հասարակական և բնական գիտությունները «կապող օղակ է»:

Ռուս գիտնական Մոիսեևը «Մաթեմատիկան սոցիալական գիտություններում» աշխատության մեջ նշում է, որ այսօր բավական դժվար է առանձնացնել մի գիտություն, որը «մաթեմատիկականացված չէ», այսինքն՝ չի օգտվում ճանաչողության մաթեմատիկական մեթոդներից: Ըստ հեղինակի՝ այս դեպքում կարևոր է այն հարցը, թե որքանով է մաթեմատիկականացված գիտությունը և որպես գիտություն

[2] Տե՛ս **Рубенштейн С.** Бытие и сознание. СПб., 2012, էջ 65:
[3] Տե՛ս նույն տեղը, էջ 66:

զարգացման որ փուլում է գտնվում, քանի որ գիտական տարբեր ուղղությունների «մերձեցումը» կարող է վկայել գիտական մշակույթի զարգացածության բարձր մակարդակի մասին[4]:

Սոցիոլոգիայում մոդելավորումն արագորեն սկսեց լայն տեղ գրավել նախորդ դարի 2-րդ կեսերից, ինչը պայմանավորված էր կիբերնետիկայի զարգացմամբ, ինչպես նաև հասարակական գիտություններում մաթեմատիկական և էլեկտրոնային-հաշվարկային մեթոդների լայն կիրառությամբ: Սոցիոլոգիական մոդելավորումը կիրառվում է հասարակական երևույթների և գործընթացների վերլուծության, դրանց հիմնական բնութագրիչների մեկնաբանության, ինչպես նաև կոնկրետ իրավիճակներում օբյեկտի վարքի կամ հարաբերությունների հնարավոր փոփոխությունների ու զարգացման միտումների կանխատեսման համար:

Սոցիոլոգիական մոդելավորման մեթոդի կիրառման միջոցով ձևավորվում է *տեսական համակարգ*, որը, ըստ Տ. Պարսոնսի, հասկացությունների, տեսական նկարագրությունների և դրանցից բխող վերլուծությունների ու ենթադրությունների ամբողջություն է, որը վերաբերում է նույն համակարգի էմպիրիկ տիպին[5]: Այդ երկու համակարգերը, միմյանց հետ կապված լինելով և բազում ընդհանրություններ ունենալով հանդերձ, նույնը չեն և ունեն էական տարբերություններ[6]: Այսպես. տեսական համակարգը կամ տեսական մոդելն օժտված է էմպիրիկի ոչ բոլոր բնութագրիչներով և ներկայացնում է դրա միայն որոշ, վերացարկված բնութագրիչներ, որոնք բխում են մոդելավորման նպատակներից:

Քանի որ սոցիոլոգիական մոդելավորման շրջանակներում կատարվող ուսումնասիրությունների և սոցիալական կանխատեսումների արդյունավետությունն անմիջականորեն կախված է օբյեկտի վերաբերյալ նախօրոք ստացված տեղեկատվությունից, ապա մոդելավորման կարևորագույն փուլերից է դառնում ուսումնասիրության օբյեկտի վերաբերյալ հավաստի տեղեկատվության ձեռքբերումը[7]: Այն նպաստում է օբյեկտի համակողմանի վերլուծությանը և դրա հիման վրա մոդելի կառուցմանն ու գործարկմանը:

Սոցիոլոգիական մոդելավորումը ենթադրում է ոչ միայն էմպիրիկ ուսումնասիրությունների իրականացում և դրանց միջոցով ստացված տեղեկատվության մշակում ու ներկայացում, այլև տեսական որևէ մոտեցման կամ ուղղության շրջանակներում այդ տեղեկատվության վերլուծություն և հայեցակարգում: Դրանք մոդելի կառուցման հաջորդ

---

[4] Տե՛ս **Моисеев Н**. Указ. соч., էջ 3-15:

[5] Տե՛ս **Парсонс Т.** Социальные системы // "Вопросы социальной теории". Том II. Вып. 1(2), М., 2008, էջ 38:

[6] Տե՛ս նույն տեղը:

[7] Տե՛ս **Edling C., Rydgren J.** Sociological Insights of Great Thinkers: Sociology through Literature, Philosophy and Science. California, ABC-CLIO, LLC, 2011, էջ 223:

կարևորագույն փուլերն են: Ընդ որում՝ տեղեկատվությունը կարող է վերաբերել նաև անցյալում օբյեկտի ունեցած փորձառությանն ու բնութագրիչներին: Հետևաբար սոցիոլոգիական մոդելավորման համար կարևոր է կատարել *պատմասոցիոլոգիական վերլուծություն*, որպեսզի հնարավոր լինի բացահայտել ուսումնասիրվող օբյեկտի գործառման մշակութային ասպեկտը, զարգացման ընթացքը, միտումները և օրինաչափությունները:

Սոցիոլոգիական մոդելավորման հիմնարար և տրամաբանական սկզբունքներից է օբյեկտի և մոդելի միօրինակության կամ նմանության սկզբունքը, համաձայն որի՝ հետազոտության գլխավոր օբյեկտի և մոդելի միջև պետք է լինի կա՛մ լիարժեք, կա՛մ մասնակի նմանություն: Ընդ որում՝ օբյեկտի և մոդելի նմանությունը կարող է դրսևորվել հետևյալ ձևով.

1. կառուցվածքի լիարժեք կամ մասնակի նմանություն,
2. գործառույթների լիարժեք կամ մասնակի նմանություն,
3. կառուցվածքի և գործառույթների լիարժեք կամ մասնակի նմանեցում[8]:

Միևնույն ժամանակ, ամերիկացի փիլիսոփա Մաքս Վարտոֆսկին նշում է, որ մոդելը իրականում գոյություն ունեցող օբյեկտի պարզ և անմիջական արտացոլումը կամ նմանակումը չէ, և այն չի կարող պարզապես արտացոլել մոդելավորվող օբյեկտի բնութագրիչներ ու առանձնահատկություններ: Հեղինակը գտնում է, որ մոդելի և օբյեկտի միջև առկա են շատ ավելի խորը և բովանդակային կապեր, որոնք նա կոչում է **մոդելավորման կապեր**[9]: Դրանք համապատասխանության կապեր են և սահմանափակվում ու բխեցվում են մոդելավորման նպատակից: Ստացվում է, որ ամեն ինչ չէ, որ կարող է հանդես գալ որպես մոդել. մոդել կոչվելու համար անհրաժեշտ է, որ տվյալ օբյեկտի և մոդելի միջև ձևավորվեն կամ վեր հանվեն համապատասխանության կապեր, որոնք էլ ապահովում են երկու օբյեկտների հարաբերման հնարավորությունները: Բացի այդ կապերի առկայությունից կարևորագույն պահանջ է դառնում նաև **մոդելավորման կապերի անհամաչափությունը** կամ ասիմետրիան, որը մեկնաբանվում է որպես ոչ համարժեք կապերի առկայություն մոդելի և իրական օբյեկտի միջև: Այլ կերպ ասած՝ մոդելը չի կարող համարվել համապատասխանության կապերով նույնքան «հարուստ» և հագեցած, որքան իրական օբյեկտը: Դա նշանակում է, որ անգամ եթե մոդելն արտաքնապես կամ կառուցվածքագործառութային առումով իրական օբյեկտի արտապատկերումն է կամ լիարժեք նմանակում ենթադրող կրկնօրինակը, միևնույնն է, այն զրկված է մի շարք այլ կապերից, առանձնահատկություններից և բնութագրիչներից, որոնք դուրս են մնացել հետազոտության նպատակների շրջանակից:

---

[8] Տե՛ս «Философский словарь» / Под ред. И. Т. Фролова.-6-е, М., 1991, էջ 267:

[9] Տե՛ս **Вартофский М.** Модели: репрезентация и научное понимание. М., 1988, էջ 33:

Վարտոֆսկին մոդելի ավելի ստույգ և հստակ սահմանման համար այն բնութագրում է որպես «կառույց», որի միջոցով հետազոտողը (չնայած հեղինակը պնդում է, որ յուրաքանչյուր անձ իր ամենօրյա գործունեության ընթացքում իրականացնում է մոդելավորում և ստեղծում է մոդելներ) ներկայացնում է իր փորձի կամ մտածողության արդյունքները արտահայտչական միջոցների կամ սիմվոլների տեսքով. ստացվում է այդ փորձի կամ մտածողության համակարգված ներկայացում, որն ավելի մատչելի, տեսանելի ու հասկանալի է դարձնում վերջիններիս մեկնաբանությունն ու ընկալումը:

Մոդելն ընդունված է բնութագրել նաև որպես տեսական գիտելիքը ներկայացնելու ձև[10]: Այն հնարավորություն է ընձեռում օբյեկտի վերաբերյալ տեսական դրույթները և մեկնաբանությունները ներկայացնելու կիրառական տարբերակներով՝ ապահովելով գաղափարների և հասկացությունների գործածումը պրակտիկայում: Մոդելը, ուսումնասիրվող օբյեկտի վերաբերյալ գիտելիքների մարմնավորումը լինելով հանդերձ, շատ մոտ է պրակտիկային և «պատրաստ է» կիրառման[11]: Դրանով իսկ ապահովվում են տեսության և պրակտիկայի միջև կապը, տեսության կիրառումը պրակտիկայում:

Մոդելն իր բնույթով, ձևավորման և կիրառման նպատակներով հարում է նաև Մաքս Վեբերի ներկայացրած և առանցքային նշանակություն ունեցող ***«իդեալական տիպ»*** հասկացությանը: Ըստ Վեբերի՝ իդեալական տիպը մտային կառույց է, որը ձևավորվում է տեսական վերացարկման շնորհիվ և նպատակաուղղված է սոցիալական երևույթների, գործընթացների ուսումնասիրությանն ու մեկնաբանությանը[12]: Իդեալական ցանկացած տիպ ռացիոնալացված կապերի ամբողջություն է, որը բնորոշ է պատմական իրադարձությունների շղթային կամ տվյալ ժամանակահատվածում ընդունված սոցիալական երևույթներին: Այն, տեսական մոտեցումների շրջանակներում կիրառվող տարբեր հայեցակարգերի համակարգ լինելով, նպատակ է հետապնդում էմպիրիկ բնութագրիչները ներկայացնել տեսականորեն մեկնաբանված և վերլուծված, գտնել դրանցում ռացիոնալ «սկիզբը», շեշտադրել ու վերացարկել այդ ռացիոնալը:

Ինչպես և իդեալական տիպը, մոդելը նույնպես իրականության ճանաչման միջոց է, մեթոդաբանական հնարք, որի շնորհիվ կարող ենք ուսումնասիրել և մեկնաբանել սոցիալական երևույթները, գործընթացները, դրանց միջև առկա պատճառահետևանքային կապերը և այլն:

Մոդելների և մոդելավորման տեսակների վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ ներկայացված են բավականին շատ և

---

[10] Տե՛ս **Быстрянцев С.** Модели в социологии, էջ 261 // http://cyberleninka.ru/article/n/modeli-v-sotsiologii 14.03.2015, ժամը՝ 12:30:

[11] Տե՛ս նույն տեղը:

[12] Տե՛ս **Вебер М.** Избранные произведения. М., 1990, էջ 349:

տարբեր կարծիքներ: Ռուս գիտնական *Ուստյուգովը «Համակարգերի մոդելավորում»* աշխատության մեջ ներկայացնում է մոդելների տիպաբանության հիմնական չափանիշները: Ըստ նրա՝ մոդելները կարող են տիպաբանվել ըստ[13]՝

1. մոդելի կառուցվածքի,
2. մոդելը ներկայացնելու ձևի,
3. մոդելավորման տիպի,
4. մոդելավորման նպատակների,
5. մոդելի և բնօրինակի համապատասխանության:

Համաձայն մոդելների կառուցվածքային դասակարգման՝ տարբերակվում են մոդելների *նյութականացված և իդեալականացված* տիպերը[14]: **Նյութականացված մոդելները** ստեղծվում են նյութի կամ մատերիայի միջոցով՝ օգտագործելով ֆիզիկական միջավայրի ընձեռած հնարավորությունները: Նյութականացված մոդելի առանձնահատկությունն այն է, որ հանդես է գալիս որպես բնօրինակի՝ որոշակի կապերի, հարաբերությունների կամ սիմվոլների նմանակման միջոցով ձևավորված օրինակ:

Իդեալականացված մոդելը բնութագրվում է որպես տեսական մոդել, որը կառուցվում է հետազոտողի մտավոր գործունեությամբ, հետևաբար, ելնելով հետազոտության նպատակներից, կարող ենք ընտրել նաև իդեալականացված մոդելի ներկայացման կամ դրսևորման եղանակը, այսինքն՝ լեզուն:

Հիմք ընդունելով *մոդելի ներկայացման ձևը*՝ տարբերակում են մոդելի հետևյալ տեսակները.

1. լեզվական արտահայտչամիջոցներով ներկայացված մոդել,
2. նշանների կամ սիմվոլների միջոցով ներկայացված մոդել:

Մոդելների համանման տիպաբանություն է ներկայացնում Յու. Պլոտինսկին, համաձայն որի՝ մոդելները լինում են *բովանդակային և ֆորմալիզացված կամ ձևայնացված*[15]:

Դրանցից բովանդակային մոդելը նա բնութագրում է որպես այնպիսին, որը ձևակերպվում և ներկայացվում է գրավոր կամ բանավոր նկարագրության, իսկ ձևայնացված մոդելը՝ մեկ կամ մի քանի մասնագիտական «լեզուների» միջոցով (օրինակ՝ մաթեմատիկական հավասարումների, ծրագրավորման և այլն): Նրա կարծիքով, եթե բնական գիտություններում ավելի լայն կիրառություն ունի մաթեմատիկական կամ ձևայնացված մոդելը և դրան համապատասխան՝ մաթեմատիկական մոդելավորումը, ապա հասարակական գիտություններում ավելի նպատակահարմար է կիրառել բովանդակային մոդելը, քանի որ մոդելավորման բուն գործընթացին անցնելուց առաջ հետազոտողը նախ

---

[13] Տե՛ս **Устюгов М.** Моделирование систем. Челябинск, 2012, էջ 6:
[14] Տե՛ս **Кириличев Б.** Моделирование систем. М., 2009, էջ 22:
[15] Տե՛ս **Плотинский Ю.** Модели социальных процессов. М., 2001, էջ 30:

կառուցում է հետազոտության օբյեկտի կոգնիտիվ մոդելը, այսինքն՝ այն մոդելը, որը դեռևս զետեղված է նրա պատկերացումներում: Ստեղծելով օբյեկտի կոգնիտիվ մոդելը՝ հետազոտողը հիմնականում ձգտում է այն կառուցել այնպես, որ համապատասխանի հետազոտության նպատակներին և հնարավորություն ընձեռի պատասխանելու կոնկրետ հարցերի: Ըստ այդմ, նա կոգնիտիվ մոդելի կառուցումը ներկայացնում է որպես մոդելավորման հիմնական փուլերից մեկը, որին հաջորդում է բովանդակային մոդելի կառուցման կամ կոգնիտիվ մոդելի ձևակերպման փուլը: Բովանդակային մոդելի կառուցումը, նրա համոզմամբ, հնարավորություն է տալիս ստանալու նոր տեղեկատվություն օբյեկտի վարքի վերաբերյալ, բացահայտելու օրինաչափություններ և փոխազդեցություններ, որոնք կարող են առկա լինել հետազոտության օբյեկտի և ներքին ու արտաքին տարբեր գործոնների միջև, վեր հանելու պատճառահետևանքային կապեր:

Ելնելով բովանդակային մոդելի գործառման նպատակներից, հեղինակն առանձնացնում է բովանդակային մոդելների հետևյալ տեսակները՝ նկարագրական, բացատրական, կանխատեսող[16]:

Նկարագրական մոդել է համարվում հետազոտության օբյեկտի ցանկացած նկարագրություն, որը կարող է ներկայացնել օբյեկտի կառուցվածքային, գործառութային և մի շարք այլ բնութագրիչներ:

Բացատրական մոդելները միտված են վեր հանելու օբյեկտի պատճառահետևանքային կապերը, իսկ *կանխատեսող մոդելների* միջոցով հետազոտողը հնարավորություն է ունենում կանխատեսելու հետազոտության օբյեկտի կառուցվածքագործառութային որակների և հատկությունների հնարավոր փոփոխությունները նպատակային որոշակի միջամտությունից կամ ազդեցությունից հետո:

Պլոտինսկին առաջարկում է բովանդակային մոդելի ևս մի տեսակ՝ այն անվանելով *կոնցեպտուալ կամ գաղափարական մոդել*, որի կառուցման և հետազոտման համար ներկայացվում է տեսական որևէ հիմնավորում: Իհարկե, կարող ենք եզրակացնել, որ այն տեսությունները կամ գիտական մեկնաբանությունները, որոնք օգտագործվում են կոնցեպտուալ մոդելի կառուցման ընթացքում, համապատասխանում են այն գիտության տեսական հիմքերին, որի շրջանակներում իրականացվում է մոդելավորումը: Սակայն կոնցեպտուալ մոդելի դեպքում այդ վերլուծությունը դառնում է ավելի կոնկրետ ու սահմանափակվում կամ բխեցվում է կոնկրետ դրույթներից: Օրինակ, սոցիոլոգիական մոդելավորման շրջանակներում կիրառվող կոնցեպտուալ մոդելների մեծ մասը հիմնվում է համակարգային վերլուծության մեթոդաբանական զինանոցի վրա[17]:

---

[16] Տե՛ս նույն տեղը, էջ 92:

[17] Տե՛ս նույն տեղը:

Հեղինակն առանձնացնում է կոնցեպտուալ կամ գաղափարական մոդելի հետևյալ տիպերը՝ **տրամաբանական-սեմանտիկ**, **կառուցվածքագործառութային** և **պատճառահետևանքային**: Մոդելների այս տիպերի առանձնացման համար նա հիմք է ընդունում դրանց կիրառման նպատակը: Տրամաբանական-սեմանտիկ մոդելի հիմնական նպատակը կարելի է համարել հետազոտության օբյեկտի կառուցվածքային առանձնահատկությունների ուսումնասիրությունը և կառուցվածքային տարրերի միջև տրամաբանական կապերի բացահայտումը[18]: Ի տարբերություն այդ մոդելի՝ կառուցվածքագործառութային մոդելի կիրառման հնարավորությունները սահմանափակվում են հետազոտության օբյեկտի գործառութային առանձնահատկությունների և դրանցից բխող կառուցվածքային բնութագրիչների ուսումնասիրությամբ, ինչպես նաև օբյեկտի գործառութային հնարավորությունների բարելավման միջոցների բացահայտմամբ: Պատճառահետևանքային մոդելներն ուղղված են հետազոտության օբյեկտի վարքի և փոխհարաբերությունների պատճառահետևանքային կապերի ու ազդեցությունների ուսումնասիրությանը:

Մոդելի տիպի ընտրությունը կանխորոշում է սոցիոլոգիական մոդելավորման կոնկրետ տիպի կիրառումը, իսկ մոդելների բազմազանությունը հնարավորություն է ընձեռում լուծելու սոցիոլոգիական մոդելավորման առջև դրված բազմաբնույթ խնդիրները:

Այդպիսով, մոդելավորումը ժամանակակից սոցիոլոգիայում կիրառվող հետազոտական մեթոդներից է, որը հնարավոր է դարձնում սոցիալական երևույթների և գործընթացների վերլուծությունը, վերացարկումը, հայեցակարգումը, ինչպես նաև պատճառահետևանքային կապերի վերհանումը և հետագա զարգացումների կանխատեսումը:

Բանալի բառեր – *սոցիոլոգիական մոդելավորում, մոդել, վերացարկում, հայեցակարգում, իդեալական տիպ*

ЕВГИНЕ ВАРДАНЯН – ***Возможности применения моделирования в социологических исследованиях.*** – До недавних пор моделирование считалось исследовательским методом, присущим главным образом естественным наукам. Однако сейчас его применение распространяется также на социальные науки. Социология не составляет в этом плане исключения. Метод моделирования активно применяется и здесь.

Статья посвящена возможностям, позволяющим использовать этод метод в социологических исследованиях, и анализу основных характеристик социологического моделирования.

---

[18] Տե՛ս **Кунаева Н.** Логико-семантический анализ высказываний, используемых в ситуации возрожения // «Вестник ВГУ». Серия «Лингвистика и межкультурная коммуникация», 2008, № 2, էջ 92:

Ключевые слова: *социологическое моделирование, модель, абстрагирование, концептуализация, идеальный тип*

YEVGINE VARDANYAN – *The Opportunities of the Implementation of Modeling in the Sociological Researches.* – Modeling was considered to be one of the famous methods, which is effectively used in natural sciences. Now it is also being actively implemented in sociological researches.

The article is devoted to the study the opportunities of implementation of modeling in sociology and highlighting the main characteristics of that research method.

Key words: *sociological modeling, model, abstraction, conceptualization, ideal type*

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՈՒՐՋ

ԳԱԳԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

Վստահաբար կարելի է հավաստել, որ բարօրության բարձր աստիճանի հասած հասարակություններին և նրանց անդամներին անցյալը ավելի պակաս չափով է հետաքրքրում, քան ներկան և առավել ևս՝ ապագան: Նրանք ապահովել են բարեկեցության մի մակարդակ, որը նման զարգացումների դեպքում իրատեսորեն անհասանելի է մյուսների, այսպես կոչված՝ զարգացող երկրների համար: Վերջիններում առկա ներկայիս հիմնախնդիրները՝ զանգվածային աղքատություն, եկամուտների խիստ բևեռացում, արտագաղթ, անբավարար տնտեսական աճ և այլն, աներկբայորեն ծագել են նաև կենտրոնացված վարչահրամայական տնտեսությունից հրաժարվելու հետևանքով: Դեպի բաղձալի հասարակություն «անցումով» ուղեկցվող տնտեսական կորուստները և սոցիալական աղետները դրդում են այդ իրավիճակում հայտնված մարդկանց անընդհատ շրջվել դեպի անցյալը՝ իրենց ներկան հասկանալու և անորոշ ապագան հստակեցնելու ձգտումով: Սա հատկապես ակնառու է իրենց հին համարող ժողովուրդներին և իհարկե հայերին, քանի որ ներկայի խափանումները ավելի ու ավելի են սնամեջ դարձնում «հնամենիության» «ամենափրկիչ» նեցուկը: Ստորև շարադրվածը կլինի մի հերթական փորձ՝ հստակեցնելու հասարակությունների անցած ուղին՝ տնտեսական աճ և համապատասխան ինստիտուցիոնալ պայմաններ կոորդինատային համակարգում: Դրանից հետո բավականին դյուրին կլինի գտնել «որտեղի՞ց ենք գալիս և ո՞ւր ենք գնում» հարցի պատասխանը:

Ցանկացած համակարգ ամենաընդհանուր ձևով կարելի է բնորոշել որպես փոխներգործող տարրերի համախումբ, որպես ընդհանուր նպատակ հետապնդող մարդկային, կենսաբանական, մեքենայական, բնական և այլ միավորումների գործառող ամբողջություն: Ակնհայտ է, որ համակարգը չի կարող գործառել մեկուսի: Այն տեղակայված է լինում որոշակի միջավայրում՝ դաշտում, ինչը համակարգի մերձակա շրջապատն է, և որ համակարգի հատկանիշները դրսևորվում են նաև այդ միջավայրի հետ փոխշփման ընթացքում: Ընդ որում՝ այդ փոխներգործության բնույթը կարող է տարբեր լինել՝ հստակ պատճառահետևանքայինից մինչև հավանականը և չեզոքը:

Համակարգի ու միջավայրի միջև առկա կապերի և համակարգի

ներսում գործող կապերի դերերը նույնական լինել չեն կարող: Բնական է, որ առաջնային են համակարգաձևավորողները: Վերջիններիս առանձնացումն էլ հարաբերությունների և կապերի բազմազանության մեջ առաջին աստիճանի ճանաչողական անհրաժեշտություն է: Հենց այդ կապերն ու հարաբերություններն են արտահայտում համակարգի ընդհանուր հատկանիշները և պայմանավորում առանձնահատկությունները: Եվ, որպես կանոն, այդ ներքին կապերն ու հարաբերություններն են համակարգաձևավորողները: Այսինքն՝ ևս մեկ անգամ հաստատվում է այն իրողությունը, որ համակարգի՝ որպես մեկ ամբողջության որպիսությունը որոշվում է ոչ այնքան առանձին տարրերի, որքան նրա կառուցվածքի հատկանիշներով, տվյալ համակարգը ամբողջականացնող կապերով: Ուստի բազմաբարդ խնդիր է համակարգի և միջավայրի սահմանազատումը՝ տնտեսական համակարգի ձևավորման ընթացքի ու կենսագործունեության առանձնահատկությունների բացահայտման, ուսումնասիրության և ամենակարևորը՝ արդյունավետ ներազդման համար: Միաժամանակ, հետազոտության նպատակով պայմանավորված, տնտեսական համակարգի առանձին տարրեր երբեմն կարող են վերագրվել միջավայրին, և հակառակը՝ միջավայրի բաղադրիչները՝ ներառվել համակարգում: Սա ևս պատճառաբանված է, ուստի անխուսափելի, քանի որ հետազոտության նպատակով կատարվող ցանկացած սահմանազատում կամ բաժանում նախևառաջ տիեզերքի միասնականության խախտում է և երկրորդ՝ զուտ ճանաչողականից բացի, հետապնդում է որոշակի գործնական նպատակ: Սակայն բաժանումները և դասակարգումները արդյունավետ են լինում այն դեպքում, երբ հաշվի է առնվում երևույթի զարգացման անընդհատության խզումը: Այսինքն՝ բաժանումն, իր պայմանականություններով հանդերձ, պետք է ունենա նաև որոշակի առարկայական հիմքեր: Միաժամանակ, կախված նպատակներից, կարող է տեղաշարժվել նաև ուսումնասիրության կիզակետը, ինչը շատ հաճախ դրսևորվում է նոր ուղղությունների և դպրոցների ձևավորմամբ, որոնք սովորաբար ընդլայնում են աշխարհի ճանաչողության շրջանակները. «…երբ նոր հետազոտությունները ժամանակի ընթացքում իրենց տեղն են գտնում, իսկ նրանց քննադատական սրությունը վերանում է, պարզ է դառնում, որ իրականում դրանք ամենևին էլ չեն խախտում գիտության զարգացման հաջորդականությունը: Նոր տեսություններն ընդամենը լրացնում են հինը, ընդլայնում ու զարգացնում, երբեմն ճշգրտում են դրանք, հաճախ այլ երանգավորում են տալիս, նորովի են կատարում շեշտադրումները, բայց շատ հազվադեպ են հերքում դրանք»[1]:

Տնտեսական համակարգի տարրերի և միջավայրի գործնականում հստակ սահմանազատման անհնարինությունը ամբողջական տնտեսական կառույցը ներկայացնող բազմաթիվ սահմանումների և ձևա-

[1] **Маршалл А.** Принципы политической экономии. Т. 1. М., 1983, с. 45.

կերպումների գոյության պատճառներից մեկն է: Լայնորեն կիրառվող «տնտեսակարգ» և ներկայումս ավելի հազվադեպ հանդիպող «արտադրաեղանակ», «հասարակական-տնտեսական ֆորմացիա», հասարակարգ ու համեմատաբար վերջերս շրջանառվող «տնտեսական աճի փուլ» տերմիններով ըստ էության բնութագրվում է միևնույն բովանդակությունը՝ տնտեսական համակարգը: Սրանցից յուրաքանչյուրը այս կամ այն չափի աղավաղումներով ներկայացնում և փորձում է մեկնաբանել իրականությունը: Ընդ որում՝ աղավաղումների չափը շատ հաճախ պայմանավորված է լինում ոչ այնքան ճանաչողությամբ ձեռք բերված մակարդակով և առարկայական գործոններով, որքան հետազոտողի գաղափարաբանական դիրքորոշմամբ: Եվ քանի որ մեր հետազոտության առարկան ոչ թե տնտեսական զարգացման փուլայնացման գոյություն ունեցող բազմաթիվ տեսություններում առկա շեշտադրումների ու վերջիններով պայմանավորված՝ դրանց մեթոդաբանական առանձնահատկությունների քննարկումն է, այլ տնտեսական մի մակարդակից մյուսին անցնելու օրինաչափությունների բացահայտումը, ուստի առավել արդյունավետ ենք համարում, առանց բանավիճային քննարկումների պատմությունը շարադրելու, պարզապես ներկայացնել այդ հայեցակարգերի հիմնական դրույթները: Եվ, բացի այս, բոլորի համար էլ ակնհայտ իրողություն է, որ տնտեսական և առհասարակ հասարակական զարգացումը ինքնին մեկն է, որքան էլ այն բազմազանորեն մեկնաբանվի:

Հասարակական-տնտեսական ֆորմացիաների տեսությունը, որը երբեմն վերագրվում է Կ. Մարքսին և Ֆ. Էնգելսին, կառուցված էր իրենց նախորդների՝Սեն-Սիմոնի, Հեգելի, Լ. Հ. Մորգանի հայեցակարգերի հենքի վրա[2]: Միաժամանակ, Մարքսն ու Էնգելսը իրենց տեսությունը փորձել էին հիմնավորել բազմաթիվ հղումներ անելով պատմական սկզբնաղբյուրների, ժամանակագրական աղյուսակների, փաստական նյութի: Այնուամենայնիվ, այդ տեսությունը ըստ էության կառուցված է մի կողմից՝ նախորդների և ժամանակակիցների պատկերացումների դրվագային ընկալման և մյուս կողմից, իրենց հասարակական քաղաքական դիրքորոշմամբ պայմանավորված[3], մտապատկերային ենթադրությունների կիրառությամբ: Իհարկե հասարակական-տնտեսական ֆորմացիաների հայեցակարգի առնչությամբ պատմության «օբյեկտիվ» տրամաբանության մասին Մարքսի և Էնգելսի պատկերացումները ևս որոշակի փոփոխություններ են կրել: Այսպես, սկզբում նրանք առաջնորդվում էին Սեն-Սիմոնի տրամաբանությամբ՝ նույնացնելով ստրկատիրությունը և Հին աշխարհը, միջնադարը և ճորտատիրությու-

[2] Տե՛ս **Сен Симон А.** Новое христианство. «Избранные сочинения». Т. 2. М.-Л., 1948**,** **Гегель Г**. Феноменология духа. М., 2014**, Морган Л.** Древнее общество. Л., 1935:

[3] Տե՛ս **Գ. Գալստյան**, Կ. Մարքսի տնտեսագիտական տեսությունը և դրա ժամանակակից նշանակությունը, «Տարեգիրք - 2012», Եր., 2013, էջ 69-78:

նը, ազատ (վարձու) աշխատանքը և նոր ժամանակը: Այնուհետև, որոշ փոփոխություններ կատարելով, փոխ առան համաշխարհային պատմության փուլայնացման Հեգելի տարբերակը. Հին Արևելք՝ ոչ ոք ազատ չէ (ազատ է միայն բռնակալը), անտիկ աշխարհ՝ որոշ ազատություններ (ձևավորվում են անհատականությունները), գերմանական աշխարհ՝ ազատ են բոլորը: Հին Արևելքը նրանք վերանվանեցին արտադրության ասիական եղանակ, անտիկ աշխարհը՝ ստրկատիրական հասարակություն, իսկ գերմանական աշխարհը բաժանվեց ճորտատիրության և կապիտալիզմի:

Մարքսյան հայեցակարգում՝ հասարակական-տնտեսական ֆորմացիայի հիմքում, ընկած է որոշակի արտադրաեղանակ, վերջինս էլ արտադրողական ուժերի (աշխատանքի միջոցներ, աշխատանքի առարկաներ՝ արտադրության միջոցներ և արտադրական հմտություններ ունեցող մարդիկ) և յուրահատուկ հարաբերությունների միասնություն է: Արտադրողական ուժերի զարգացման մակարդակը որոշվում է աշխատանքի բաժանման աստիճանով, արտադրության միջոցների, ամենից առաջ տեխնիկայի համապատասխան զարգացումով, ինչպես նաև մարդկանց արտադրական հմտությունների և գիտելիքների զարգացման աստիճանով: Արտադրության ընթացքում մարդիկ, ակտիվ փոխներգործելով բնության հետ (բխում է «աշխատանքի» մարքսյան սահմանումից)[4], միաժամանակ նաև հարաբերությունների մեջ են մտնում իրար հետ: Վերջինիս միջոցով է հնարավոր դառնում փոխներգործությունը բնության հետ: Եվ այն որոշակի կապերն ու հարաբերությունները, որոնց մեջ մարդիկ, ըստ Մարքսի, «անկախ իրենց կամքից ու գիտակցությունից»[5], մտնում են նյութական արտադրության պրոցեսում, կոչվում են հասարակական-արտադրական կամ տնտեսական հարաբերություններ: Այստեղից էլ՝ հասարակական-տնտեսական ֆորմացիան հասարակության զարգացման որոշակի փուլ է, բնորոշվում է արտադրողական ուժերի զարգացման մակարդակով և դրան համապատասխանող և դրանով ուղղակիորեն պայմանավորվող արտադրական հարաբերությունների պատմական ձևով: Այսինքն՝ գոյություն չի կարող ունենալ արտադրողական ուժերի զարգացման որևէ ֆորմացիոն փուլ, որին չհամապատասխանի իրենով որոշվող արտադ-

[4] Մարքսը «Կապիտալում» աշխատանքը բնորոշել է հետևյալ կերպ. «Աշխատանքը նախ և առաջ մարդու ու բնության միջև կատարվող պրոցես է, մի պրոցես, որի մեջ մարդն իր սեփական գործունեությամբ միջնորդավորում, կարգավորում և վերահսկողության է ենթարկում նյութերի փոխանակությունը բնության և իր միջև» (**Կ. Մարքս**, Կապիտալ, հ. 1, Եր., 1954, էջ 188): Առաջին հայացքից միանգամայն ընդունելի թվացող ձևակերպումը մտածողական լավ քողարկված որոգայթ է պարունակում: Համաձայն մարքսյան այս սահմանման՝ ստացվում է, որ բնության և մարդու միջև նյութափոխանակություն չիրականացնող գործնեության ցանկացած տեսակ, իսկ այդպիսին է ծառայություն ստեղծող մարդկային ջանքը՝ լինի դա մտավոր, թե ֆիզիկական, աշխատանք չէ, հետևաբար նաև հարստության աղբյուր չէ:

[5] **Կ. Մարքս** և **Ֆ. Էնգելս**, Ընտիր երկեր երեք հատորով, հ. 1, Եր., 1972, էջ 689:

րական հարաբերությունների տեսակ: Յուրաքանչյուր ֆորմացիայի հիմքում ընկած է արտադրության որոշակի եղանակ, վերջինս արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների պատմական կոնկրետ միասնություն է: Ընդ որում, ըստ Մարքսի, արտադրական հարաբերությունների ամբողջությունն է ձևավորում տվյալ ֆորմացիայի էությունը: Ֆորմացիայի տնտեսական հիմքը հանդիսացող տվյալ արտադրական հարաբերությունների համակարգին համապատասխանում է իրավաքաղաքական և գաղափարաբանական վերնաշենք[6]: Ֆորմացիան իր կառուցվածքում ներառում է ոչ միայն տնտեսական, այլև մյուս բոլոր հասարակական հարաբերությունները, ինչպես նաև կենցաղը, ապրելակերպը[7]: Հասարակությունների՝ մի փուլից մյուսին անցնելու պատճառը հիմնականում պայմանավորվում է արտադրողական ուժերի զարգացմամբ, որի հետևանքով առաջանում է հակասություն արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև:

Մարքսի և Էնգելսի հասարակական-տնտեսական ֆորմացիայի տեսությունը ավարտուն չէ բազմաթիվ կարևորագույն հարցեր անպատասխան թողնելու պատճառով: Այդուհանդերձ, ելնելով «պատմության օբյեկտիվ տրամաբանությունից», համաշխարհային պատմական ընթացքը նրանք բաժանել են հինգ հասարակական-տնտեսական ֆորմացիաների՝ նախնադարյան-համայնական (նախնադարյան կոմունիզմ), ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական և կոմունիստական: Ակնհայտորեն եվրոպական պատմությունը արտացոլող նման փուլայնացումը, որոշ վերապահումներով, կիրառվում էր նաև աշխարհի այլ երկրների նկատմամբ, ինչն ավելի էր մեծացնում տեսության և իրականության խզումը:

Իհարկե այս հայեցակարգի ձևավորմանը հաջորդած մեկ և կես դարում մարդկանց պատկերացումները համաշխարհային պատմական ընթացքի վերաբերյալ անհամեմատ ընդլայնվեցին ու խորացան: Անառարկելի է, որ մարդկային պատմությունը ակնհայտորեն չի տեղավորվում հասարակության զարգացման ֆորմացիոն տեսության մեջ: Այս անհամապատասխանությունը քննարկվում էր նույնիսկ կոմունիստական գաղափարախոսության միահեծան տիրապետության շրջանում: Համաձայն մարքսյան հայեցակարգի՝ կապիտալիզմին հաջորդափոխած սոցիալիզմը՝ կոմունիստական արտադրաեղանակի սկզբնական փուլը, պետք է ապահովեր աշխատանքի ավելի բարձր արտադրողականություն և արտադրության արդյունավետություն, մարդկանց բարեկեցության ավելի բարձր մակարդակ, ժողովրդավարության ավելի լայն սահմաններ: Սակայն իր գոյության ողջ ժամանակահատվածի որևէ հատվածում անգամ ԽՍՀՄ-ում կամ սոցիալիստա-

[6] Տե՛ս **Կ. Մարքս** և **Ֆ. Էնգելս**, Ընտիր երկեր երեք հատորով, հ. 1. Եր., 1972, էջ 5-98:
[7] Տե՛ս նույն տեղը, էջ 689-690:

կան որևէ այլ երկրում այդ նվաճումները առկա չէին: Ցանկացած հնարքով հաշվարկելու դեպքում էլ ԽՍՀՄ-ի ցուցանիշները էապես զիջում էին միջին զարգացած շուկայական տնտեսությամբ երկրների համապատասխան տվյալներին:

Այսպիսով, հասարակությունների՝ ըստ ֆորմացիաների զարգացման հայեցակարգը աղավաղված և ըստ էության մեխանիկական կապվածությունների միջոցով համամարդկային առաջընթացը՝ թերի, ուստի և կիրառական տեսանկյունից անպտուղ մեկնաբանելու օրինակ էր: Իսկ դրա ձևակերպումը և տարածումը առավելապես պատճառաբանված էին գաղափարաբանական ուղղվածությամբ և քաղաքական հավակնություններով, քան գիտական ճանաչողության խորացման մասնագիտական պահանջներով: Իհարկե, երբևէ քննարկման առարկա չի կարող դառնալ այն իրողությունը, որ ցանկացած գիտական հետազոտություն տեսական և գործնական որոշակի նպատակ է հետապնդում: Սակայն, երբ այդ հետազոտությունը ուղղորդվում է հենց այդ նպատակներով (օրինակը՝ «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը»), ապա կանխակալ դիրքորոշման հետևանքով իրատեսական արդյունքներ ստանալը գործնականում բացառվում է: Ուստի ցանկացած գիտական ուսումնասիրություն անհրաժեշտաբար պետք է կառուցվի քննվող առարկայի բովանդակությունից ելնելով, ինչից հետևողականորեն խուսափել են մարքսիզմի հիմնադիրները և նրանց հետևորդները:

Տնտեսական աճի փուլերի տեսությունը, որի ծնունդը արձանագրվեց ամերիկյան սոցիոլոգ և տնտեսագետ Ուոլթ Ռոստոուի՝ «Տնտեսական աճի փուլերը. ոչ կոմունիստական մանիֆեստ» գրքի լույսընծայմամբ[8], տնտեսագիտության մեջ ինդուստրիալ հայեցակարգի զարգացման արգասիքն էր: Իսկ վերջինիս հիմքերը դրվել էին դեռևս տասնիններորդ դարի վերջերին Տորստեն Վեբլենի աշխատություններում[9]: Քսաներորդ դարի կեսերին այսպես կոչված գիտատեխնիկական հեղափոխության հետևանքով այն կրկին հրատապություն ձեռք բերեց: Իսկ «արդյունաբերական հասարակության» հայեցակարգի հիմնադիրն էր ավստրիական ծագմամբ ամերիկյան տնտեսագետ Պիտեր Դրակերը, որն այս հիմնահարցի քննարկմամբ նախորդ դարի քառասունական թվականներին և հետագայում հանդես եկավ մի քանի ծավալուն հետազոտությունների հրատարակմամբ[10]: Ընդ որում՝ ինդուստրիալ հասարակության տեսությունը զուտ ամերիկյան «արդյունք» չէր, և դրա զարգացման գործում մեծ ավանդ ունեցան նաև ֆրանսիացի սոցիոլոգ-

---

[8] Տե՛ս **Rostow W.W**. The Stages of Economic Growth. A Non-Ccommunist Manifesto. - CUP, 1960.

[9] Տե՛ս Վեբլենի «Պարապ դասակարգի տեսություն» (1899 թ.) և «Բացակայողի սեփականություն» (1923 թ.) աշխատությունները:

[10] Տե՛ս «Ինդուստրիալ մարդու ապագան» (1942 թ.), «Կորպորացիայի տեսություն» (1946 թ.), «Նոր հասարակություն. Ինդուստրիալ կարգի անատոմիան» (1949 թ.), «Հետկապիտալիստական հասարակություն» (1993 թ.) և այլն:

ներ Ժակ Էլյուլը և Ռայմոն Արոնը[11]: Այս հանգամանքը ևս մեկ անգամ համոզում է, որ տնտեսագիտության բնագավառում իրապաշտական հայեցակարգերը ձևավորվել են անկախ հեղինակների գաղափարաբանական նախասիրություններից և նպատակադրված են եղել բացատրելու իրականությունը և ոչ թե ի սկզբանէ հերքելու այս կամ այն տեսությունը, ինչը շատ հաճախ փորձում են ընդգծել ֆորմացիոն տեսության հետևորդները:

Ի տարբերություն «արդյունաբերական հասարակության» հայեցակարգի այլ տեսությունների, որոնց կիզակետում առաջընթացի տեխնիկատեխնոլոգիական գործոնն է, Ու. Ռոստոուի տնտեսական աճի փուլերի տեսությունը, մեր համոզմամբ, ավելի ընդգրկուն է, քանի որ որպես սահմանազատող չափանիշ է կիրառում արտադրական ռեսուրսների օգտագործման արդյունավետության աստիճանը: Իսկ վերջինս չի պայմանավորվում միայն տեխնիկատեխնոլոգիական գործոններով: Այստեղ էական դեր ունեն հասարակական կյանքի այլ ոլորտները ևս՝ ավանդույթներն ու բարոյականությունը, իրավունքը, քաղաքականությունը և այլն: Իսկ, առհասարակ, զանազան տեսությունների առկայությունը և դրանցում շարադրված արտաքնապես թվացյալ տարբերությունները առավելապես պայմանավորված են հատկապես տնտեսագիտությանը բոլոր ժամանակներում բնորոշ համընդգրկուն ախտանիշով, որը մեր գիտության երևի անբաժան ուղեկիցն է: Այլ հասարակական գիտությունների կապակցությամբ դժվարանում եմ պնդել, բայց տնտեսական գիտության բնագավառում բազմաթիվ են միևնույն բովանդակությունը՝ գիտական հասկացությունը, տարբեր տերմիններով (օրինակ՝արժողություն, արժեք, գին) նշելը: Վերջինս անպտուղ բանավեճերի պատճառ է դառնում, որոնց ընթացքում մոռացության է մատնվում բուն ուսումնասիրության առարկան: Մյուս կողմից սակավաթիվ չեն նաև բոլորովին տարբեր բովանդակությունները միևնույն տերմինով (օրինակ՝ շահույթ) նշելը, ինչը ավելի է մեծացնում խառնաշփոթը: Իհարկե այս վտանգները միշտ էլ գիտակցվել և մատնացույց են արվել տնտեսագետների կողմից: Տնտեսագիտության արագ առաջընթացը խոչընդոտող այս հանգամանքի մասին գրել են թե՛ Թ. Մալթուսը տասնիններորդ դարասկզբին, թե՛ Ջ. Միլը նույն դարի կեսերին և թե՛ Ա. Մարշալը նույն դարի վերջերին, սակայն այդ իրողությունից անհնարին է եղել խուսափել:

Ռոստոուի ձևակերպած լուծումը, մեր համոզմամբ, նախ՝ առավել իրատեսորեն և ամբողջական է արտացոլում մինչ այժմ ընթացող զարգացումները և երկրորդ՝ հնարավորություն է ընձեռում համակողմանիորեն ախտորոշելու հետկոմունիստական հասարակությունների ներկա կացությունը և նախանշելու մարդկանց բարեկեցության աճի ուղիներն ու պայմանները: Ինչպիսին էլ լինեն ընթացիկ կարգախոսնե-

[11] Տե՛ս **Ellul J.** The Technological Society. New-York, 1965, **Aron R**. Le developpemment de la sosiete industrielle et la stratification social. Paris, 1956:

ը, միևնույնն է, ցանկացած հասարակության իրական նպատակը մարդկանց բարեկեցությունն է՝ բառի ամենաընդգրկուն իմաստով:

Ռոստոուն սահմանազատել է տնտեսական աճի հինգ փուլ.

ա. Ավանդական հասարակություն ,

բ. Վերելքի նախադրյալների ձևավորում,

գ. Վերելք,

դ. Ընթացք դեպի հասունացումը,

ե. Զանգվածային սպառման դարաշրջան:

«Ավանդական հասարակությանը» բնորոշ են ձեռքի պարզագույն տեխնիկան, ձեռքի աշխատանքը և գյուղատնտեսության գերակշռությունը: Այս փուլը ընդգրկում է մարդկային հասարակության ողջ պատմությունը մինչև XVII դարը:

Աճի երկրորդ փուլը «անցման վիճակում գտնվող հասարակությունն է»[12], որում ստեղծվում են վերելքի նախապայմանները: Այս փուլը բնորոշվում է կենտրոնացված ազգային պետությունների ձևավորմամբ: Հասարակության մեջ առանձնանում է «ձեռներեց մարդկանց նոր տեսակը <…>, որոնք, ձգտելով շահույթի կամ նորարարության, ցանկանում են հավաքագրել խնայողությունները և ստանձնել ռիսկերը»[13]: Երկրորդ փուլում կազմավորվում են բանկերը, ընդլայնվում են ներդրումները, աշխուժանում է արտաքին և ներքին առևտուրը:

Երրորդ՝ վերելքի փուլը բնորոշվում է նրանով, որ հասարակության մեջ սկսում են գերակայել տնտեսական առաջընթացի ուժերը: Զարգացումն ընթանում է ի շահ ողջ հասարակության: Զարգացած երկրներն այս փուլը անցել են պատմական տարբեր ժամանակահատվածներում. Անգլիան՝ XVIII դարի վերջին երկու տասնամյակում, Ֆրանսիան և ԱՄՆ-ը՝ XIX դարի կեսերին:

Չորրորդ փուլին բնորոշ են մշտական առաջընթացը, տեխնիկայի կատարելագործումը, նոր տեխնոլոգիաների տարածումը տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում, ազգային արդյունքի աճի գերազանցող տեմպերը բնակչության թվաքանակի համեմատությամբ: Այս ընթացքում միջազգային տնտեսական կապերի ծավալումը հանգեցնում է համաշխարհային տնտեսության ձևավորմանը: Հենց այս փուլն էլ Ռոստոուն անվանում է «արդյունաբերական հասարակություն»:

Հինգերորդ՝ «զանգվածային սպառման դարաշրջանի» բնորոշ առանձնահատկությունը երկարատև օգտագործման սպառողական բարիքների թողարկումն է: Այս փուլում վերափոխվում են հասարակության առաջնայնությունները: Արտադրությունն իր առաջնային դիրքը զիջում է սպառմանն ու բարեկեցությանը[14]:

Հինգերորդ փուլին ապագայում, ըստ Ռոստոուի, հաջորդելու է

---

[12] **Rostow W. W.** , նշվ. աշխ., էջ 6:

[13] Նույն տեղում, էջ 7:

[14] Տե՛ս նույն տեղը, էջ 73:

«հետսպառողական» հասարակությունը, որն արդեն ձևավորվել է ԱՄՆ-ում: Այս նոր հասարակական իրավիճակում բարեկեցության բարձր մակարդակ ապահովող սպառման հիմնախնդիրը, գտնելով իր լուծումը, հետ է մղվում, ու առաջնային են դառնում ընտանեկան և մտածողական արժեքները:

Արդյունաբերական հասարակության այլ հայեցակարգերում, ձեվակերպված հատկապես ոչ տնտեսագետների՝ սոցիոլոգների կողմից (Ռ. Արոն, Ժ. Էլյուլ, Դ. Բել), հասկանալի պատճառներով շեշտադրումների տեղաշարժի հետևանքով առաջնային են համարվում այլ հատկանիշներ, որոնք, մեր կարծիքով, պետք չէ, որ էական բովանդակային փոփոխություններ մտցնեն ժամանակակից հասարակության առանձնահատկությունների ընկալման մեջ: Սակայն «հետսպառողական հասարակությանը» բնորոշ է մի արմատական որակ, որը մինչ այդ գերակշռող չէր: Դա գիտելիքի և տեղեկության վրա հիմնված նոր տնտեսական համակարգն է[15]: Ընդ որում՝ խոսքը, իհարկե, զարգացած երկրների մասին է, որոնց հասարակությունները հաղթահարել են մարքսյան մեկնաբանությամբ՝ մասնավոր սեփականությամբ պայմանավորված «աշխատանքի օտարումը արտադրության միջոցներից» և «բանվոր դասակարգի աղքատացումը»:

Կատարված և ընթացող արմատական փոփոխություններն ու նվաճումներն ակնհայտ են, սակայն առկա սոցիալական և տնտեսական խնդիրների ազդեցությամբ նույնիսկ գիտական շրջանակներում անտեսվում է առանցքային մի փաստ. մարդկանց բարեկեցության աննախադեպ աճն ու ազատությունների ընդլայնումը իրականացվում են ոչ թե հակառակ «կապիտալիստական» տնտեսակարգի, այլ դրա բնականոն զարգացման շնորհիվ:

Յուրաքանչյուր մարդու նման տնտեսակարգը ևս ունի մանկություն՝ իրեն հատուկ անկարողություններով: Եվ եթե նույնիսկ XIX դ. վերջերին վեց տարեկան երեխան կողովը ուսին իջնում էր ածխի հանքախորշ, դրա պատճառը կապիտալիստ-ձեռնարկատերերի հարստության նկատմամբ անհագ ծարավը չէր կամ նրանց «բիրտ» ծնողների անհոգությունը: Բարոյական ու սոցիալական տեսանկյունից իրավացիորեն որպես արհավիրք ընկալվող այս դաժանության համար կապիտալիստ-ձեռնարկատերերին կամ ինքնին շուկայական համակարգին մեղադրելը նույնն է, ինչ ջրհեղեղի պատճառած ավերածությունների համար ձգողականության և շարժման քանակի պահպանման օրենքները պարսավանքի ենթարկելը: Այդպիսին էին ռեսուրսների օգտագործման արդյունավետության աստիճանը և աշխատանքի արտադրողականության մակարդակը: Իսկ դա պարտադրում էր ծնողի և հենց նույն երեխայի գոյությունը պահպանելու համար որպես ռեսուրս օգտագոր-

[15] Տե՛ս **Дракер П**. Посткапиталистическое общество // "Новая постиндустриальная волна на Западе: Антология". М., 1999, էջ 70-71:

ծել երեխայի ջանքերը: Ու հենց կապիտալիզմն էր, որ ապահովեց հայտնի աննախադեպ աճը:

Համարժեքային փոխանակության հիմքի վրա կառուցված ժամանակակից տնտեսակարգերը որոշակիորեն տարբերվում են թեկուզ XX դարի սկզբին գործառած տնտեսական կառուցվածքներից: Եվ սա անժխտելի է: Սակայն անհնար է անտեսել նաև այն իրողությունը, որ դրանց կենսագործունեությունն ապահովող հիմնական մեխանիզմը մնում է «laissez faire» շուկան: Ամենաէական առանձնահատկությունը, որը հընթացս ավելի է ընդգծվում, հետևյալն է՝ առաջընթացի հիմնական մղիչ ուժը բխում է ոչ թե զարգացած հասարակությունների սոցիալական կառուցվածքից, այլ անձից, ստեղծագործ անհատից, և որ ժամանակակից աշխարհը մարդուց պահանջում է ակտիվ գործունեություն՝ ուղղված ոչ միայն հասարակության, այլև առաջին հերթին սեփական անձի վերափոխմանը: Անկասկած է, որ նման մեկնաբանությունը աշխարհընկալման բնագավառում XIX դարի վաթսունականներից մարժինալիզմով սկիզբ առած արմատական տեղաշարժի բնականոն զարգացման արդյունք է:

Տնտեսական կառուցվածքների բնութագրման և սահմանազատման շարադրված սկզբունքների ու հատկանիշների կիրառումը արդյունավետ միջոց կդառնա ՀՀ-ում հաստատված կացությունն ախտորոշելու և ապաքինման միջոցներ գտնելու համար:

Բանալի բառեր – *տնտեսական համակարգ, փուլայնացում, արտադրողական ուժեր, հասարակական-տնտեսական ֆորմացիա, տնտեսական աճի փուլ, տնտեսական կառուցվածք*

ГАГИК ГАЛСТЯН – *Об идентификации экономических систем.* – Историческое развитие человечества делится на определённые этапы. Однако в экономической науке не выработана единая периодизация экономического роста и развития. Между тем она важна, в частности, чтобы точнее диагностировать постсоциалистические экономические структуры. В статье сравниваются различные подходы к этому вопросу,

Ключевые слова: *экономическая система, периодизация, производительные силы, общественно-экономическая формация, стадии экономического роста*

GAGIK GALSTYAN – ***On Identification of Economic Systems.*** – Historical development of mankind is divided into certain periods. Yet in the economic science, there is no accepted and unified approach concerning the periodization of economic growth and development. In the present article, a comparison of the approaches to such divisions is presented with the aim of more exact diagnostics of the post-socialistic economic structures.

Key words: *economic system, periodization, productive forces, socio-economic formation, stages of economic growth, economic structure*

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

ԴԱՎԻԹ ԱԲԳԱՐՅԱՆ

Հաճախորդների ներգրավումը և նրանց պահպանումը ցանկացած էլեկտրոնային խանութի (ԷԽ) հաջողության գրավականն են: Այդ առաջադրանքը հաջողությամբ կատարելու համար վաճառողներն առաջին հերթին պետք է հասկանան, թե ինչպես են առցանց սպառողները մտածում և գործում: Վերջինների վարքագծին վերաբերող հետազոտությունները գիտական աշխարհում մեծաթիվ են: Սպառողների կողմից ԷԱ-ի ընդունումը նույնպես հետազոտողների ուշադրության կենտրոնում է: Նրանք ԷԱ-ի ընդունման մոդելը (ԷԱԸՄ) կառուցում են՝ հիմնվելով Տեխնոլոգիայի ընդունման մոդելի[1] (ՏԸՄ) և Ողջամիտ գործողության տեսության[2] (ՈԳՏ) վրա ու վստահությունը և (կամ) ռիսկը ինտեգրում են ՏԸՄ-ին (օր.՝ Պավլոուն)[3]: Առաջարկվող մոդելը ինտեգրում է ընկալվող գինը և նախկին գործարքները ՏԸՄ-ի վրա հիմնված ԷԱԸՄ -ի հետ:

Գծ. 1-ում ներկայացված է առաջարկվող ԷԱԸՄ-ն՝ ըստ Պավլոուի մոդելի[4]: Վերջինս որպես սպառողների կողմից էլեկտրոնային առևտրի ընդունման հիմնական կառույցներ է առաջարկում մոդելի կախյալ փոփոխականները՝ գործարքային մտադրությունը (IT) և իրական գործարքային վարքագիծը: ՏԸՄ-ի փոփոխականները (ընկալվող օգտակարություն (PU) և օգտագործման ընկալվող դյուրինություն (PEOU)) տրվում են որպես ԷԱ-ի ընդունման հիմնական գործոններ, քանի որ ԷԱ-ն հիմնականում տեխնոլոգիական բնույթի է: Մոդելն ինտեգրում է ԷԱ-ի ընդունման լրացուցիչ հիմնական գործոններ, ինչպիսիք են վստահությունը (TRUST) և ընկալվող ռիսկը (RISK)՝ պայմանավորված ԷԱ-ի միջավայրին հատուկ անորոշությամբ: Դնելով այս փոփոխականները ՈԳՏ-ի նոմոլոգիական կառուցվածքի մեջ՝ Պավլոուն ստեղծել է համապարփակ ու հուսալի հետազոտական մոդել և հիմնավորել է այն փորձարարական (էմպիրիկ) տվյալներով:

---

[1] Տե՛ս **Davis, F. D.,** Perceived Usefulness, Perceived Ease of Use, and User Acceptance of Information Technology. MIS Quarterly, Vol. 13, № 3, 1989, էջ 319-339:

[2] Տե՛ս **Ajzen, I. and Fishbein, M.**, Understanding Attitudes and Predicting Social Behavior. Englewood Cliffs, 1980:

[3] Տե՛ս **Pavlou, P. A.,** Consumer acceptance of electronic commerce: integrating trust and risk with the technology acceptance model. International Journal of Electronic Commerce, № 7, 2003, էջ 80:

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 101–134:

Մենք ինտեգրում ենք ընկալվող գինը (PP) և նախկին գործարքները (PT)՝ որպես ԷԱ-ի ընդունման հիմնական գործոններ: Ընկալվող գինը՝ որպես ԷԱ-ի ընդունման հիմնական գործոն, հետազոտվել է Կիմի և Գուպտայի, Լիաոյի և Չեունգի և այլոց կողմից: Ի տարբերություն Կիմի և Գուպտայի, ովքեր համեմատել են տվյալ ԷԽ-ի ապրանքների ընկալվող գները այլ ԷԽ-ների ապրանքների ընկալվող գների հետ, մեր մոդելը դիտարկում է ԷԽ-ների ապրանքների ընկալվող գներն ավանդական խանութների ապրանքների ընկալվող գների հետ համեմատության մեջ[5]: Սա համահունչ է Լիաոյի և Չեունգի մոտեցմանը[6]: Ինչպես արդեն նշվել է, ՏԸՄ-ն ընկալվող գինը որպես ԷԱ կատարելու մտադրության որոշիչ գործոն չի համարում, քանի որ այն կիրառվում է աշխատանքային միջավայրի համար: Մոդելավորելով նախկին գործարքները որպես ԷԽ-ից կատարված գնումների թիվ՝ մենք առաջադրում ենք վարկած, որ դրանք ազդում են վարքագծային մտադրությունների վրա՝ արտացոլելով նախկին փորձերի արդյունքները:

Գծ. 1

Հետազոտական մոդել



[5] Տե՛ս **Kim, H.W. & Gupta, S.**, A comparison of purchase decision calculus between potential and repeat customers of an online store. Decision Support Systems, Vol. 47, 2009, էջ 478–479:

[6] Տե՛ս **Liao, Z. & Cheung, M.,** Internet-based e-shopping and consumer attitudes: an empirical study. Information & Management, 38, 2001, էջ 300-301:

Ըստ Պավլոուի՝ էլեկտրոնային առևտրի ընդունումը «սպառողների՝ ԷԽ-ների հետ էլեկտրոնային փոխանակման հարաբերությունների մեջ մտնելն է»[7]: Այս հարաբերությունը ներառում է երեք քայլ՝ ապրանքի վերաբերյալ տեղեկատվության ստացում, ապրանքային նախապատվությունների և անձնական տվյալների փոխանցում ու ապրանքի գնում՝ տրամադրելով տեղեկատվություն վճարային քարտի և առաքման հասցեի վերաբերյալ[8]: Փոխանակման հարաբերությունների այս երեք քայլերից կարևորը վերջինն է, քանի որ առանց դրա ԷԱ-ի ընդունումը ամբողջական չէ: Ավելին՝ ԷԱ-ի ընդունումը ներառում է ոչ միայն ապրանքի մեկանգամյա գնում, այլև դրա շարունակականություն: Հետևաբար, ԷԱ-ի ընդունման հետազոտությունները պետք է ներառեն և՛ սկսնակ, և՛ շարունակական գնորդներին:

Ըստ Պավլոուի՝ «**գործարքային մտադրությունը** սպառողի մտադրությունն է՝ մտնելու ԷԽ-ի հետ առցանց փոխանակման հարաբերությունների մեջ, ինչպիսիք են գործարար տեղեկատվության փոխանակումը, գործարար հարաբերությունների պահպանումը և գործարքների իրականացումը»[9]: Չիուն և ուրիշները տարբերակում են սկզբնական ու շարունակական գնումային մտադրություններ: Ըստ նրանց՝ «շարունակական գնումային մտադրությունը սուբյեկտիվ հավանականությունն է, որ սպառողը կշարունակի գնել ապրանքներ նույն առցանց վաճառողից: Ի հակադրություն դրա՝ սկզբնական գնումային մտադրությունը արտացոլում է հավանականությունը, որ պոտենցիալ սպառողն առաջին անգամ գնում կկատարի տվյալ առցանց վաճառողից»[10]: Քանի որ Պավլոուի սահմանումը[11] ներառում է «գործարքների իրականացումը», որը հոգնակի թվով է, կարելի է եզրակացնել, որ նա նկատի ունի և՛ սկսնակ, և՛ շարունակական գնորդներին, ինչը նաև հիմնավորվում է նրա օգտագործած տվյալներով: Շարունակական գնորդները ավելի լավ են ընկալում և գնահատում առցանց վաճառողին՝ շնորհիվ իրենց փորձի[12]: Հետևաբար, ԷԽ-ից սկզբնական գնում կատարելու մտադրությունը կտարբերվի շարունակական գնում կատարելու մտադրությունից: Չնայած այդ հանգամանքին՝ առաջարկվող մոդելը փորձում է գտնել գործոններ, որոնք ընդհանուր կլինեն սկզբնական և շարունակական գնումային մտադրությունների համար:

Համադրելով տարբեր ԷԱԸՄ-ներ՝ Չիուն և ուրիշները ստացել են աղյուսակ, որը ներկայացնում է այն գործոնները, որոնք ազդում են միայն սկզբնական, միայն շարունակական և համատեղ գնումային

---

[7] **Pavlou, P. A.**, նշվ. աշխ., էջ 71:

[8] Տե՛ս նույն տեղը, էջ 71-72:

[9] Նույն տեղում, էջ 72:

[10] **Chiu, C., Wang, E., Fang, Y. & Huang, H.,** Understanding customers' repeat purchase intentions in B2C e-commerce: the roles of utilitarian value, hedonic value and perceived risk. Info Systems J, 24, 2014, p. 89.

[11] Տե՛ս **Pavlou, P.A.**, նշվ. աշխ., էջ 72:

[12] Տե՛ս **Kim, H.W. & Gupta, S.,** նշվ. աշխ., էջ 479:

մտադրությունների վրա[13]: Ըստ այդ աղյուսակի՝ մեր կողմից առաջարկված մոդելի երկու կառույց՝ օգտագործման ընկալվող դյուրինությունը և վստահությունը, ունեն ազդեցություն սկզբնական գնումային մտադրության վրա, բայց չունեն ազդեցություն շարունակական գնումային մտադրության վրա: Ի հակադրություն դրա՝ Պավլոուն ստուգել է իր առաջարկած մոդելը՝ համատեղելով սկզբնական և շարունակական գնորդների տվյալները[14]: Ստացված արդյունքները ցույց են տալիս վստահության և օգտագործման ընկալվող դյուրինության ազդեցությունը գործարքային մտադրության վրա՝ չնայած օգտագործման ընկալվող դյուրինությունը ազդում է գործարքային մտադրության վրա հիմնականում ընկալվող օգտակարության միջոցով, որը հաշվի է առնված մեր մոդելում:

ԷԽ-ի հիմքը կայքն է, որը տեխնոլոգիա է: Հետևաբար, ԷԱ-ի ընդունումը կարելի է բացատրել **տեխնոլոգիայի ընդունման մոդելների** միջոցով, որոնցից առավել հայտնիներն են ՏԸՄ-ն, Տեխնոլոգիայի ընդունման և օգտագործման միասնական տեսությունը (ՏԸՕՄՏ)[15] և ՏԸՕՄՏ2-ն[16]: ՏԸՄ-ն առաջին անգամ առաջարկել է Դևիսը 1985 թ., իսկ 8 առավել հաջող ՏԸՄ-ների մետավերլուծությունը (ՏԸՕՄՏ) իրականացրել են Վենկատեշը և ուրիշներ 2003 թ.: Փորձը հաստատել է ՏԸՄ-ի համապարփակությունը և հուսալիությունը: Ճիշտ է, այս մոդելը ուսումնասիրում է ՏՏ-ի ընդունումը աշխատանքային միջավայրի համատեքստում, սակայն ՏԸՄ-ն հաջողությամբ կիրառվել է նաև ԷԱ-ի ոլորտում Պավլոուի[17], Գեֆենի և ուրիշների[18] ու այլ հեղինակների կողմից: 2012 թ. Վենկատեշը և այլք առաջարկել են ՏԸՕՄՏ2-ն, որն սպառողական միջավայրի համատեքստում է և ներառում է նոր գործոններ՝ պահպանելով ՏԸՄ-ի հիմնական կառույցները, որոնք ավելի մոտ են ԷԱԸՄ-ին:

ՏԸՄ-ի կախյալ փոփոխականը ՏՏ-ն օգտագործելու (ընդունելու) մտադրությունն է, որն ԷԱԸՄ-ի դեպքում գործարքային մտադրությունն է (IT): ՏՏ-ի օգտագործման մտադրության երկու որոշիչ գործոններն են ընկալվող օգտակարությունը (PU) և ՏՏ-ի օգտագործման ընկալվող դյուրինությունը (PEOU), որը մեր մոդելի դեպքում կլինի առցանց գնում կատարելիս կայքի օգտագործումը: ՏԸՄ-ում ընկալվող օգտակարությունը «հավատի մակարդակն է, որ տվյալ համակարգի օգտագործումը կհանգեցնի աշխատանքի արտադրողականության բարելավման»[19]: Հենվելով Դևիսի սահմանման վրա՝ ԷԱԸՄ-ում Պավլոուն սահմանում է ընկալվող

---

[13] Տե՛ս **Chiu, C., Wang, E., Fang, Y. & Huang, H.,** նշվ. աշխ., էջ 90:

[14] Տե՛ս **Pavlou, P. A.**, նշվ. աշխ., էջ 87-88:

[15] Տե՛ս **Venkatesh, V., Morris, M., Davis, G., and Davis, F.**, User Acceptance of Information Technology: Toward a Unified View. MIS Quarterly, vol. 27, № 3, 2003, էջ 425-478:

[16] Տե՛ս **Venkatesh, V., Thong, J. & Xu, X.,** Consumer acceptance and use of information technology: Extending the unified theory of acceptance and use of technology. MIS Quarterly, vol. 36, no. 1, 2012, էջ 157-178:

[17] Տե՛ս **Pavlou, P. A.**, նշվ. աշխ., էջ 69-103:

[18] Տե՛ս **Gefen, D., Karahanna, E. & Straub, D.W.**, Trust and TAM in Online Shopping: An Integrated Model. MIS Quarterly, Vol. 27, № 1, 2003, էջ 51-90:

[19] **Davis, F. D.,** նշվ. աշխ., էջ 320:

օգտակարությունը որպես «տվյալ ԷԽ-ի՝ գնման գործարքների իրականացմանը նպաստելու սպառողների ընկալման մակարդակ»[20]: ՏԸՄ-ում «օգտագործման ընկալվող դյուրինությունը ընկալման մակարդակն է, որ տվյալ համակարգի օգտագործումը կլինի անջանք»[21]: ԷԱԸՄ-ում օգտագործման ընկալվող դյուրինությունը տվյալ էլեկտրոնային խանութից առանց էական ջանքերի օգտվելու սպառողների ընկալման մակարդակն է: Ըստ Դևիսի՝ ընկալվող օգտակարությունը ուղղակիորեն է ազդում օգտագործման մտադրության վրա, բայց օգտագործման ընկալվող դյուրինությունը ազդում է անուղղակիորեն՝ ընկալվող օգտակարության միջոցով[22]: Գեֆենը և Ստրաուբը նույնպես ցույց են տվել, որ ազդեցությունը հիմնականում տեղի է ունենում այս կերպ[23]:

Հիմնվելով վերոնշյալ սահմանումների վրա՝ առաջարկում ենք հետևյալ վարկածները.

Վ1. Ընկալվող օգտակարությունը դրականորեն կազդի ԷԽ-ի հետ գործարք կատարելու մտադրության վրա,

Վ2. Ընկալվող դյուրինությունը դրականորեն կազդի ընկալվող օգտակարության վրա,

Վ3. Ընկալվող դյուրինությունը դրականորեն կազդի գործարքային մտադրության վրա:

Վստահությունը (TRUST) «սպասում է, որ ուրիշները, որոնց անձը որոշում է վստահել, չեն գտնվի պատեհապաշտ՝ օգտվելով ստեղծված իրավիճակից»[24]: Հետևելով ՄքՆայթին և նրա գործընկերների աշխատանքին՝ Պավլոուն B2C ԷԱ-ի նկատմամբ վստահությունը բնորոշում է որպես «հավատ, որը թույլ է տալիս սպառողներին իրենց կամքով դառնալ ԷԽ-ից խոցելի՝ ԷԽ-ի բնութագրերը հաշվի առնելուց հետո»[25]: Վստահության հարցն առաջանում է միայն անորոշ միջավայրում, քանի որ այն գործնականում նշանակում է դառնալ խոցելի վստահվող կողմի համար՝ գիտակցելով դրա հետ կապված ռիսկերը[26]: Եթե սպառողները հավատում են, որ ԷԽ-ն դրսևորում է բանիմացություն, ազնվություն և բարի կամք ու չի պատրաստվում պատեհապաշտ վարքագիծ դրսևորել, վստահությունն ԷԽ-ի նկատմամբ կաճի:

Քանի որ երաշխիքի մի մասը, որ սպառողները կստանան իրենց սպասած օգտակարությունը, կախված է ԷԽ-ի հետևում կանգնած մարդկանցից, վստահությունը նաև ընկալվող օգտակարության վրա ազդող գործոն է: Եթե սպառողները չեն վստահում ԷԽ-ին, նրանք չեն

---

[20] **Pavlou, P. A.,** նշվ. աշխ., էջ 76:

[21] **Davis, F. D.,** նշվ. աշխ., էջ 320:

[22] Տե՛ս նույն տեղը, էջ 333-334:

[23] Տե՛ս **Gefen, D., and Straub, D. W.,** The relative importance of perceived ease-of-use in IS acceptance: A study of e-commerce acceptance. Journal of AIS, Vol. 1, № 8, 2000, էջ 18-20:

[24] **Gefen, D., Karahanna, E. & Straub, D. W.,** նշվ. աշխ., էջ 54:

[25] **Pavlou, P. A.**, նշվ. աշխ., էջ 74:

[26] Տե՛ս **Hosmer, L. T.,** Trust: The connection link between organizational theory and philosophical ethics. Academy of Management Review, 20, 2, 1995, էջ 390-392:

ակնկալի ստանալ որևէ օգտակարություն տվյալ ԷԽ-ի օգտագործումից: Այդ իսկ պատճառով վստահությունը դրականորեն է ազդում ընկալվող օգտակարության վրա, քանի որ այն սպառողին դարձնում է ԷԽ-ից խոցելի՝ ապահովելով ակնկալվող օգտակարության ստացում գործարքի իրականացմամբ:

Չիրքյուն և մյուսները նաև պնդում են, որ ԷԽ-ի նկատմամբ վստահությունը դրականորեն է ազդում օգտագործման ընկալվող դյուրինության վրա[27]: Երբ ԷԽ-ի նկատմամբ սպառողների վստահության մակարդակը ցածր է, նրանք ավելի շատ ժամանակ են ծախսում ուսումնասիրելու ու գնահատելու ԷԽ-ի հետ գործարքների իրականացումը: Հետևաբար՝ վստահության բարձր մակարդակը կրճատում է առցանց գործարքի և ԷԽ-ի գործողությունների բոլոր կողմերի ստուգման անհրաժեշտությունը, ինչը գնում կատարելու գործընթացը դարձնում է ավելի հեշտ:

Բացի վերոնշյալներից՝ գոյություն ունի ուժեղ հակադարձ կապ ԷԽ-ի նկատմամբ վստահության և ընկալվող ռիսկի միջև[28]: Որքան բարձր է սպառողների վստահությունը ԷԽ-ի նկատմամբ, այնքան ցածր է ընկալվող ռիսկը, և հակառակը: Թե այս կառույցներից որն է մյուսի անտիսեդանտը, տարբեր հետազոտություններ տարբեր պատասխաններ են տվել: 2015 թ. Մոուի և ուրիշների իրականացրած 67 հետազոտությունների մետավերլուծությունը ցույց է տալիս, որ ընկալվող ռիսկի անտիսեդանտը վստահությունն է, որն էլ հիմք կընդունվի մեր կողմից[29]:

Վերոնշյալ փաստարկները հիմք են տալիս առաջադրելու հետևյալ վարկածները.

Վ4. ԷԽ-ի նկատմամբ վստահությունը դրականորեն կազդի սպառողի գործարքային մտադրության վրա,

Վ5. Վստահությունը դրականորեն կազդի ընկալվող օգտակարության վրա,

Վ6. Վստահությունը դրականորեն կազդի օգտագործման ընկալվող դյուրինության վրա,

Վ7. Վստահությունը բացասականորեն կազդի ընկալվող ռիսկի վրա:

Առցանց գնորդի **ընկալվող ռիսկը (RISK)** առցանց գնում կատարելիս անցանկալի արդյունքների ստացման հավանականության ընկալումն է: Անորոշ և կասկածելի իրավիճակները վախեցնում են անհատներին՝ ստիպելով նրանց խուսափել նման իրավիճակներից[30]: Սա պատահում է այն ժամանակ, երբ գնորդը չի կարողանում ամբողջովին վերահսկել ԷԽ-ի գործողությունները կամ վստահ լինել, որ առցանց գնումն անվտանգ է:

---

[27] Տե՛ս **Chircu, A. M., Davis, G. B., and Kauffman, R. J.,** Trust, Expertise and E-Commerce Intermediary Adoption," in the Proceedings of the 2000 Americas Conference on Information Systems, Long Beach, CA, August 10-13, 2000, էջ 712:

[28] Տե՛ս **Pavlou, P. A.**, նշվ. աշխ., էջ 79-80

[29] Տե՛ս **Mou, J., Shin, D. & Cohen, J.,** Trust and risk in consumer acceptance of e-services. Springer Science+Business Media, New York, 2015, էջ 1:

[30] Տե՛ս **Hofstede, G.**, Dimensionalizing Cultures: The Hofstede Model in Context. Online Readings in Psychology and Culture, 2, 1, 2011, էջ 10:

Ընկալվող ռիսկը չափելու համար Չիուն և ուրիշներ ուշադրություն են դարձնում բացասական արդյունքներ ստանալու կամ կորուստ ունենալու հավանականության վրա՝ ըստ չորս ցուցանիշների՝ ֆինանսական կորուստ, ապրանքի պիտանելիություն, անձնական տվյալների անվտանգություն և ապրանքների առաքում[31]: Ֆինանսական ռիսկը վերաբերում է ֆինանսական կորուստ կրելու հավանականությանը՝ պայմանավորված թաքնված ծախսերով, պահպանման ծախսերով կամ էլ երաշխիքի բացակայությամբ: Պիտանելիության ռիսկը վերաբերում է հավանականությանը, որ գնված ապրանքը պիտանի չի լինի ընդհանրապես կամ չի համապատասխանի կայքում ներկայացված բնութագրերին: Անձնական տվյալների գաղտնիության ռիսկը դրանց վերահսկողության հնարավոր կորուստն է: Ապրանքի առաքման ռիսկը կորուստ կրելու հավանականությունն է՝ պայմանավորված ԷԽ-ից ապրանքի առաքումը ձախողելով կամ շատ ուշացնելով:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ ակնկալվում է, որ ընկալվող ռիսկը կնվազեցնի սպառողների՝ ԷԽ-ներից գնումներ կատարելու մտադրությունը, այդ իսկ պատճառով առաջադրում ենք հետևյալ վարկածը՝

Վ8. Ընկալվող ռիսկը բացասաբար կազդի գործարքային մտադրության վրա:

Ընկալվող գինը (PP) որպես ԷԱ-ի ընդունման վրա ազդող հիմնական գործոն հետազոտվել է Կիմի և Գուպտայի[32], Լիաոյի և Չեունգի[33] և այլոց կողմից: Մանրածախ գինն առցանց և ավանդական խանութներում առաջարկվող գինն է և չի ներառում առաքման համար վճարումը: Ընկալվող գինը մանրածախ գնի ընկալումն է ելակետային գնի համեմատությամբ, որը մեր դեպքում ավանդական խանութում ապրանքի գինն է: ՏԸՄ-ն չի ներառում ընկալվող գինը՝ որպես ՏՏ օգտագործման մտադրության վրա ազդող հիմնական գործոն, քանի որ այդ մոդելը կիրառվում է աշխատանքային միջավայրի համար, իսկ այդ դեպքում նոր տեխնոլոգիայի ձեռքբերման և շահագործման հետ կապված ծախսերը հոգում է կազմակերպությունը: Ի հակադրություն դրա՝ ԷԱ-ն ունի իր ծախսերը, որոնք պետք է հաշվի առնեն սպառողները: Համակարգիչ կամ խելացի հեռախոս ձեռք բերելու, պահպանելու և ինտերնետ բաժանորդագրության ծախսերը անտեսելու դեպքում ԷԱ-ի՝ որպես տեխնոլոգիայի օգտագործումն անվճար է, սակայն սպառողը կարող է օգուտ ունենալ կամ վնաս կրել՝ պայմանավորված ԱԽ-ների և ԷԽ-ների գնային տարբերություններով: Այս օգուտը կամ վնասն ԷԱ-ի գինն է, որն սպառողները միշտ հաշվի են առնում: Վերոնշյալը համահունչ է Վենկատեշի և այլոց հետազոտությանը, որը ընկալվող գինը դիտարկում է որպես տեխնոլոգիայի ընդունման և օգտագործման հիմնական

[31] Տե՛ս **Chiu, C., Wang, E., Fang, Y. & Huang, H.,** նշվ. աշխ., էջ 94:
[32] Տե՛ս **Kim, H.W. & Gupta, S.,** նշվ. աշխ., էջ 478–479:
[33] Տե՛ս **Liao, Z. & Cheung, M.,** նշվ. աշխ., էջ 300-301:

գործոն սպառողական համատեքստում[34]: Հետևաբար՝ ընկալվող գինն ուղղակի ազդեցություն ունի գործարքային մտադրության վրա:

Հիմք ընդունելով Մտային հաշվապահական տեսությունը (ՄՀՏ)՝ Թալերը օբյեկտիվ գնի և ելակետային գնի միջև տարբերությունը սահմանում է որպես գործարքային օգտակարություն, որը կազմում է ընդհանուր օգտակարության մաս[35]: Վերջինս նույնական է մեր մոդելի՝ ընկալվող օգտակարություն կառույցի հետ: Սպառողները հակված են ձևավորելու ելակետային գինն այլ վաճառողների կողմից առաջարկվող գների հիման վրա[36]: Փորձը ցույց է տալիս, որ սպառողները հակված չեն հիշելու գնվելիք ապրանքի իրական գինը[37]: Նրանք միայն համեմատում են գնվելիք ապրանքի գինը իրենց ձևավորած ելակետային գնի հետ[38]: Կարևոր է նշել, որ ընկալվող գինը կարող է ցույց տալ օբյեկտիվ գնից էապես տարբերվող պատկեր: Օրինակ՝ ընդամենը մի ապրանքի գնային համեմատության հիման վրա սպառողը կարող է եզրակացնել, որ ԷԽ-ի առաջարկած գները ավելի բարձր են, քան ԱԽ-ների գները, բայց իրականում պատկերն այդպիսին չլինի: Այդ իսկ պատճառով մենք դիտարկում ենք ոչ թե օբյեկտիվ գինը, այլ ընկալվող գինը՝ որպես գործարքային մտադրության վրա ազդող գործոն:

ԱԽ-ների համեմատությամբ ԷԽ-ի ապրանքների գների նվազումը և դրա ընկալումը սպառողների կողմից կմեծացնեն գործարքային օգտակարությունը, հետևաբար նաև ընդհանուր օգտակարությունը[39]: Այսինքն՝ ընկալվող գինը դրականորեն է ազդում ընկալվող օգտակարության վրա: Թեև առաջինը երկրորդի մի մասն է, այն գործարքային մտադրության վրա ազդող առանձին գործոն դիտելը հիմնավորվում է հետևյալ փաստարկով. եթե նույնիսկ տվյալ ԷԽ-ի գները ավելի բարձր լինեն, քան ԱԽ-ների գները, սպառողները կարող են ԷԽ-ն օգտակար համարել այլ պատճառներով (առանց գնման վայր այցելելու գնում կատարելու հնարավորություն, մեծ տեսականի և այլն):

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ առաջադրում ենք հետևյալ կապերը՝

Վ9. Ընկալվող գինը դրականորեն կազդի սպառողի գործարքային մտադրության վրա,

Վ10. Ընկալվող գինը դրականորեն կազդի ընկալվող օգտակարության վրա:

Աջզենն ու Ֆիշբեյնը նշում են, որ տարբեր ընկալումները և որպես

---

[34] Տե՛ս **Venkatesh, V., Thong, J. & Xu, X.,** նշվ. աշխ., էջ 158-159:

[35] Տե՛ս **Thaler, R.,** Mental Accounting Matters. Journal of Behavioral Decision Making, 12, 1999, էջ 188-189:

[36] Տե՛ս **Kim, H. W. & Gupta, S.**, նշվ. աշխ., էջ 478:

[37] Տե՛ս **Zeithaml, V. A.,** Consumer perceptions of price, quality and value: a means-end model and synthesis of evidence. Journal of Marketing, 52, 3, 1988, էջ 10-11:

[38] Տե՛ս **Dodds, W. B., Monroe, K. B., Grewal, D.,** Effects of price, brand and store information on buyers' product evaluations. Journal of Marketing Research, 28, 3, 1991, էջ 308:

[39] Տե՛ս **Kim, H. W. & Gupta, S.,** նշվ. աշխ., էջ 478:

հետևանք՝ ապագա վարքագծային դրսևորումները կազդվեն նախկին փորձերի արդյունքներից[40]: Փորձելով առավելագույնի հասցնել ձեռքբերումները և նվազագույնի հասցնել կորուստները՝ հաճախորդները դաս են քաղում յուրաքանչյուր գործարքից և դրսևորում համապատասխան վարքագիծ, երբ հաջորդ անգամ հանդիպում են նմանատիպ իրավիճակի: Այսպիսով՝ որպես նախկին փորձերի արդյունքներ՝ **նախկին գործարքները (PT)** ազդում են վարքագծային մտադրությունների վրա: Բացի այդ՝ նախկին գործարքները դրական ազդեցություն են թողնում նաև օգտագործման ընկալվող դյուրինության և վստահության վրա: Տրամաբանական է, որ որքան սպառողները շատ են օգտվում տվյալ ԷԽ-ից, այնքան ավելի հեշտությամբ գնում կկատարեն այդտեղից և ավելի շատ կվստահեն այդ ԷԽ-ին:

Հիմք ընդունելով մինչ այդ առկա հետազոտական փորձը՝ մենք մոդելավորում ենք նախկին գործարքները որպես ԷԽ-ից կատարած գնումների թիվ՝ առանց որևէ ժամկետային սահմանափակման: Ի հակադրություն ՏԸՕՄՏ2 մոդելի, որտեղ գնումների փորձը սկզբնական գնումից հետո անցած ժամանակն է[41], մենք որպես նախկին փորձը բնութագրող ցուցանիշ ենք օգտագործում գնումների թիվը, քանի որ ԷԱ-ի դեպքում գնումների հաճախությունն ավելի կարևոր է, քան սկզբնական գնումից հետո անցած ժամանակը: Ի տարբերություն սովորույթ կառույցի, որն ԷԱ-ի դեպքում կբնորոշվի որպես ԷԽ-ից գնումներ կատարելուն սովոր լինելու աստիճանի սպառողական ընկալում և հետևաբար կլինի սուբյեկտիվ. նախկին գործարքը նախկին փորձի օբյեկտիվ չափում է, չնայած հիմնված է սպառողների հաղորդած տվյալների վրա, որոնք կարող են պարունակել անճշտություններ: Հենվելով վերոնշյալ հիմնավորումների վրա՝ առաջադրում ենք հետևյալ վարկածը՝

Վ11. Նախկին գործարքները դրականորեն կազդեն գործարքային մտադրության վրա,

Վ12. Նախկին գործարքները դրականորեն կազդեն վստահության վրա,

Վ13. Նախկին գործարքները դրականորեն կազդեն օգտագործման ընկալվող դյուրինության վրա:

Հնարավոր այլ ազդեցությունները վերահսկելու համար առանձնացվել են երկու **վերահսկող փոփոխականներ**՝ սեռը և տարիքը: Այս գործոնների ազդեցությունը գործարքային մտադրության վրա ուսումնասիրվել է բազմաթիվ հետազոտողների կողմից (օրինակ՝ Չիու և ուրիշներ)[42]:

---

[40] Տե՛ս **Ajzen, I. and Fishbein, M.,** The Influence of Attitudes on Behavior. The Handbook of Attitudes, 2005, էջ 201-202:

[41] Տե՛ս նույն տեղը, էջ 201-202:

[42] Տե՛ս **Chiu, C., Wang, E., Fang, Y. & Huang, H.,** նշվ. աշխ., էջ 103:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հիմնական կառույցների մեծ մասը հարմարեցվել են գոյություն ունեցող չափումներին, իսկ մնացածը՝ մշակվել մեր կողմից: Ընկալվող օգտակարությունը և օգտագործման ընկալվող դյուրինությունը չափող հարցերը վերցվել են Պավլոուից[43], իսկ վստահությունը և գործարքային մտադրությունը՝ Պավլոուից[44] ու Գեֆենից և ուրիշներից[45]: Ընկալվող ռիսկի բազմաչափային բնույթը ուսումնասիրել են Ֆեդերմանը և Պավլոուն[46]: Սակայն մենք ընկալվող ռիսկը դիտարկում ենք որպես միաչափ կառույց՝ ներառելով ռիսկի չորս տարբեր խմբեր՝ ֆինանսական կորուստ, ապրանքի պիտանելիություն, անձնական տվյալների անվտանգություն և ապրանքների առաքում: Նախկին գործարքներ կառույցի հարցերը հարմարեցվել են Չիուի և ուրիշների մշակումներին[47], իսկ ընկալվող գնինը մշակել ենք մենք: Բացի նախկին գործարքներից, սեռից և տարիքից՝ բոլոր չափողական հարցերը օգտագործել ենք «Բացարձակապես այդպես չէ»-ից (1 միավոր) մինչև «Միանշանակ այդպես է» (7 միավոր) տարբերակներն ունեցող Լայկերտի 7-բալային սանդղակը: Նախկին գործարքներ կառույցն ունեցել է «Գնում չեմ կատարել»-ուց (1 միավոր) մինչև «6 և ավելի անգամ» (5 միավոր) 5-բալային սանդղակ: Տարիք կառույցը չափվել է «18-24»-ից (1 միավոր) մինչև «45-54» (4 միավոր) տարբերակներն ունեցող 4-բալային սանդղակով, իսկ սեռը կոդավորվել է որպես կեղծ փոփոխական (1 միավոր (տղամարդ), 2 միավոր (կին)):

Հետազոտական մոդելը ստուգվել է «Facebook»-ի հայաստանյան օգտատերերից առցանց հարցաթերթով ստացված տվյալների հիման վրա: Մասնակցել է 1000-ից ավելի մարդ, որոնցից ընտրվել են 600-ը՝ ստանալու համար ամսվա կտրվածքով ակտիվ հայաստանյան 18-54 տարեկան «Facebook» օգտատերերի համախմբի ներկայացուցչական ընտրանքը (համախումբը՝ 830.000 մարդ): Այդ համախմբի ժողովրդագրական տվյալները ստանալու համար «Facebook Audience Insights»-ն է օգտագործվել[48]: Համախմբի տվյալ չափի պայմաններում 95 % վստահելիության մակարդակի վրա ընտրանքի սխալը 4 % է[49]: 55 և ավելի տարեկան անձինք չեն ընտրվել վերջնական ընտրանքում բավարար ներկայացուցչականություն չապահովելու պատճառով:

Քանի որ աշխատանքը նպատակ է հետապնդում հետազոտել և՛ սկսնակ, և՛ շարունակական գնորդների գործարքային մտադրություն-

---

[43] Տե՛ս **Pavlou, P. A.,** նշվ. աշխ., էջ 101:

[44] Տե՛ս նույն տեղը, էջ 101:

[45] Տե՛ս **Gefen, D., Karahanna, E. & Straub, D. W.**, նշվ. աշխ., էջ 84-85:

[46] Տե՛ս **Featherman, M. S. & Pavlou, P. A.,** Predicting e-services adoption: a perceived risk perspective. International Journal of Human-Computer Study, 59, 2003, էջ 1036:

[47] Տե՛ս **Chiu, C., Wang, E., Fang, Y. & Huang, H.,** նշվ. աշխ., էջ 97-98:

[48] Տե՛ս **Facebook Audience Insights**, Armenia. https://www.facebook.com/ads/audience-insights/people?act=149157950&age=18-&country=AM:

[49] Տե՛ս **The Survey System**, Sample Size Calculator, http://www.surveysystem.com/sscalc.htm

ները, սկսնակ գնորդների՝ անտեղյակ լինելով պատասխանելու խնդիրը պետք է հաշվի առնվեր հարցման ժամանակ: Այս նպատակով ստեղծվել էր կայքէջ, որտեղ բոլոր մասնակիցները կատարել են երկու քայլ: Առաջին, եթե նրանք արդեն գնում էին կատարել այն կայքից, որի մասին հարցերին պատրաստվում էին պատասխանել, նրանք անցնելու էին հարցաթերթի լրացման քայլին, հակառակ դեպքում նրանք պետք է այցելեին տվյալ կայքը, փորձեին փնտրել ինչ-որ ապրանք և գնել այն, բայց դադարեցնեին գործարքը, երբ կայքն անձնական տվյալներ կպահանջեր գործարքն ավարտին հասցնելու համար: Այնուհետև նրանք պետք է լրացնեին հարցաթերթը:

Հարցման մասնակիցներին տրվել է հնարավորություն՝ ընտրելու 6 առցանց խանութներից մեկը (երկու միջազգային և չորս տեղական) և պատասխանելու դրա վերաբերյալ համապատասխան հարցերին: «Ebay.com»-ն և «Aliexpress.com»-ն ընտրվել են որպես միջազգային կայքեր, քանի որ դրանք համաշխարհային մանրածախ վաճառքի ամենամեծ հարթակների շարքում են: «Amazon.com»-ը չի ընտրվել, քանի որ այն չունի ուղիղ առաքում դեպի Հայաստան: «Buy.am», «Eli.am», «Menu.am» և «Sas.am» կայքերն ընտրվել են որպես տեղական կայքեր: Բոլոր չորս կայքերն ունեն ապրանքների մեծ տեսականի և ամսական այցելությունները հարցում իրականացնելու ժամանակ գերազանցում էին 30.000-ը[50]: Միջազգային կայքերը կազմում են ընտրանքի մոտ 40 %-ը, իսկ սկսնակ գնորդները՝ մոտ 30 %-ը:

Տարբեր կայքերի ընտրության և սկսնակ ու շարունակական գնորդների ներառման նպատակն է ստուգել հետազոտական մոդելը ոչ միայն մեկ կայքի համար, որը սովորաբար արվում է նմանատիպ հետազոտությունների դեպքում, այլև միանգամից մի քանի կայքերի: Սա հնարավորություն կտա տեսնելու, թե որ կառույցներն են ընդհանրացնելի սկսնակ և շարունակական գնորդների ու տարբեր կայքերի համար:

Հետևելով Անդերսոնի և Գերբինգի խորհրդին՝ **տվյալների վերլուծությունն** իրականացվել է երկքայլանի մոտեցմամբ[51]: Առաջին քայլում վերլուծվել է չափողական մոդելը՝ պարզելու չափումների հուսալիությունը և վավերականությունը: Երկրորդ քայլում գնահատվել են մոդելի կառուցվածքային կապերը: Տվյալների վերլուծության համար օգտագործվել է SmartPLS 3.2.4 ծրագիրը:

Հուսալիությունը, զուգամետ և տարամետ վավերականությունները օգտագործվել են գնահատելու համար չափողական մոդելի համարժեքությունը: Հուսալիությունը չափվել է Բաղադրյալ հուսալիության և Կրոնբախի ալֆա գործակիցների միջոցով, որոնք ցույց են տվել մոդելի հուսալիության բարձր մակարդակը: Զուգամետ վավերականությունը

[50] Տե՛ս **Similar Web**, https://www.similarweb.com/:

[51] Տե՛ս **Anderson, J. C. & Gerbing, D. W.,** Structural equation modeling in practice: a review and recommended two-step approach. Psychological Bulletin, 103, 1988, էջ 411–423:

գնահատվել է երկու չափանիշի միջոցով՝

1. բոլոր ցուցանիշների (հարցերի) բեռնավորումները պետք է լինեն նշանակալի և գերազանցեն 0.7 արժեքը,

2. ստացվող միջին շեղումը (ՍՄՇ), ըստ յուրաքանչյուր կառույցի, պետք է գերազանցի այդ կառույցի չափման սխալի պատճառով առաջացող վարիացիան (այսինքն՝ ՍՄՇ-ն պետք է գերազանցի 0.5-ը):

Բոլոր հարցերը ցույց են տվել նշանակալի և 0.7-ից բարձր բեռնավորում իրենց համապատասխան կառույցի վրա, և բոլոր ՍՄՇ-ները ընկած են եղել 0.67-0.88 միջակայքում:

Տարամետ վավերականությունը գնահատելու համար համադրվել են երեք մոտեցում: Այն գնահատելու ամենատարածված ձևերից են Ֆորնել-Լարկերի չափանիշը, խաչաձև բեռնավորումների զննությունը և կոռելյացիաների տարագիծ-միագիծ հարաբերությունը (ԿՏՄՀ), որոնց երեքի դեպքում էլ ապահովվել է մոդելի տարամետ վավերականությունը:

Առաջարկվող մոդելը զննելու համար կիրառվել է Մասնակի փոքրագույն քառակուսիների (ՄՓՔ) եղանակը: ՄՓՔ-ն նվազագույն սահմանափակումներ է դնում չափման սանդղակների և մնացորդների բաշխման վրա[52]:

Գնահատելով կառուցվածքային մոդելի բացատրական հզորությունը՝ այն հնարավորություն է տալիս համաժամանակյա վերլուծություն կատարել՝ հասկանալու համար, թե ինչքանով են հարցերը լավ կապված իրենց համապատասխան կառույցների հետ, և արդյոք առաջադրված կառուցվածքային կապերը փորձարարապես ճիշտ են: Գծ. 2-ում պատկերված են կառուցվածքային կապերի վերլուծության արդյունքները: Բոլոր կապերը ցույց են տալիս ընդհանուր ազդեցությունը՝ ներառելով ուղղակի և անուղղակի ազդեցությունները: Կապերի նշանակալիությունը գնահատվել է 5000 բութստրափների միջոցով: Բոլոր կապերը վիճակագրորեն նշանակալի են $p<0.01$ նշանակալիության մակարդակի վրա, բացի օգտագործման ընկալվող դյուրինության և սեռի գործարքային մտադրության վրա ունեցած ուղղակի ազդեցություններից: Հենքային մոդելը բացատրում է գործարքային մտադրության շեղման 58.9%-ը: Հետևաբար՝ առաջարկվող մոդելի պիտանելիությունը (fit) բավականաչափ բարձր է, ինչը վկայում է մոդելի կանխատեսումային ներուժի մասին:

Ինչպես երևում է գծ. 2-ից, ընկալվող օգտակարությունը (b (կապի գործակից) = 0.228, $p < 0.01$) նշանակալիորեն կանխատեսում է գործարքային մտադրությունը: Օգտագործման ընկալվող դյուրինությունը (b = 0.365, $p < 0.01$) ցույց է տալիս վիճակագրորեն նշանակալի ազդեցություն

[52] Տե՛ս **Chin, W. W., and Newsted, P. R.,** Structural Equation Modeling Analysis with Small Samples Using Partial Least Squares . Statistical Strategies for Small Sample Research, Rick Hoyle (ed.), Thousand Oaks, CA: Sage Publications, 1999, էջ 314:

ընկալվող օգտակարության վրա: Այս արդյունքները հաստատում են ՏԸՄ-ի ազդեցությունը առցանց գործարքային մտադրության վրա՝ ապահովելով Վ1-ի և Վ2-ի ճշմարտացիությունը: Վստահությունը (b = 0.362, p < 0.01) և ռիսկը (b = -0.077, p < 0.01) նույնպես վիճակագրորեն նշանակալի ազդեցություն ունեն գործարքային մտադրության վրա՝ ապահովելով Վ4-ի և Վ8-ի ճշմարտացիությունը համապատասխանաբար: Վստահության ազդեցությունն ընկալվող օգտակարության (b = 0.528, p < 0.01), օգտագործման ընկալվող դյուրինության (b = 0.501, p < 0.01) և ընկալվող ռիսկի վրա (b = -0.458, p < 0.01) շատ ուժեղ է՝ ապահովելով Վ5-ի, Վ6-ի և Վ7-ի ճշմարտացիությունը: Ընկալվող գինը (b = 0.388, p < 0.01) գործարքային մտադրության վրա ամենամեծ ազդեցությունն ունեցող գործոնն է (Վ9): Այն ազդում է գործարքային մտադրության վրա ոչ միայն ուղղակի, այլև ընկալվող օգտակարության (b = 0.308, p < 0.01) միջոցով (Վ10): Նախկին գործարքները (b = 0.308, p < 0.01) նույնպես ունեն ուժեղ ազդեցություն գործարքային մտադրության վրա (Վ11): Իր հերթին, դրա ազդեցությունը գործարքային մտադրության վրա տեղի է ունենում նաև անուղղակի ձևով՝ օգտագործման ընկալվող օգտակարության (b = 0.331, p < 0.01) և վստահության միջոցով (b = 0.304, p < 0.01) (Վ12 և Վ13): Միայն մի վերահսկող փոփոխականը՝ տարիքը (b = -0.099, p < 0.01), վիճակագրորեն նշանակալի ազդեցություն ունի գործարքային մտադրության վրա:

Գծ. 2

Մասնակի փոքրագույն քառակուսների մեթոդի կիրառմամբ ստացվող արդյունքները



Այս **հետազոտության հիմնական ներդրումն** է նոր փոփոխականների (ընկալվող գին և նախկին գործարքներ) ինտեգրումը ԷԱ-ի ընդունման կառույցների հետ համահունչ և համապարփակ մոդելի մեջ, որը կանխատեսում է ԷԱ-ի ընդունումը: Առաջարկվող մոդելի պիտանելիության հաստատումը հարստացնում է ԷԱ-ի ընդունման տեսությունը:

Անկախ փոփոխականների միջև, ինչպես նաև գործարքային մտադրության հետ՝ տեսականորեն մշակված մեծ թվով կապերի ամբողջություն ձևավորելու շնորհիվ փորձարարապես հաստատվել են մի շարք նոր կապեր:

Առաջին՝ ցույց է տրվում, որ ընկալվող գինը գործարքային մտադրության վրա ուղղակիորեն ազդող ուժեղ գործոն է նաև ՏՀՄ-ի վրա հիմնված ԷԱՀՄ-ի դեպքում՝ հաստատելով ԱԽ-ների նկատմամբ ԷԽ-ների գնային առավելություն ունենալու կարևորությունն սպառողների կողմից ԷԱ-ի ընդունման գործում: Ընկալվող գինն ազդում է գործարքային մտադրության վրա նաև անուղղակիորեն՝ ընկալվող օգտակարության միջոցով:

Երկրորդ, նախկին գործարքներն ունեն ուժեղ ազդեցություն գործարքային մտադրության վրա, ինչպես նաև վստահության և օգտագործման ընկալվող դյուրինության վրա, ինչը տրամաբանական է: Փորձի ձեռքբերման շնորհիվ՝ առցանց հաճախակի գործարքները տվյալ ԷԽ-ի հետ կբարձրացնեն օգտագործման ընկալվող դյուրինության և վստահության մակարդակները:

Երրորդ՝ օգտագործման ընկալվող դյուրինությունն ունի վիճակագրորեն նշանակալի ուժեղ ազդեցություն ընկալվող օգտակարության վրա և վիճակագրորեն ոչ նշանակալի ազդեցություն՝ գործարքային մտադրության վրա նույնիսկ ընկալվող օգտակարության միջոցով:

Չորրորդ՝ ի հակադրություն սեռի՝ տարիքն ունի նշանակալի ազդեցություն գործարքային մտադրության վրա: Մեր արդյունքները ցույց են տալիս, որ ավելի երիտասարդ գնորդներն ունեն ավելի բարձր մակարդակի գործարքային մտադրություն՝ ի հակադրություն ավելի բարձր տարիքի գնորդների:

Եվ վերջապես՝ ՄՓՔ-ի կիրառման արդյունքները ցույց են տալիս, որ վստահությունը, ռիսկը և ընկալվող օգտակարությունը ունեն ուժեղ ազդեցություն գործարքային մտադրության վրա ու ռիսկի և վստահության միջև գործում է ուժեղ հակադարձ կապ:

Այս հետազոտության մեջ ներկայացված մոդելն ունի երկու **հիմնական սահմանափակում**: Առաջին՝ այն փորձարարապես չի հաստատում գործարքային մտադրության և իրական գործարքային վարքագծի միջև կապը: Երկրորդ՝ օգտագործվել է «Facebook»-յան օգտատերերի համախմբի ներկայացուցչական ընտրանքը, որը ՀՀ-ում ինտերնետից օգտվողների համախմբի միայն մի մասն է կազմում:

Բանալի բառեր – *էլ. առևտուր, առցանց, սպառողներ, մոդել, գործարքային վարքագիծ, PLS*

ДАВИД АБГАРЯН – ***Усвоение электронной коммерции в РА.*** – Усвоение потребителями электронной торговли – решающий фактор для её развития на локальном или глобальном уровне. В статье изучаются обстоятельства, влияющие на первоначальное и повторные покупательские намерения онлайн-потребителей. Предлагается модель, которая интегрирует воспринимаемую ими цену и прошлые сделки с моделью усвоения электронной коммерции, предложенную в 2003 г. П. Павлоу. Насколько известно, прежние исследования не интегрировали упомянутые факторы с моделями, опирающимися на модель усвоения технологии. Анализ показывает, что воспринимаемая цена и прошлые сделки стимулируют намерение совершать электронные сделки.

Ключевые слова: *электронная коммерция, онлайн, потребители, модель, транзакционное поведение, PLS*

DAVIT ABGARYAN – ***E-commerce Acceptance in RA.*** – E-commerce acceptance by consumers is critical for e-commerce development locally or globally. To predict consumer acceptance of e-commerce, this study aims to investigate the factors affecting the initial and repeat purchase intentions of online consumers. The proposed model integrates perceived price and past transactions with E-commerce Acceptance Model proposed by P. Pavlou in 2003. To our best knowledge, no previous research integrated above-mentioned two factors with any Technolgy Acceptance Model based e-commerce acceptance model. The data provides strong support for the proposed e-commerce acceptance model by validating the hypotheses. The results indicate that both the perceived price and the past transactions have a strong positive effect on the intention to transact online.

Key words: *e-commerce, online, consumers, model, transactional behavior, PLS*

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ՏԱՐՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Անցումային տնտեսություն ունեցող երկրների կայուն զարգացումը դժվար է պատկերացնել առանց օտարերկրյա ներդրումների, որոնք ապահովում են ինչպես ֆինանսական միջոցների ներհոսք, այնպես էլ նորագույն տեխնոլոգիաների և կառավարման համակարգերի ներդրում:

Օտարերկրյա ներդրումները տվյալ երկրի տարածքում ձեռնարկատիրական և այլ տեսակի գործունեության օբյեկտներում գույքային և ոչ գույքային արժեքների ներդրումներն են օտարերկրյա ներդրողների կողմից, որոնք իրականացվում են շահույթ կամ այլ տեսակի օգուտ ստանալու նպատակով[1]:

Օտարերկրյա ներդրումների կայուն ներհոսք հնարավոր է ապահովել այն երկրներում, որտեղ դրանց արդյունավետության ապահովման համար ստեղծված են անհրաժեշտ պայմաններ: Գոյություն ունեն ներդրումների արդյունավետության գնահատման մի շարք ցուցանիշներ, սակայն մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մակրոմակարդակում օտարերկրյա ներդրումների արդյունավետության գնահատման հիմնական ցուցանիշը ներդրումների շահութաբերությունն է:

Ներդրումների արդյունավետությունը որոշվում է ներդրումային գործունեությունից ստացված շահույթի և ներդրումային ծախսերի հարաբերությամբ.

$$\text{ՆԱ} = \frac{\text{Շահույթ}}{\text{Ներդրումներ}} \times 100 \qquad \text{բանաձև 1}$$

Այս հաշվարկը կատարվում է պարբերաբար՝ մինչև ներդրումը (բիզնես պլանի կազմումից առաջ), ներդրման ընթացքում և ներդրումից հետո[2]:

Ներդրումների արդյունավետությունը ներդրումային նախագծի մուտքերի և ելքերի հարաբերությունն է, որոնք, համապատասխանաբար, ներդրումից ստացված եկամուտները և ծախսերն են[3]:

Ուսումնասիրության վիճակագրական բազան կազմող տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

---

[1] Տե՛ս **Ивасенко А. Г. Никонова Я. И.** Инвестиции. М, 2009, էջ 98:

[2] Տե՛ս **Бочаров В. В.** Инвестиции. СПб., 2009, էջ 24:

[3] Տե՛ս **Кузнецов Б. Т.** Инвестиции. М., 2010, էջ 181:

Հաշվարկներում օգտագործված նախնական տվյալներ, մլն դրամ *Աղյուսակ 1*

	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
	ՀՀ ԿԲ տարեկան տեղեկագրերի տվյալներ[4]													
ՀՀ բանկերի շահույթ	4,762.6	6,515.7	17,156.1	11,978	16,870.5	20,848.1	26,868.3	8,408.4	30,204.9	33,179.6	42,471.2	38,134.2	21,111.9	-20,708.8
ՀՀ բանկերի կանոն. կապիտալ	32,736	36,769	40,135	60.297.9	80,107.6	116,486.5	152,490.2	188,640.8	203,799.2	233,945.2	244,126.8	263,029.8	290,107.9	364,121.4
Հաշվարկված դիվիդենտներ	6.9	2.3	0	0	580	55	0	0	152	196.1	196.1	340.5	384.1	0
	ՀՀ ԿԲ-ից կողմից տրամադրված տվյալներ[5]													
ՀՀ բանկերի կան. կապ.-ում կատարված օտար ներդրումներ (տարեվերջ)	21,880.7	17,342.2	21,236.1	31,036.1	39,345.2	66,806.7	98,733.3	133,474.5	150,191.6	171,339.7	183,685.4	195,254.8	193,037.3	233,293.3

ՀՀ բանկերում օտարերկրյա ներդրումների արդյունավետության ցուցանիշներ, % *Աղյուսակ 2[6]*

	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
ՀՀ բանկերի կան. կապիտալում կատարված օտար. **ներդրումների շահութաբերություն**	-	15.7	47.1	23.6	23.5	22.5	21	5.1	15.7	15.1	18	14.9	7.2	-6.2
ՀՀ բանկերի կան. կապիտալում մասնակցություն ունեցող օտար. ներդրողների **դիվիդենտների վճարման գործակից**	0.14	0.04	0.00	0.00	3.44	0.26	0.00	0.00	0.50	0.59	0.46	0.89	1.82	0.00
ՀՀ բանկերի կան. կապ.-ում մասնակց. ունեցող օտար. ներդրողներին բաժին ընկնող շահույթի հավելաճի տեմպ	-	-3.5	195.4	-32.1	34.4	44.3	45.5	-65.8	274.1	9.2	31.5	-11.4	-50.4	-194.5

[4] Տե՛ս ՀՀ ԿԲ տարեկան տեղեկագրեր 2002-2008 թթ., 2010 թ., 2012 թ., 2014 թ., 2015 թ.:
[5] Տվյալները տրամադրել է ԿԲ-ն՝ մեր դիմումի հիման վրա:
[6] Այս և հետագա տվյալների հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից:

ՀՀ բանկերի կանոնադրական կապիտալում կատարված օտարերկրյա ներդրումների շահութաբերությունը արդյունավետության գնահատման հիմնական ցուցանիշն է: Դրա ուսումնասիրության համար նախ հաշվարկել ենք օտարերկրյա ներդրողներին բաժին ընկնող շահույթը, որը հարաբերելով ՀՀ բանկերի կանոնադրական կապիտալում կատարված օտարերկրյա ներդրումների միջին տարեկան արժեքին՝ ստացել ենք անհրաժեշտ ցուցանիշը: Օտարերկրյա ներդրողներին բաժին ընկնող շահույթը հաշվարկվել է հետևյալ բանաձևով.

$$Շ_{օնբ_{ՌՍ}} = Շ_{Բ} \times ՏԿ_{օմ} \qquad \text{բանաձև 2}$$

որտեղ՝

$Շ_{օնբ_{ՌՍ}}$ – ՀՀ բանկերի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեցող օտարերկրյա ներդրողներին բաժին ընկնող շահույթն է,

$Շ_{Բ}$ – ՀՀ բանկերի շահույթն է,

$ՏԿ_{օմ}$ – ՀՀ բանկերի կանոնադրական կապիտալում օտարերկրյա մասնակցության տեսակարար կշիռ (տե՛ս գծապատկեր 4):

ՀՀ բանկերի կանոնադրական կապիտալում կատարված օտարերկրյա ներդրումների շահութաբերությունը 2003-2004 թթ. անընդհատ աճ է գրանցել՝ 2004-ին հասնելով առավեագույն արժեքի՝ 47.1 %, ինչը պայմանավորված էր ՀՀ բանկերի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեցող օտարերկրյա ներդրողներին բաժին ընկնող շահույթի և ՀՀ բանկերի կանոնադրական կապիտալում օտարերկրյա մասնակցության աճով: 2005-ին արձանագրված կտրուկ անկումը պայմանավորված է ՀՀ բանկերի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեցող օտարերկրյա ներդրողներին բաժին ընկնող շահույթի 32.1 % նվազումով, ինչպես նաև բանկերի կանոնադրական կապիտալում կատարված օտարերկրյա ներդրումների 46.1 % աճով: 2007-2009 թթ. օտարերկրյա ներդրումների շահութաբերությունը անընդհատ անկում է արձանագրել՝ նվազագույն դրական արժեքին (5.1 %) հասնելով 2009-ին, որը ֆինանսական ճգնաժամի պատճառով բանկային համակարգի շահույթի անկման հետևանքն է: Հատկանշական է, որ ճգնաժամային 2009-ին ՀՀ բանկերի կանոնադրական կապիալում կատարված օտարերկրյա ներդրումները չեն նվազել, այլ աճել են 35.2 %-ով: Նույն թվականին աճել է նաև ՀՀ բանկային համակարգում օտարերկրյա մասնակցության տեսակարար կշիռը՝ հասնելով 71 %-ի (տե՛ս գծապատկեր 4): Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ ՀՀ բանկային համակարգի նկատմամբ հետաքրքրությունը չի մարել նույնիսկ ճգնաժամային տարիներին:

ՀՀ բանկերի կանոնադրական կապիտալում կատարված օտարերկրյա ներդրումների շահութաբերությունը սկսում է անկում ապրել 2013 թ.-ից և իր պատմական նվազագույնին է հասնում 2015 թ.՝ արձանագրելով -6.2 % արժեք: Պատճառը 2013-2015 թթ. օտարերկրյա ներդրողներին բաժին ընկնող շահույթի զգալի անկումն է: Գծապատկեր 1-ից երևում

է, որ այս ցուցանիշը անկման անկայուն միտում է դրսևորել ուսումնասիրվող ժամանակաշրջանում, սակայն ներդրումների շահութաբերությունը ցածր չի եղել, ինչը նպաստել է օտարերկրյա նոր ներդրումների ներգրավմանը: Պետք է նշել որ, 2015 թ. տվյալ ցուցանիշի անկումը պայմանավորված է ոչ միայն շահույթի նվազումով, այլև ՀՀ բանկերի կանոնադրական կապիտալում կատարված օտարերկրյա ներդրումների 20,9 % աճով: Այդ աճի պատճառը, սակայն, ներդրումային միջավայրի բարելավումը չէ, այլ ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն չափի՝ 30 մլրդ դրամի ապահովման նպատակով հավելյալ օտարերկրյա ներդրումների ներգրավումը: 2014 թ. ԿԲ որոշմամբ նվազագույն սահմանաչափը 5 մլրդ դրամից հասցվել էր 30 մլրդ դրամի[7]: ՀՀ բանկերի օտարերկրյա սեփականատերերը հավելյալ միջոցներ են ուղղել ՀՀ ԿԲ-ի պահանջը կատարելու համար, որն էլ նպաստել է օտարերկրյա ներդրումների ծավալի զգալի աճին:

Գծապատկեր 1

ՀՀ բանկերի կանոնադրական կապիտալում կատարված օտարերկրյա ներդրումների շահութաբերությունը, %



2014-2015 թթ. ՀՀ բանկերի շահույթի և կանոնադրական կապիտալում կատարված օտարերկրյա ներդրումների շահութաբերության (արդյունավետության) անկման հիմնական պատճառը 2014 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ դրամի արժեզրկումն էր, որը փոխանցման ներքին մեխանիզմի միջոցով ի վերջո հանգեցրել է բանկերի շահույթի և օտարերկրյա ներդրումների շահութաբերության նվազման: Մեր ուսումնասիրությամբ բացահայտվել են դրամի արժեզրկման ազդեցության փոխանցման մեխանիզմի հիմնական փուլերը և օղակները,

[7] Տե՛ս ՀՀ ԿԲ կանոնակարգ 2:

որոնք ներկայացված են գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 2

ՀՀ բանկերի կանոնադրական կապիտալում կատարված օտարերկրյա ներդրումների արդյունավետության վրա ՀՀ դրամի արժեզրկման ազդեցության փոխանցման մեխանիզմի հիմնական օղակները



Բանկերի կողմից ներգրավվող ավանդների անբավարար մակարդակի պայմաններում, որի պատճառով բանկերը ստիպված են լինում միջոցներ ներգրավել արտերկրից, դրամի արժեզրկումը կարող է հանգեցնել դոլարացման պարույրի ձևավորման: Դոլարացման պարույրի էությունն այն է, որ ավանդների անբավարար մակարդակը հանգեցնում է բանկերի կողմից ներգրավվող օտարերկրյա վարկերի աճին, նրանց կողմից տեղաբաշխվող արտարժութային վարկերի տեսակարար կշռի մեծացմանը, ինչի արդյունքում աճում է բանկերի վարկային պորտֆելի և տնտեսության դոլարացման մակարդակը: Նման պայմաններում ազգային արժույթի արժեզրկումը կհանգեցնի արտարժութային վարկեր ունեցող վարկառուների վարկային պարտավորությունների աճին, խնայողությունների նվազմանը, որն էլ իր հերթին կհանգեցնի ավանդների մակարդակի անկման: Այս գործընթացը կարող է պարբերաբար կրկնվել, այդ պատճառով այն կարելի է անվանել **դոլարացման պարույր**:

Գծապատկեր 3

Դոլարացման պարույր[8]



Շահաբաժինների վճարման գործակիցը ցույց է տալիս, թե ստացված զուտ շահույթի որ մասն է շահաբաժինների տեսքով բաշխվել բաժնետերերին: ՀՀ բանկերում այս գործակիցը խիստ ցածր է, առավելագույն արժեքը՝ 3.44 % (աղյուսակ 2), արձանագրվել է 2006 թ.: Շահաբաժինների վճարման ցածր մակարդակը պորտֆելային ներդրումների ներգրավման համար ստեղծում է ոչ գրավիչ պայմաններ, քանի որ դրանց նպատակը ոչ թէ կազմակերպության նկատմամբ վերահսկողություն սահմանելն է, այլ առավեագույն շահույթ ստանալը: Այդ է պատճառը, որ ՀՀ բանկերի կանոնադրական կապիտալում կատարված օտարերկրյա ներդրումների կառուցվածքում պորտֆելային ներդրումները փոքր տեսակարար կշիռ ունեն:

Հետաքրքրական է, որ թեև շահաբաժինների վճարման մակարդակը ցածր է, բայց ներդրումներն աճում են. սա նշանակում է, որ ներդրողները հետապնդում են երկարաժամկետ շահեր: Մեր հաշվարկած՝ ՀՀ բանկերի կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրումներին և օտարերկրյա ներդրողներին բաժին ընկնող շահույթի կոռելյացիայի գործակիցը թույլ է տալիս պատկերացում կազմել ներդրումների և շահույթի դինամիկայի փոխկապակցվածության մասին: Հաշվարկը

[8] Գծապատկերը կազմված է հեղինակի կատարած հետազոտությունների հիման վրա:

կատարվել է հետևյալ բանաձևով.

$$r_{xy} = \frac{\Sigma(X-\bar{X})(Y-\bar{Y})}{\sqrt{\Sigma(X-\bar{X})^2\,\Sigma(Y-\bar{Y})^2}} \quad \text{բանաձև 3}$$

2002-2015 թթ. կոռելյացիայի գործակիցը ունի **0.29** արժեքը, որը վկայում է թույլ կապի առկայության մասին: Սա ևս մեկ անգամ վկայում է, որ ՀՀ բանկային համակարգի օտարերկրյա ներդրողները հետապնդում են երկարաժամկետ ռազմավարական նպատակներ, այլ ոչ թե կարճաժամկետ սպեկուլյատիվ շահեր:

ՀՀ առևտրային բանկերի կանոնադրական կապիտալում կատարված օտարերկրյա ներդրումների արդյունավետությունը ուսումնասիրվող ժամանակաշրջանում զգալիորեն տատանվում է: Ըստ այդմ՝ ամբողջ ժամանակաշրջանը կարելի է բաժանել երեք մասի՝ 2003-2008 թթ., 2010-2012 թթ. և 2013-2015 թթ.: Յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար հաշվարկել ենք արդյունավետությունը բնութագրող հիմնական ցուցանիշի՝ օտարերկրյա ներդրումների շահութաբերության միջին արժեքը, որը համեմատելով ամբողջ ժամանակաշրջանի (2003-2015 թթ.) միջին ցուցանիշի հետ՝ հնարավոր է պարզել, թե որ ժամանակաշրջանում են ներդրումները առավել արդյունավետ եղել, ինչպես նաև կատարել կանխատեսում: Միջին ցուցանիշների հաշվարկը կատարվել է միջին երկրաչափականի բանաձևով և ներկայացված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

ՀՀ բանկերի կանոնադրական կապիտալում կատարված օտարերկրյա ներդրումների միջին շահութաբերություն, %

2003-2008 թթ. (առանց 2004 թ.)	21.03
2010-2012 թթ.	16.2
2013-2014 թթ.	10.4
2003-2014 թթ.(առանց 2004 թ.)	15.14

Օտարերկրյա ներդրումների շահութաբերության միջին արժեքը 2003-2015 թթ. կտրվածքով կազմում է 15.14 %, ընդ որում՝ հաշվարկում չեն ներառվել 2004 թ. և 2015 թ. ցուցանիշները: 2004 թ. ցուցանիշը արտաքսվել է շարքից, քանի որ գրանցել է շարքի ընդհանուր միտումից կտրուկ շեղվող արժեք, և եթե ներառվեր հաշվարկում, ապա բացասաբար կազդեր արդյունքների ճշգրտության վրա, իսկ 2015 թ. ցուցանիշը հաշվարկում չի ներառվել արձանագրած բացասական արժեքի պատճառով:

2003-2008 թթ. օտարերկրյա ներդրումների արդյունավետությունը եղել է զգալիորեն բարձր ամբողջ շարքի միջին արժեքից՝ կազմելով 21.03 %, ինչը պայմանավորված է 2006-2008 թթ. օտարերկրյա ներդրողներին բաժին ընկնող շահույթի հավելաճի բարձր տեմպերով

(տե՛ս աղյուսակ 2): 2009 թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պատճառով վատթարացել են ՀՀ բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները, որը հանգեցրել է օտարերկրյա ներդրումների արդյունավետության կտրուկ անկման: 2010-2012 թթ. ներդրումների շահութաբերության միջին ցուցանիշը գրանցել է 16.2 % արժեքը, որը թեև բարձր է ամբողջ շարքի միջին արժեքից, բայց զգալիորեն փոքր է 2003-2008 թթ. միջին ցուցանիշից: Սա պայմանավորված է 2011-2012 թթ., 2006-2008 թթ. համեմատ օտարերկրյա ներդրողներին բաժին ընկնող շահույթի հավելաճի ավելի ցածր տեմպերով:

Գծապատկեր 4

ՀՀ բանկերի կանոնադրական կապիտալում օտարերկրյա մասնակցության տեսակարար կշիռը



2013-2014 թթ. ՀՀ բանկերում կատարված օտարերկրյա ներդրումների միջին շահութաբերությունը կազմել է 10.4 %, որը դիտարկված երեք ժամանակաշրջանների մեջ ամենից փոքր ցուցանիշն է և զգալիորեն փոքր է ամբողջ ժամանակաշրջանի միջին ցուցանիշից (15.14 %), ինչը պայմանավորված է տվյալ ժամանակաշրջանում օտարերկրյա ներդրողներին բաժին ընկնող շահույթի նվազումով:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ուսումնասիրվող 2003-2015 թթ. ժամանակաշրջանում ՀՀ բանկային համակարգում կատարված օտարերկրյա ներդրումների արդյունավետությունը փուլային անկում է արձանագրել՝ առավելագույն մակարդակ գրանցելով 2003-2008 թթ., իսկ նվազագույն մակարդակ՝ 2014-2015 թթ.: Օտարերկրյա ներդրումների միջին շահութաբերությունը աստիճանաբար նվազել է՝ 2003-2008 թթ., 2010-2012 թթ., 2013-2014 թթ. ժամանակաշրջաններում կազմելով համապատասխանաբար 21.03 %, 16.2 % և 10.4 %, ընդ որում՝ 2003-2014 թթ. միջին շահութաբերությունը եղել է 15.14 %: Սակայն անկման այս դինամիկան երկրորդ փուլում չի անդրադարձել օտարերկրյա ներդրումների ծավալների վրա, որոնք շարունակել են ա-

ճել: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ օտարերկրյա ներդրողները հետապնդել են երկարաժամկետ ռազմավարական շահեր: Այս ենթադրությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ շահաբաժինների վճարման խիստ ցածր մակարդակի պայմաններում օտարերկրյա ներդրումները շարունակել են աճել բարձր տեմպերով:

Մեր կարծիքով, ՀՀ բանկային համակարգի նկատմամբ վստահությունը օտարերկրյա ներդրողների շրջանում ձևավորվել է 2003-2008 թթ. ՀՀ բանկերի և օտարերկրյա ներդրումների շահութաբերության կայուն բարձր տեմպերի ապահովման շնորհիվ, ինչը հանգեցրել է ներդրումների ծավալների և ՀՀ բանկերում օտարերկրյա մասնակցության տեսակարար կշիռի աճի:

Օտարերկրյա պորտֆելային ներդրումների իրականացումը ՀՀ բանկային համակարգում արդյունավետ չէ դիտարկվող ամբողջ ժամանակաշրջանում, քանի որ խիստ ցածր է շահաբաժինների վճարման գործակիցը, ինչը պորտֆելային ներդրողին հետաքրքրող կարևորագույն ցուցանիշներից է: Դա է պատճառը, որ ՀՀ բանկային համակարգում կատարված օտարերկրյա ներդրումների մեջ պորտֆելային ներդրումների տեսակարար կշիռը խիստ փոքր է:

ՀՀ բանկային համակարգում օտարերկրյա ներդրումների արդյունավետության անկման ներկա տեմպերի պահպանման դեպքում ՀՀ բանկային համակարգը կարող է կանգնել կապիտալի արտահոսքի խնդրի առջև, ինչը կխոչընդոտի բանկային համակարգի զարգացումը: Այս հեռանկարից խուսափելու համար անհրաժեշտ է բանկերի շահութաբերությունը հասցնել մինչև 2014 թ. եղած մակարդակին: Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, շահույթը մեծացնելու համար անհրաժեշտ է բարելավել բանկերի վարկային պորտֆելի որակը, որը կնվազեցնի ակտիվների հնարավոր կորուստների՝ պահուստներին կատարվող մասնահանումները և կհանգեցնի շահույթի աճի:

ՀՀ բանկերի վարկային պորտֆելի որակի անկման հիմնական պատճառը 2014 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ դրամի արժեզկումն էր, որը շղթայական ռեակցիայով հանգեցրել է բանկերի շահույթի անկման: Ներկայումս ՀՀ դրամը շարունակում է արժեզրկված մնալ, ինչը լուրջ խոչընդոտ է վարկառուների ֆինանսական վիճակի կարգավորման և բանկերի շահույթի վերականգնման համար: Եթե հնարավոր չէ արագ քայլեր ձեռնարկել դրամն արժևորելու ուղղությամբ (հաշվի առնելով ՀՀ մակրոտնտեսական ներկայիս վիճակը), ապա ՀՀ ԿԲ-ն պետք է ժամանակավորապես նվազեցնի արտարժույթով ժամկետանց վարկային պարտավորությունների գծով ակտիվների հնարավոր կորուստների պահուստին՝ բանկերի կողմից կատարվող մասնահանումների դրույքաչափերը, ինչը կնպաստի այդ մասնահանումների նվազեցմանը և բանկերի շահույթի ավելացմանը:

ՀՀ դրամի արժեզրկման հետևանքով որակազրկված ՀՀ բանկերի վարկային պորտֆելի որակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է նվազեցնել ՀՀ ռեզիդենտներին արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն այնքան, որ չեզոքացվի դրամի արժեզրկման ազդեցությունը վարկառուների վրա: Դա կնվազեցնի վարկառուների ֆինանսական ծանրաբեռնվածությունը և ժամկետանց վարկերի ծավալը, կբարձրանա վարկային պորտֆելի որակը: Պետք է նշել, որ այս մեթոդը առավել արդյունավետ կլիներ, եթե կիրառվեր դրամի արժեզրկումից անմիջապես հետո՝ որպես պորտֆելի որակազրկումը կանխարգելող միջոց:

Բանալի բառեր – *օտարերկրյա ներդրումներ, առևտրային բանկեր, օտարերկրյա ներդրումների շահութաբերություն, արդյունավետության գնահատում, շահաբաժիններ*

ТАРОН СИМОНЯН – ***Оценка эффективности иностранных инвестиций в коммерческих банках РА.*** – В статье изучены основные показатели эффективности иностранных инвестиций в комерческих банках Армении. В частности, вычислены коэффициенты их прибыльности, выплаты дивидендов иностранным инвесторам и т. д. Изучено, как девальвация драма влияет на уровень эффективности иностранных инвестиций в армянских банках, а также представлен механизм передачи этого влияния. Кроме того, рассчитаны средние показатели прибыльности инвестиций и выявлен основной их тренд.

Ключевые слова: *иностранные инвестиции, коммерческие банки, прибыльность, оценка эффективности, дивиденды*

TARON SIMONYAN – ***The Assessment of Efficiency of Foreign Investments in Commercial Banks of RA.*** **–** In this article, there have been investigated the main indicators of efficiency of foreign investments in the authorized capital of commercial banks of the Republic of Armenia. Particularly, the author has calculated the coefficients of profitability of foreign investments, dividend payment, etc. Also, there has been explored the influence of the devaluation of Armenian currency on the efficiency of foreign investments.

Key words: *foreign investments, commercial banks, profitability of foreign investments, assessment of efficiency, dividends*

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԳԵՈՐԳԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Պետական կառավարման արդյունավետության հիմնահարցերը ուսումնասիրվում և լայնորեն քննարկվում են ինչպես հանրության, այնպես էլ առանձին պետական և ոչ պետական հաստատությունների կողմից: Առաջ են քաշվում զանազան վարկածներ, որոնցով վեր են հանվում կառավարման չհամակարգվածությունը, բարձիթողումներն ու ձևախեղումները: Մինչդեռ, երկրի կառավարման համակարգի արդյունավետությունը անչափ կարևոր է տնտեսական զարգացման համար, քանի որ հենց «կառավարման որակից» է կախված սահմանադրական նորմերի առավելագույն իրացվելիության աստիճանը: Սահմանադրական նորմերը իրական կյանքում արտացոլելու, սահմանադրական դեֆիցիտը չափելու և այն կրճատելու նպատակով տարբեր հեղինակների կողմից առաջադրվում են արդյունավետ կառավարման մեթոդաբանական լուծումներ ու գործիքակազմ[1]:

Կառավարման արդյունավետությունը ուղղակի ազդող գործոն է տնտեսական ցուցանիշների վրա: Կառավարման համար անհրաժեշտ պետական ծախսերը ունեն բավական բարձր տեսակարար կշիռ երկրի համախառն ներքին արդյունքում (օր.՝ ՀՀ-ում 2015 թ. այն կազմել է մոտ 28%), իսկ ծախսերի սահմանային արդյունավետության մակարդակը նշանակալիորեն ազդում է երկրի մակրոտնտեսական վիճակի վրա: Միաժամանակ, տնտեսական զարգացման համար նշանակալի է նաև պետական կառավարման գործառական արդյունավետությունը, այն է՝ կառավարության կողմից անհրաժեշտ ինստիտուտների/գերատեսչությունների ստեղծումը, վերջիններիս արդյունավետ կառավարումը, իրավահավասար և արդարացի կանոնների սահմանումը տնտեսական բոլոր գործակալների համար և այլն: Այլ խոսքով, տնտեսական զարգացման անհրաժեշտ նախադրյալների ապահովումը նշանակում է համապատասխան օրենսդրության առկայություն (օր.՝ սահմանադրություն, օրենսգրքեր, այլ իրավական ակտեր), օրենսդրական կարգավորումների առավելագույն իրացվելիությանն ուղղված իրավական, քաղաքական, սոցիալ-տնտեսական

[1] Տե՛ս օրինակ՝ **Саргсян Г.** Некоторые подходы к разработке инструментария и методов реализации конституционной диагностики // "Конституционное правосудие в новом тысячелетии". Ер., 2016, էջ 78-93:

ինստիտուտների և իրապես անկախ դատական համակարգի առկայություն:

Այսպիսով, օպտիմալ կառավարման իմաստով կարևոր են դառնում ինչպես պետական ծախսերի արդյունավետ կառավարումը, այնպես էլ հենց կառավարման գործառական արդյունավետության մակարդակը: Այստեղից հարց է առաջանում. ո՞ր գործոններն են ազդում կառավարման արդյունավետության վրա: Վերջինս՝ որպես համընդգրկուն կատեգորիա, կախված է տնտեսական, իրավական և ժողովրդավարական զանազան ցուցանիշներից: Այս հոդվածում մեր նպատակն է ներկայացնել մասնավորապես կոռուպցիայի մակարդակի կապը կառավարման արդյունավետության հետ:

Կոռուպցիայի մակարդակը Հայաստանի Հանրապետությունում (համեմատական վերլուծություն): Պետական և հանրային ինստիտուտներում, ինչպես նաև ամբողջ երկրում առկա կոռուպցիայի փաստացի մակարդակի գնահատման կառուցակարգերից մեկը խորքային հարցումներն են և այդ հարցումների վրա հիմնված՝ փորձագիտական գնահատականները: Այս տեսակի գնահատականներից են, օրինակ, կոռուպցիայի ընկալման համաթիվը՝ ԿԸՀ (CPI - Corruption Perceptions Index), որը յուրաքանչյուր տարի գնահատվում և հրապարակվում է «Թրանսփարենսի ինթերնեյշնալի» (Transparency International) կողմից, կոռուպցիայի համաշխարհային բարոմետրը՝ ԿՀԲ (GCP – Global Corruption Barometer) և այլն: Ստորև ներկայացված են 2013 թ. ԿՀԲ-ի, ինչպես նաև 2010-2015 թթ. ընթացքում ԿԸՀ-ի արդյունքները Հայաստանի համար՝ համեմատելով Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ որոշ երկրների հետ: Նշենք, որ այս համատեքստում կան նաև այլ համեմատություններ: Օրինակ՝ Գ. Հարությունյանի «Կոռուպցիայի պետաիշխանական դիմագծի մերօրյա դրսևորումները»[2] հոդվածում ներկայացված են «Իրավունքի գերակայության ինդեքս» ծրագրի և ԱՄՆ «Ազատության տուն» կազմակերպության հետազոտությունների հիման վրա կատարված դիտարկումներ: Կոռուպցիայի համատեքստում կատարվել են երկրների դասակարգումներ/խմբավորումներ: Առանձնացված խմբերից մեկում, օրինակ, ներառված են Իտալիան, Հունաստանը, Խորվաթիան, Ռումինիան, Չինաստանը և այլն: Թեպետ այդ ծրագրում Հայաստանը և մի շարք այլ երկրներ ներառված չեն, այնուամենայնիվ «Ազատության տուն» կազմակերպության և «Իրավունքի գերակայության ինդեքս» ծրագրի շրջանակներում Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Չեխիայի և Հայաստանի վերաբերյալ տվյալների համադրմամբ կատարված հաշվարկները վկայում են, որ Հայաստանը նույնպես կարող էր ընդգրկվել այս խմբում:

---

[2] Տե՛ս **Գ. Հարությունյան,** Կոռուպցիայի պետաիշխանական դիմագծի մերօրյա դրսևորումները, «Առավոտ» օրաթերթ, 18.02.2016:

Աղյուսակ 1

Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր[3] 2013 (այլ երկրների, համաշխարհային միջինի և թվարկված երկրների միջին ցուցանիշի համեմատությամբ)

Երկիր	Կուսակցություններ	Խորհրդարանական, օրենսդիր իշխանություն	Ոստիկանություն	Բիզնես, մասնավոր հատված	Լրատվամիջոցներ	Պետական պաշտոնյաներ, հանրային ծառայողներ	Դատական համակարգ	ՀԿ-ներ	Կրոնական կազմակերպություններ	Զինված ուժեր	Կրթական համակարգ	Առողջապահական հիմնարկներ
Համաշխարհային միջին	4	3.6	3.7	3.3	3.1	3.6	3.6	2.7	2.6	2.9	3.1	3.3
Թվարկված երկրների միջին	4	3.6	3.6	3.4	3.1	3.6	3.7	2.7	2.5	2.8	3.2	3.6
Հայաստան	4	3.7	3.9	3.5	3	4	4	2.8	2.9	3.2	3.7	4
Ադրբեջան	3	2.5	2.9	2.8	2.5	2.8	3.1	2.5	2.3	2.5	2.8	3.1
Վրաստան	3	3	2.5	2.8	3.2	2.6	3.4	2	1.6	1.9	2.4	2.8
Մոլդովա	4	4.2	4.2	3.6	3	4	4.3	2.9	2.3	3.2	3.7	4.1
Ռուսաստան	4	4.3	4.5	3.6	3.7	4.6	4.4	3.3	3.1	4	4	4.1
Ուկրաինա	4	4.2	4.4	3.9	3.4	4.3	4.5	3.2	3	3.5	4	4.2
Ղազախստան	3	2.6	3.9	3.2	2.4	3.5	3.8	2.6	2.1	2.9	3.6	3.6
Էստոնիա	4	3.1	2.6	3.3	2.6	3.2	2.8	2.4	2.1	2	2.3	2.7
Լատվիա	4	3.7	3.5	3.4	3	3.8	3.5	2.4	2.1	2.3	2.5	3.4
Լիտվա	4	4.3	3.9	3.6	3.3	3.9	4.3	2.6	2.5	2.4	3.2	4.1
Թուրքիա	4	3.5	3	3.4	3.6	3.2	3.1	3	3.1	2.9	3.2	3.2

Աղյուսակ 1-ում ըստ ոլորտների/հաստատությունների ներկայացված են կոռուպցիայի մակարդակի վերաբերյալ հանրային կարծիքի գնահատականներ: Աղյուսակը կազմելու համար իրականացվել են հարցումներ, որոնց ՀՀ-ում մասնակցել են 1068 բնակիչ (18 տարեկանից բարձր), և հարցման մեթոդ է ընտրվել դեմ առ դեմ հարցումը:

[3] Տե՛ս http://transparency.am/storage/GCB2013_Tables_am.pdf

Հարցվողներին առաջարկվել է գնահատել յուրաքանչյուր ոլորտի/հաստատության կոռումպացվածության աստիճանը 1-5 բալային սանդղակով, որտեղ 5 բալը նշանակում է բարձր կոռուպցիոն մակարդակ տվյալ ոլորտում/հաստատությունում, իսկ 1 բալը՝ կոռուպցիայի ցածր մակարդակ/բացակայություն: Ստացված արդյունքները համադրվել են համաշխարհային միջին գնահատականների և թվարկված երկրների միջին գնահատականների հետ: Յուրաքանչյուր տողում ամենաբարձր կոռուպցիոն գնահատական պարունակող ոլորտները/հաստատությունները մգացված են:

Ըստ այդմ՝ համաշխարհային միջին ցուցանիշների համաձայն՝ հանրային կարծիքը ամենակոռումպացված ոլորտ/հաստատություն է համարում կուսակցությունները (3.8 միավոր): Թվարկված երկրների միջին ցուցանիշների համաձայն՝ ըստ հանրային կարծիքի՝ ամենակոռումպացված ոլորտ/հաստատությունը դատական համակարգն է (3.7 միավոր): ՀՀ-ում, ինչպես երևում է աղյուսակից, առավել բարձր կոռուպցիոն մակարդակ առկա է հանրային ծառայությունների ոլորտում, դատական համակարգում և առողջապահական հիմնարկներում (բոլորը ստացել են 4 գնահատական): Փոքր-ինչ «զիջում» է ՀՀ ոստիկանությունը (3.9 միավոր): Իսկ ամենացածր կոռուպցիայի մակարդակ առկա է հասարակական կազմակերպություններում (2.8 բալ): Եթե համեմատենք համաշխարհային միջինի հետ, ապա ՀՀ-ում միջինից ցածր կոռուպցիան, ըստ հարցվածների, առկա է միայն կուսակցություններում և լրատվամիջոցներում: Իսկ թվարկված երկրների միջին ցուցանիշի համեմատ՝ ՀՀ-ում միջինից ցածր կոռուպցիա առկա է միայն լրատվամիջոցներում:

Աղյուսակ 2-ում ներկայացված է Հայաստանի կոռուպցիայի ընկալման համաթիվը 2010-2015 թվականներին՝ այլ երկրների համեմատությամբ:

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, 2010-2015 թթ. Հայաստանը տատանվել է 26-37 միջակայքում, ինչը, թերևս, բավական ցածր ցուցանիշ է: Եթե համեմատենք այլ երկրների հետ (ԱՊՀ երկրներ, հարևան երկրներ), ապա կարող ենք արձանագրել, որ Հայաստանը այդ ժամանակային միջակայքում միշտ ունեցել է թվարկված երկրների միջինից ավելի ցածր ցուցանիշ: Ավելին, նույն եզրահանգումը կարելի է անել՝ Հայաստանը համեմատելով համաշխարհային միջին ցուցանիշի հետ: Նկատելի է նաև, որ 2010-2015 թթ. ընթացքում Հայաստանը բարելավել է իր դիրքերը ԿԸՀ-ի իմաստով: Բացառություն է 2015 թվականը 2014-ի համեմատությամբ, երբ մեր երկրում ԿԸՀ-ն անկում է ապրել՝ 37 միավորից հասնելով մինչև 35-ի:

Աղյուսակ 2

Կոռուպցիայի ընկալման համաթիվը[4] (ԿԸՀ) Հայաստանի համար 2010-2015 թթ. ժամանակային միջակայքում՝ այլ երկրների, համաշխարհային միջինի և թվարկված երկրների միջին ցուցանիշի համեմատությամբ

Երկիր/ԿԸՀ	2010 թ.	2011 թ.	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.
Համաշխարհային միջին	40	40	43.3	42.7	43.2	42.6
Թվարկված երկրների միջին	35.7	35.5	40.6	41.4	42	41.9
Հայաստան	26	26	34	36	37	35
Ադրբեջան	24	24	27	28	29	29
Վրաստան	38	41	52	49	52	52
Մոլդովա	29	29	36	35	35	33
Ռուսաստան	21	25	28	28	27	29
Ուկրաինա	24	23	26	25	26	27
Ղազախստան	29	27	28	26	29	28
Էստոնիա	65	64	64	68	69	70
Լատվիա	43	42	49	53	55	55
Լիտվա	50	48	54	57	58	61
Թուրքիա	44	42	49	50	45	42

Կոռուպցիան, արդյունավետ կառավարումը և տնտեսական աճը: Ինչպես արդեն նշվեց, արդյունավետ կառավարումը կարևոր գործոն է տնտեսական զարգացման համար: Այս են վկայում տնտեսամաթեմատիկական լայնածավալ վերլուծություններն ու գնահատումները: Համաձայն Նորֆի[5]՝ ինստիտուտներն ու կառավարությունը մարդու կողմից ստեղծված սահմանափակումների համակարգ են, որը բավական մեծ ազդեցություն ունի տնտեսական գործակալների որոշումների ընդունման վրա: Ուստի արդյունավետ կառավարումը, որն ավելի է նպաստում արդյունավետ աշխատանքի բաժանմանը, արտադրողական ներդրումների ներգրավմանը, սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացմանը, նպաստում է արձանագրելու տնտեսական աճի ավելի բարձր ցուցանիշ[6]: Մյուս կողմից, համաձայն Հոլլի և Ջոնսի[7], եթե արդյունավետ կառավարումը նպաստում է տնտեսական աճին, ապա վատ կառավա-

[4] Տե՛ս http://transparency.am/hy/cpi

[5] Տե՛ս **North D. C.,** Institutions, Institutional Change, and Economic Performance, New York: Cambridge University Press, 1990:

[6] Տե՛ս **United Nations,** Investing in Development; A practical Plan to Achieve the Millennium Development Goals, Millennium Project Report to the UN Secretary General:

[7] Տե՛ս **Hall, Robert E., Jones C. I.,** Why Do Some Countries Produce so Much More Output per Worker Than Others?, Quarterly Journal of Economics, 1999, 114(1), էջ 83-116:

րումը՝ սեփականության իրավունքի իրացվածության ցածր աստիճանը, իրավունքի գերակայության ցածր մակարդակը, ոչ օպտիմալ հարկային համակարգի առկայությունը, կոռուպցիայի բարձր մակարդակը, հանգեցնում է հանրային բարեկեցության անխուսափելի անկման:

Ի լրումն վերը նշված պնդումների՝ կատարված բազմաթիվ փորձագիտական գնահատականները[8] փաստում են կառավարման արդյունավետության և տնտեսական աճի դրական կախվածության մասին: Այսպիսի ուսումնասիրություններից են, օրինակ, Ալամի, Քիթենջի և Բեդանի, Աճեմօղլու, Ջոնսոնի և Ռոբինսոնի, Աճեմօղլու և Ռոբինսոնի, Բարրոյի, Նաքի և Քիֆերի, Կաուֆմանի և Քրեյի, Կաուֆմանի, Քրեյի և Մաստուցիի հետազոտությունները և այլն:

Նկար 1



Այսպիսով, ընդունելով կառավարման արդյունավետության և տնտեսական աճի դրական կախվածությունը, հետաքրքրական է դառնում նաև ուսումնասիրել կառավարման արդյունավետության վրա ազդող գործոնները: Համաձայն Ադսերայի, Բոիքսի և Փեյնի[9], դեմոկրատիկ միջավայրում արդյունավետ մակրո կառավարումը ենթադրում է առնվազն երկու անհրաժեշտ պայմանների առկայություն՝ (ա) օրինական ընտրություններ և (բ) թափանցիկ և հաշվետվողական կառավարում, որոնք ապահովում են տեղեկացված ընտրազանգվածի ռացիոնալ որո-

[8] Տե՛ս **Rafayet Alam, Kitenge E., Bedane** Economics Bulletin, 2017, **Volume B.,** "Government Effectiveness and Economic Growth", 37, Issue 1, էջ 222-227, **Acemoglu D., Johnson S., Robinson J. A.,** The colonial origins of comparative development: An empirical investigation, American Economic Review, 2001, 91 (5), էջ 1369–1401, **Acemoglu D., Robinson J.,** The role of institutions in growth and development, Review of Economic Institutions, 2010, 1 (2), **Barro, R. J.,** Determinants of economic growth: A cross-country empirical study, MIT Press, 1998, **Knack S., Keefer P.,** Institutions and economic performance: Cross-country tests using alternative institutional measures, Economics and Politics, 1995, 7 (3), էջ 207–227, **Kaufmann D., & Kraay A.,** Growth without Governance, Economia, 2002, 3(1), էջ 169– 229, **Kaufmann D., Kraay A., Mastruzzi M.,** Governance matters VII: Governance indicators for 1996–2007, World Bank Policy Research Paper, 2008:

[9] Տե՛ս **Adserà A., Boix C., Payne M.,** Are You Being Served? Political Accountability and Quality of Government, J. Law Econ Organ., 2003, 19 (2), էջ 445-490:

շում կայացնելու հնարավորություն: Այս մեխանիզմի օպտիմալ իրացվելիության զսպիչ գործոն կարող է դառնալ կոռուպցիան: Ստորև (նկ. 1) ներկայացված են կառավարման արդյունավետության վրա ազդող որոշ գործոններ (յուրաքանչյուր գործոնի ներքևում ներկայացված է այդ գործոնը բնութագրող/մոտարկող թվային ցուցանիշի անվանումը):

Մոդելի նկարագրությունը: Կոռուպցիայի ազդեցությունը կառավարման արդյունավետության վրա գնահատելու համար օգտագործվել է հետևյալ գծային ռեգրեսիոն մոդելը (պանելային տվյալների դիտարկմամբ)՝

$Y_{it} = const. + \beta_k X_{kit} + \varepsilon_{it}$ (1), որտեղ t-րդ ժամանակահատվածի համար՝

Y_{it}-ն կախյալ փոփոխականն է i-րդ երկրի համար,

X_{kit}-ն k-րդ բացատրող փոփոխականն է i-րդ երկրի համար,

β_k-ն k-րդ բացատրող փոփոխականի գործակիցն է,

ε_{it}-ն գնահատման սխալն է:

Գնահատման համար, մասնավորապես, օգտագործվել են 5 բացատրող փոփոխականներ, և դիտարկվել են 5 մոդելներ

($k = 1, k = 2, k = 3, k = 4, k = 5$ դեպքեր)՝

$Y_{it} = const. + \beta_1 X_{1it} + \beta_2 X_{2it} + \beta_3 X_{3it} + \beta_4 X_{4it} + \beta_5 X_{5it} + \varepsilon_{it}$ (2),

որտեղ t-րդ ժամանակահատվածի համար՝

Y_{it}-ն կառավարման արդյունավետության համաթիվն է i-րդ երկրի համար,

X_{1it}-ն կոռուպցիայի ընկալման համաթիվն է i-րդ երկրի համար,

X_{2it}-ն մարդկային զարգացվածության համաթիվն է i-րդ երկրի համար,

X_{3it}-ն օրենքի գերակայության համաթիվն է i-րդ երկրի համար t-րդ ժամանակահատվածում,

X_{4it}-ն կառավարման թափանցիկության համաթիվն է i-րդ երկրի համար,

X_{5it}-ն կառավարության հաշվետվողականության համաթիվն է i-րդ երկրի համար,

ε_{it}-ն գնահատման սխալն է:

Գնահատման համար անհրաժեշտ տվյալները ձեռք են բերվել չորս հիմնական միջազգային շտեմարանների («Թրանսփարենսի ինթերնեյշնալ» հակակոռուպցիոն կազմակերպություն, Համաշխարհային բանկ, ՄԱԿ-ի մարդկային զարգացման գրասենյակ, Համաշխարհային տնտեսական ֆորում): Տվյալների շարքը ունի հետևյալ նկարագրությունը.

Y_{it}-ն կառավարման էֆեկտիվության համաթիվն է i-րդ երկրի համար t-րդ ժամանակահատվածում: Համաթիվը տատանվում է [-2.5, 2.5] միջակայքում, որտեղ -2.5 միավորը նկարագրում է կառավարման բացարձակապես անարդյունավետ մակարդակը:

X_{1it}-ն կոռուպցիայի ընկալման համաթիվն է i-րդ երկրի համար

t-րդ ժամանակահատվածում: Համաթիվը տատանվում է [0, 100] միջակայքում, որտեղ 0 միավորը նկարագրում է կոռուպցիայի առկայության բացարձակ բարձր մակարդակը:

X_{2it}-ն մարդկային զարգացածության համաթիվն է i-րդ երկրի համար t-րդ ժամանակահատվածում: Համաթիվը տատանվում է [0, 100] միջակայքում, որտեղ 0 միավորը նկարագրում է մարդկային զարգացվածության բացարձակ ցածր մակարդակը:

X_{3it}-ն իրավունքի գերակայության համաթիվն է i-րդ երկրի համար t-րդ ժամանակահատվածում: Համաթիվը տատանվում է [-2.5, 2.5] միջակայքում, որտեղ -2.5 միավորը նկարագրում է օրենքի գերակայության բացարձակ ցածր մակարդակը:

X_{4it}-ն կառավարման թափանցիկության համաթիվն է i-րդ երկրի համար t-րդ ժամանակահատվածում: Համաթիվը տատանվում է [1, 7] միջակայքում, որտեղ 1 միավորը նկարագրում է կառավարման թափանցիկության բացարձակ ցածր մակարդակը:

X_{5it}-ն կառավարության հաշվետվողականության համաթիվն է i-րդ երկրի համար t-րդ ժամանակահատվածում: Համաթիվը տատանվում է [1, 7] միջակայքում, որտեղ 1 միավորը նկարագրում է կառավարության հաշվետվողականության բացարձակ ցածր մակարդակը:

Գնահատման համար օգտագործվել են պանելային տվյալներ, որոնք ընդգրկում են 2010-2014 թվականների ժամանակային միջակայքը՝ տարեկան կտրվածքով: Յուրաքանչյուր փոփոխականի համար ընդհանուր դիտարկումների քանակը (տվյալների շարքի երկարությունը) հավասար է 390-ի (դիտարկվել է 78 երկիր՝ յուրաքանչյուր երկրի համար 5 ժամանակահատված):

Աղյուսակ 3

ՀՀ դիտարկվող ցուցանիշներ (2010-2014 թթ.)

Ցուցանիշ/տարեթիվ	2010 թ.	2011 թ.	2012 թ.	2013 թ.	2014 թ.
Կառավարման արդյունավետության համաթիվ	-0.17	-0.10	-0.04	0.07	-0.17
Կոռուպցիայի ընկալման համաթիվ	26	26	34	36	37
Մարդկային զարգացվածության համաթիվ	72	72	72	73	73
Օրենքի գերակայության համաթիվ	-0.47	-0.42	-0.40	-0.31	-0.32
Կառավարման թափանցիկության համաթիվ	4.54	4.81	5.21	4.96	4.46
Կառավարության հաշվետվողականության համաթիվ	3.81	4.00	4.08	4.38	4.33

Աղյուսակ 3-ում ներկայացված են ՀՀ վերոնշյալ ցուցանիշները դինամիկայի մեջ: Ինչպես երևում է աղյուսակից, կառավարման արդյունա-

վետության համաթիվը դիտարկվող ժամանակահատվածում հիմնականում ունեցել է աճի միտում (բացառություն է 2014 թ.): Կոռուպցիայի ընկալման համաթվի իմաստով դիտարկվող ողջ ժամանակահատվածում գրանցվել է դրական միտում, ինչը նշանակում է կոռուպցիայի ավելի ցածր մակարդակ: Պատկերը նույնն է մարդկային զարգացածության համաթվի համար: Օրենքի գերակայության համաթիվը և կառավարության հաշվետվողականության համաթիվը դիտարկվող ժամանակահատվածում ընդհանուր առմամբ նույնպես աճել են (բացառությամբ 2014 թ.): Կառավարման թափանցիկության իմաստով դիտարկվող ժամանակահատվածում սկզբնապես գրանցվել է աճ (2010-2012 թթ.), այնուհետև հետընթաց (2013-2014 թթ.): Սակայն ընդհանուր առմամբ ժամանակաշրջանի վերջում վերոնշյալ համաթիվը նվազել է ժամանակաշրջանի սկզբի ցուցանիշի համեմատությամբ:

Աղյուսակ 4

ՀՀ դիտարկվող ցուցանիշների համեմատություն (2014 թ.)

Ցուցանիշ/երկիր	Հայաստան	Ադրբեջան	Վրաստան	Թուրքիա	Իրան	Ռուսաստան	Մոլդովա	Ուկրաինա	Բելոռուսիա	Ղազախստան
Կառավարման արդյունավետության համաթիվ	-0.17	-0.92	0.48	0.38	-0.41	-0.08	-0.38	-0.38	-0.50	-0.02
Կոռուպցիայի ընկալման համաթիվ	37	29	52	45	27	27	35	26	31	29
Մարդկային զարգացածության համաթիվ	73	75	75	76	76	79	69	74	79	78
Օրենքի գերակայության համաթիվ	-0.32	-0.61	0.20	0.04	-1.03	-0.71	-0.27	-0.79	-0.81	-0.55
Կառավարման թափանցիկության համաթիվ	4.46	4.27	4.70	4.44	3.24	3.98	3.97	3.64	-	4.46
Կառավարության հաշվետվողականության համաթիվ	4.33	4.39	4.32	4.58	3.50	4.00	4.01	3.61	-	4.58

Աղյուսակ 4-ում ներկայացված է ՀՀ ցուցանիշների (2014 թ.) համեմատությունը հարևան և որոշ հետխորհրդային երկրների հետ: Մուգ գույնով նշված է կոնկրետ ցուցանիշի գծով ամենացածր արդյունք ունեցող երկրին համապատասխանող բջիջը:

Գնահատման արդյունքները: Վերը նկարագրված մոդելի գնահատման արդյունքները ներկայացված են աղյուսակներ 5-ում և 6-ում:

Աղյուսակ 5

Գնահատված մոդելների արդյունքների համեմատություն

Dependent Variable: Government Effectiveness	Model N_1		Model N_2		Model N_3		Model N_4		Model N_5	
	Coef.	Prob. (t-stat.)	Coef.	Prob. (t-stat.)	Coef.	Prob. (t-stat.)	Coef.	Prob. (t-stat.)	Coef.	Prob. (t-stat.)
Constant	-1.60	0.00	-2.62	0.00	-1.39	0.00	-1.73	0.00	-2.03	0.00
Corruption Perceptions Index	0.04	0.00	0.03	0.00	0.01	0.00	0.01	0.00	0.01	0.00
Human Development Index			0.02	0.00	0.01	0.00	0.01	0.00	0.01	0.00
Rule of Law Index					0.47	0.00	0.48	0.00	0.46	0.00
Transparency of Government Policymaking							0.10	0.00	0.07	0.00
Government Accountability Index									0.10	0.00
Prob. (F-statistic)	0.00		0.00		0.00		0.00		0.00	
Adjusted R-Squared	0.88		0.93		0.94		0.94		0.95	
Included Observations (Total Panel /balanced/ observations)	390		390		390		390		390	

Ինչպես պարզ է դառնում աղյուսակ 5-ից, բոլոր 5 մոդելների դեպքում էլ գնահատման արդյունքները վիճակագրորեն նշանակալի են, ստացված գործակիցները անշեղ են և ունակ: Մոդելների համեմատական աղյուսակից երևում է, որ 5-րդ մոդելը լավագույնն է այն իմաստով, որ «Adjusted R-Squared» ցուցանիշը առավելագույնն է և հավասար է 0.95-ի: Սա նշանակում է, որ մոդելում բացատրող փոփոխականները 95 տոկոսով բացատրում են կախյալ փոփոխականը:

Աղյուսակ 6-ում ներկայացված է 5-րդ մոդելի գնահատման արդյունքները:

Ինչպես պարզ է դառնում աղյուսակ 6-ից, կախյալ փոփոխականը ունի դրական կախվածություն բոլոր բացատրող փոփոխականներից: Մասնավորապես՝ կոռուպցիայի ընկալման համաթվի աճը (կոռուպցիայի ավելի ցածր մակարդակ) զուգորդվում է կառավարման արդյունավետության աճի (կառավարման արդյունավետության ավելի բարձր մանարդակ) հետ, ինչը ենթադրում է տրամաբանական կախվածություն: Նույնատիպ են նաև մյուս փոփոխականների ազդեցության ուղղությունները. մարդկային զարգացածության համաթվի աճը (մարդկային զարգացածության ավելի բարձր մակարդակ), օրենքի գերակայության համաթվի աճը (օրենքի գերակայության ավելի բարձր մակարդակ),

կառավարության հաշվետվողականության համաթվի աճը (կառավարման հաշվետվողականության ավելի բարձր մակարդակ) և կառավարման թափանցիկության համաթվի աճը (կառավարման ծրագրերում թափանցիկության ավելի բարձր մակարդակ) զուգորդվում են կառավարման արդյունավետության ավելի բարձր մակարդակի հետ: Այս կախվածությունները նույնպես ունեն առողջ տրամաբանական հիմք:

Աղյուսակ 6

Գնահատված մոդելի արդյունքները

Dependent Variable: GOVERNMENT_EFFECTIVENESS				
Method: Panel Least Squares				
Date: 02/05/17 Time: 13:25				
Sample: 2010 2014				
Periods included: 5				
Cross-sections included: 78				
Total panel (balanced) observations: 390				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
CORRUPTION_PERCEPTIONS_INDEX	0.009411	0.00172	5.48727	0.0
GOVERNMENT_ACCOUNTABILITY_INDEX	0.097982	0.02655	3.69092	0.0
TRANSPARENCY_OF_GOV_INDEX	0.070569	0.02237	3.15406	0.0
RULE_OF_LAW_INDEX	0.458608	0.03871	11.8488	0.0
HUMAN_DEVELOPMENT_INDEX	0.014482	0.00115	12.5576	0.0
C	-2.033243	0.15507	-13.1121	0.0
R-squared	0.955273	Mean dependent var		0.385378
Adjusted R-squared	0.95469	S.D. dependent var		0.911925
S.E. of regression	0.194113	Akaike info criterion		-0.42548
Sum squared residuals	14.46911	Schwarz criterion		-0.36447
Log likelihood	88.96946	Hannan-Quinn criter.		-0.4013
F-statistic	1640.266	Durbin-Watson stat		0.291548
Prob. (F-statistic)	0			

Այսպիսով, հասկանալու համար կոռուպցիայի ընկալման համաթվի փոփոխության ազդեցությունը կառավարման արդյունավետության մակարդակի վրա, կարելի է դիտարկել հետևյալ օրինակը:

Կոռուպցիայի ընկալման համաթվի 1 միավորով փոփոխությունը կհանգեցնի կառավարման արդյունավետության մակարդակի միջինը 0.01 միավոր փոփոխության (վերջինս տատանվում է [-2.5, 2.5] միջակայքում): Եթե դիտարկենք ՀՀ օրինակը 2014 թ. համար, ապա կոռուպցիայի ընկալման համաթվի 1 միավոր աճը՝ 37-ից 38 միավոր, կհանգեցնի կառավարման արդյունավետության մակարդակի միջինում 0.01 միավոր փոփոխության՝ -0.17-ից -0.16 միավորի (5.9 % աճ):

Եզրակացություն: Այսպիսով, երկրում առկա կոռուպցիան բավական մեծ բացասական ազդեցություն ունի կառավարման արդյունավետության վրա: Այս էֆեկտը վիճակագրորեն նշանակալի է և ծավալուն ուսումնասիրության առարկա է: Վերջինս կրճատելու համար անհրաժեշտ է լրամշակել առկա հակակոռուպցիոն քաղաքականությունը և այդ քաղաքականության իրականացմանը հաջորդող համակարգված մշտադիտարկումը: Այս ամենը կնպաստի կառավարման արդյունավետության բարձրացմանը, ինչն էլ իր հերթին կխթանի տնտեսական ցուցանիշների աճը և, ի վերջո, կհանգեցնի հանրային բարեկեցության ավելի բարձր մակարդակի:

Բանալի բառեր – *կոռուպցիա, կոռուպցիայի ընկալման համաթիվ, կառավարման արդյունավետություն, էկոնոմետրիկ գնահատական, պանելային տվյալներ*

ГЕОРГИЙ АВЕТИСЯН – *Влияние коррупции на эффективность управления.* – В статье выведены некоторые оценки уровня коррупции в Армении в динамике, а также дан их сравнительный анализ с соответствующими показателями в ряде стран СНГ и Восточной Европы. Это позволяет выявить влияние индекса восприятия коррупции на эффективность управления. Чтобы преодолеть её негативное воздействие, сформулированы некоторые политические рекомендации.

Ключевые слова: *коррупция, индекс восприятия коррупции, эффективность управления, эконометрическая оценка, панельные данные*

GEORGI AVETISYAN – *The Impact of Corruption on Governance Efficiency.* – In the article, certain corruption level assessments in dynamics in RA, as well as certain comparative analyses between some CIS and Eastern European countries, are illustrated. The analysis enables to reveal the impact of corruption perceptions index on governance efficiency. To overcome the negative effect of the latter, some policy recommendations are stated.

Key words: *corruption, corruption perceptions index, governance efficiency, econometric estimation, panel data*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **Միրա Անտոնյան** – սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ
   Мира Антонян – кандидат социологических наук, доцент кафедры социальной работы и социальных технологий ЕГУ
   Mira Antonyan – PhD, Associate Professor of the Chair of Social Work and Social Technologies, YSU
   Էլ. փոստ՝ antonyan.mira@ysu.am
2. **Արտակ Խաչատրյան** – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ
   Артак Хачатрян – кандидат философских наук, доцент, заведующий кафедрой социальной работы и социальных технологий ЕГУ
   Artak Khachatryan – PhD, Associate Professor, Head of the Chair of Social Work and Social Technologies, YSU
   Էլ. փոստ՝ Khachatryan_artak@ysu.am
3. **Եվգինե Վարդանյան** – ԵՊՀ սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս
   Евгине Варданян – преподаватель кафедры социальной работы и социальных технологий ЕГУ
   Yevgine Vardanyan – Lecturer of the Chair of Social Work and Social Technologies, YSU
   Էլ. փոստ՝ yevginevardanyan@ysu.am
4. **Գագիկ Գալստյան** – տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԵՊՀ տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի պաշտոնակատար
   Гагик Галстян – кандидат экономических наук, доцент, и. о. заведующего кафедрой экономики и международных экономических отношений ЕГУ
   Gagik Galstyan – PhD, Associate Professor of the Chair of Economics and International Economic Relations, YSU
   Էլ. փոստ՝ gagik.galstyan@ysu.am
5. **Դավիթ Աբգարյան** – ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի ասպիրանտ
   Давид Абгарян – аспирант кафедры менеджмента и бизнеса ЕГУ
   Davit Abgaryan – PhD Student of the Chair of Management and Business, YSU
   Էլ. փոստ՝ davit.abgaryan@gmail.com

6. **Տարոն Սիմոնյան** – Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ֆինանսներ և վարկ ամբիոնի ասպիրանտ

Тарон Симонян – аспирант кафедры финансов и кредита Национального аграрного университета Армении

Taron Simonyan – PhD Student of the Chair of Finance and Credit, Armenian National Agrarian University

Էլ. փոստ՝ simonyantaron@inbox.ru

7. **Գեորգի Ավետիսյան** – ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի ասպիրանտ

Георгий Аветисян – аспирант кафедры математического моделирования в экономике ЕГУ

Georgi Avetisyan – PhD Student of the Chair of Mathematical Modeling in Economics, YSU

էլ. հասցե՝ georgiavetisyan13@mail.ru

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ✵ СОДЕРЖАНИЕ ✵ CONTENTS

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ
СОЦИОЛОГИЯ
SOCIOLOGY

Միրա Անտոնյան – Սոցիալական աշխատանքի հայկական դպրոցի կայացման հիմնախնդիրը **3**

Мира Антонян **–** Проблема становления собственной школы социальной работы в Армении

Mira Antonyan **–** The Issue of Establishment of the Armenian School of Social Work

Արտակ Խաչատրյան – Սոցիալական աշխատանքը և հետխորհրդային Հայաստանի բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը..... **15**

Артак Хачатрян **–** Социальная работа и система социальной защиты населения в постсоветской Армении

Artak Khachatryan **–** Social Work and the System of Social Protection of Post-Soviet Armenian Society

Եվգինե Վարդանյան – Մոդելավորման մեթոդի կիրառման հնարավորությունները սոցիոլոգիական ուսումնասիրություններում **24**

Евгине Варданян **–** Возможности применения моделирования в социологических исследованиях

Yevgine Vardanyan **–** The Opportunities of the Implementation of Modeling in the Sociological Researches

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ЭКОНОМИКА
ECONOMICS

Գագիկ Գալստյան – Տնտեսական համակարգերի նույնականացման շուրջ..... **33**

Гагик Галстян – Об идентификации экономических систем

Gagik Galstyan – On Identification of Economic Systems

Դավիթ Աբգարյան – Էլեկտրոնային առևտրի ընդունումը ՀՀ-ում..... **43**
Давид Абгарян – Усвоение электронной коммерции в РА
Davit Abgaryan – E-commerce Acceptance in RA

Տարոն Սիմոնյան **–** ՀՀ առևտրային բանկերում օտարերկրյա ներդրումների արդյունավետության գնահատումը..... **58**
Тарон Симонян – Оценка эффективности иностранных инвестиций в коммерческих банках РА
Taron Simonyan – The Assessment of Efficiency of Foreign Investments in Commercial Banks of RA

Գեորգի Ավետիսյան – Կոռուպցիայի ազդեցությունը կառավարման արդյունավետության վրա..... **68**
Георгий Аветисян – Влияние коррупции на эффективность управления
Georgi Avetisyan **–** The Impact of Corruption on Governance Efficiency

Տեղեկություններ հեղինակների մասին **80**
Сведения об авторах
Information about the Authors

«Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал "Вестник Ереванского университета. Социология, Экономика" выходит три раза в год. Издается с 2010 года. Правонаследник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".

The "Bulletin of Yerevan University. Sociology, Economics" is published thrice a year. It has been published since 2010. It is the successor of "Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107

Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107

Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ **ephbanber@ysu.am**

Կայք՝ **ysu.am**

Վերստուգող սրբագրիչ՝ Գ. Գրիգորյան

Контрольный корректор Г. Григорян

Proofreader G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝ Մ. Աբգարյան

Компьютерная верстка М. Абгарян

Computer designer M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 20. 04. 2017:

Տպաքանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:

Տպագրական 5 մամուլ: